

Մամլեկ Խուդոյան
Գայանե Գրիգորյան

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
(Մեթոդական ձեռնարկ մագիստրոսների, հայցորդների և ասպիրանտների համար)

ԵՐԵՎԱՆ

2014

Երաշխավորված է հրատարակության Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Կրթության
հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի խորհրդի կողմից

Գրախոսներ՝ Ս.Ռ. Գևորգյան, հոգեբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ս. Պ. Մանուկյան, մանկավարժական գիտ. դոկտոր

Ն. Ռ. Հակոբյան, հոգեբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Վ. Վ. Պողոսյան, հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ձեռնարկը նվիրված է մագիստրոսական թեզի և թեկնածուական, մասամբ էլ դոկտորական ատենախոսական հետազոտության իրականացման, ներկայացման, պաշտպանությանը նախապատրաստվելու խնդիրներին: Աշխատության մեջ քննվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ատենախոսության էությունը, կառուցվածքը, ծավալը, մագիստրոսական թեզի և թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների տարբերությունը, ղեկավարի և թեմայի ընտրությունը, հոգեբանության մեջ քանակական և որակական մեթոդների կիրառման առանձնահատկությունները, գրականության վերլուծությունը, գրագողությունը և դրա հետևանքները, վարկածի առաջադրումը, ատենախոսական տեքստի շարադրման հնարները և այլն: Ձեռնարկում քննարկվում են նաև ատենախոսական հետազոտության մեթոդաբանական հարցեր: Կարող է օգտակար լինել ուսանողությանը, հատկապես մագիստրոսներին, ինչպես նաև ասպիրանտներին, հայցորդներին, դոկտորանտներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ _____ 5

ԳԼՈՒԽ 1. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ _____ 6

1.1. Ի՞նչ է ատենախոսությունը _____ 6

1.2. Մագիստրոսական թեզի, թեկնածուական և դոկտորական
ատենախոսությունների տարբերությունը _____ 7

ԳԼՈՒԽ 2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ _____ 13

2.1. Հոգեբանական ատենախոսական հետազոտության փուլերը, ծավալը և
կառուցվածքը _____ 13

2.2. Գիտական ղեկավարի ընտրությունը _____ 16

2.3. Ատենախոսության թեմայի ընտրությունը, վերնագրի ձևակերպումը,
հիմնախնդրի հստակեցումը և հետազոտության ծրագրի մշակումը _____ 18

2.4. Թեմային և հիմնախնդրին առնչվող գրականության վերլուծություն _____ 21

2.5. Վարկածի առաջադրումը _____ 29

2.6. Վարկածի հիմնավորմանն ու ապացուցմանն ուղղված հետազոտությունների
կազմակերպումն ու իրականացումը _____ 38

2.7. Քանակական և որակական մեթոդները հոգեբանության մեջ _____ 40

2.8. Փորձարարական հետազոտությունների օբյեկտիվության և հավաստիության
հիմնախնդիրը _____ 45

2.9. Էմպիրիկ հետազոտությունների ներկայացումը ատենախոսության մեջ և
ատենախոսության եզրակացությունները _____ 48

2.10. Ատենախոսական տեքստի շարադրման մեթոդական հարցեր _____ 58

2.11. Ինչպե՞ս գրել ատենախոսության ներածությունը _____ 63

2.12. Ատենախոսական հետազոտության արդյունքների հրատարակումը _____ 75

ԳԼՈՒԽ 3. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԵՂՄԱԳԻՐԸ ԳՐԵԼՈՒ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ	77
3.1. Ատենախոսության սեղմագիրը	77
3.2. Ինչպե՞ս պատրաստել զեկուցումը	79
3.3. Պաշտպանությանը նախապատրաստվելու հետ կապված խորհուրդներ	81
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	83
ՀԱՎԵԼՎԱԾ	85

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ձեռնարկով նպատակ ենք հետապնդում օգնել մագիստրոսներին և հայցորդներին (ասպիրանտներին) կողմնորոշվելու մագիստրոսական թեզի, թեկնածուական, մասամբ էլ դոկտորական ատենախոսության պատրաստման, այն է ատենախոսական հետազոտություններ իրականացնելու, դրանք ատենախոսության մեջ ներկայացնելու, տեքստի շարադրման, ատենախոսության պաշտպանության և այս խնդրի հետ կապված մի շարք այլ հարցերում: Ձեռնարկում քննվում են նաև ատենախոսական հետազոտության մեթոդաբանական հարցեր:

Քննարկվող հարցերից շատերը միանշանակ պատասխաններ չունեն, և դրանց վերաբերյալ մենք արտահայտել ենք զուտ մեր մոտեցումը, որը կարող է չհամընկնել այլ հեղինակների տեսակետների հետ:

Ձեռնարկը բաղկացած է երեք գլխից՝ առաջին գլխում (բաղկացած է երկու պարագրաֆից. 1.1. պարագրաֆի հեղինակը Գ. Գրիգորյանն է, իսկ 1.2.- ի հեղինակը՝ Ս. Խուդոյանն է) փորձ է արվում բնութագրել ատենախոսական հետազոտությունը և ուրվագծել մագիստրոսական թեզի, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների տարբերությունները: Երկրորդ գլուխը նվիրված է հոգեբանական ատենախոսության առանձնահատկություններին, ատենախոսական հետազոտության իրականացման, ներկայացման և շարադրադրման խնդիրներին, ինչպես նաև մեթոդաբանական որոշ հարցերի: Այս գլուխը բաղկացած է 12 պարագրաֆից, որոնցից Գ. Գրիգորյանը հեղինակել է 2.1., 2.2., 2.3. (Ս. Խուդոյանի հետ համատեղ), 2.5. (Ս. Խուդոյանի հետ համատեղ), 2.12. պարագրաֆները, իսկ մյուսների հեղինակը՝ (2.4., 2.6., 2.7., 2.8., 2.9., 2.10. 2.11. պարագրաֆները) Ս.Խուդոյանն է:

Աշխատության երրորդ գլուխը նվիրված է ատենախոսության սեղմագիրը գրելու և պաշտպանությանը նախապատրաստվելու հարցերին: Այս գլխի առաջին պարագրաֆի հեղինակը Գ. Գրիգորյանն է, իսկ երկրորդ և երրորդ պարագրաֆներին՝ Ս. Խուդոյանը:

ԳԼՈՒԽ 1. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1.1. Ի՞նչ է ատենախոսությունը

Ատենախոսությունը (լատ. Dissertare – հետազոտել, քննարկել, դատողություններ անել) մագիստրոսի, գիտնականի որակավորման նպատակով իրականացվող հետազոտությունն է, որով հեղինակը գիտական նորություն է բացահայտում, ներկայացնում և ապացուցում, հիմնավորում է այն: Այլ կերպ ասած՝ ատենախոսության իմաստը, նպատակը գիտական նորությն է. ատենախոսությունը կարող է լինել տեսական կամ էմպիրիկ, սակայն պարտադիր է, որ այն պարունակի գիտական նորությ (Ս. Խուդոյանի կողմից մշակված ատենախոսության գնահատման չափանիշները տե՛ս հավելված 3-ում): Ատենախոսությունը կարող է նվիրված լինել հոգեբանության պատմությանը, ասենք՝ Հովսեփ Թությունջյանի հոգեբանական հայացքների հետազոտությանը կամ հոգեբանության տեսական, մեթոդաբանական հարցերին, ասենք՝ «Քանակական և որակական մեթոդների հարաբերակցությունը հոգեբանական հետազոտություններում» թեմային, բայց բոլոր դեպքերում այն պետք է նորություն պարունակի: Օրինակ, նշված թեմաներից առաջինը պետք է հայ հոգեբանական մտքի պատմության մեջ հետազոտված չլինի, երկրորդի դեպքում՝ հեղինակը պետք է տվյալ հիմնախնդրի նոր, մինչ այդ չառաջարկված լուծում տա:

Մեզանում հաճախ են հանդիպում հետազոտություններ, որոնք բացարձակ գիտական նորություն չեն պարունակում, սակայն հեղինակները պնդում են, թե այն նորություն պարունակում է, քանի որ մեզանում նման հետազոտություններ չեն կատարվել, այսինքն հայ էթնոսի նյութի վրա չեն կատարվել: Նման փաստարկներն անհիմն են, գիտությունը տեղային չէ և գիտական նորությը պիտի լինի համաշխարհային մասշտաբով, չի կարելի այլ երկրի գիտնականի կողմից ստեղծած գաղափարն ու հետազոտությունները կրկնել և պնդել, թե մեզանում այն չի հետազոտվել կամ հայ ընտրանքի վրա նման հետազոտություններ չեն կատարվել: Իհարկե, վերջին դեպքում գիտական նորությ կարող է լինել, եթե տարբեր ազգերի

համեմատական հետազոտություններ կատարվեն, ցույց տրվեն բացահայտված երևույթի կամ օրինաչափության ընդհանրություններն ու տարբերությունները տարբեր հանրություններում:

Ատենախոսության մյուս առանձնահատկությունն այն է, որ այդ աշխատանքը հրապարակայնորեն պաշտպանվում է՝ հեղինակը հիմնավորում, ապացուցում է առաջադրված վարկածը, պաշտպանում է ատենախոսության հիմնական դրույթները, ցույց է տալիս, որ իր աշխատանքը գիտական նորույթ է պարունակում, ինքնուրույն ու ամողջական է, կատարված է պատշաճ գիտական մակարդակով և այլն:

1.2. Մագիստրոսական թեզի, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների տարբերությունը

Ատենախոսությունների մակարդակը որոշվում է դրանցում բացահայտված գիտական նորույթի աստիճանով. կարելի է հանդիպել մագիստրոսական աշխատանքների, որոնց գիտական նորույթը դոկտորական ատենախոսության գիտական նորույթի մակարդակ ունի և հակառակը՝ քիչ չեն դոկտորական ատենախոսություններ, որոնք մագիստրոսական թեզի մակարդակ անգամ չունեն: Թերևս մագիստրոսական թեզի և թեկնածուական, դոկտորական ատենախոսությունների հիմնական տարբերությունն այն է, որ առաջինի համար հստակ դրված չէ գիտական նորույթ ստեղծելու հարցը: Մագիստրոսական թեզը կարող է գիտական նորույթ չունենալ, սակայն պետք է ասել, որ թեզը գնահատվում է բալերով, հաշվի է առնվում գիտական նորույթի առկայությունը, և անգամ գիտական նորույթ չունեցող թեզը կարող է դրական գնահատվել (անշուշտ՝ ավելի ցածր, քան այն աշխատանքը, որը նորություն է պարունակում): Ավելացնենք նաև, որ մագիստրոսական թեզն իր բնույթով գիտական աշխատանք է, սակայն հետապնդում է նաև ուսուցողական նպատակներ, այն դեպքում, երբ թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները միտված են զուտ գիտական խնդիրներ լուծելու: Մագիստրոսը, իր հետազոտական թեզը պատրաստելիս, սովորում է

գիտական հետազոտության ծրագիր մշակել, ինքնուրույն հետազոտություն կատարել, ստեղծագործել, վարկած առաջադրել, աշխատել գիտական գրականության հետ, կիրառել հետազոտական մեթոդներ, վերլուծել և ներկայացնել էմպիրիկ հետազոտության արդյունքները, եզրակացություններ անել, գրել աշխատանքի ներածությունը, հրապարակային պաշտպանություն իրականացնել:

Մյուս երկու գիտական աստիճաններն ունեն նախկին ԽՍՀՄ երկրների մի մասը, այդ թվում մեր հանրապետությունը (օրինակ, մեր հարևան Վրաստանը հրաժարվել է այդ համակարգից): Արևմուտքում մեկ ատենախոսություն են պաշտպանում, սակայն դրանից հետո կան որակավորման այլ աստիճաններ, որոնք շնորհվում են գիտնականի գիտական գործունեության արդյունքների հիման վրա: Օրինակ՝ Ֆրանսիայում և Գերմանիայում կա այսպես կոչված «որակավորված դոկտորի» պատվավոր գիտական աստիճան (doctor habilitatus), որը տրվում է գիտնականի գիտական աշխատությունների և վաստակի հիման վրա: Ռուսաստանը գերմանական որակավորված դոկտորի աստիճանն ընդունում է որպես գիտությունների դոկտորին հավասարազոր աստիճան, սակայն Ֆրանսիայի նույն աստիճանը չի ընդունում (ֆրանսիական դոկտորի աստիճանը հավասարազոր է համարվում թեկնածուի գիտական աստիճանին):

Երկու գիտական աստիճանների նպատակահարմարության հարցը բավական բարդ է և չունի միանշանակ պատասխան: Մի կողմից երկրորդ՝ ավելի բարձր աստիճանի ատենախոսությունը գիտնականի համար խթան է հանդիսանում աճելու, ֆունդամենտալ հետազոտություն անելու, մյուս կողմից այն շատ լուրջ սթրեսների աղբյուր է: Կյանքը ցույց է տալիս, որ երկրորդ գիտական աստիճանը գիտության զարգացմանն առանձնապես չի նպաստում, խորհրդային գիտությունն ավելի զարգացած չէր, քան ամերիկյանը կամ արևմտաեվրոպականը, մյուս կողմից մեկ գիտական աստիճանի անցած հետխորհրդային հանրապետությունների գիտնականները (օրինակ, Վրաստանի) դժգոհում են, թե ֆունդամենտալ հետազոտություններ չեն կատարվում, գիտության մակարդակն ընկնում է: Մեկ

գիտական աստիճանի անցնելու դեպքում անհրաժեշտ է բարձրացնել այդ աստիճանին ներկայացվող պահանջները, մյուս կողմից՝ մշակել այնպիսի խթանիչներ, որոնք կդրդեն գիտնականին աճել: Երկրորդ գիտական աստիճանը պահպանելու դեպքում անհրաժեշտ է հստակ տարբերակել, թե ինչով պիտի տարբերվեն այդ երկու աստիճանները, այն ընդունել զուտ որպես գիտական աստիճան և ոչ թե պաշտոնների հասնելու միջոց: Անհրաժեշտ է ընդհանրապես հրաժարվել այնպիսի ձևական չափանիշներից, ինչպիսիք են հայցորդի տարիքը, ատենախոսության էջերի քանակը և այլն, և կենտրոնանալ զուտ ատենախոսության մեջ լուծվող հիմնախնդրի մակարդակի վրա, թույլ տալ մասնագետներին որոշել, թե ինչ մակարդակ ունի ատենախոսությունը՝ դոկտորականի, թե՛ թեկնածուականի: Այս տեսանկյունից ամենևին պարտադիր չէ նախ թեկնածուական ատենախոսություն պաշտպանել, ապա դոկտորական, քանի որ գիտնականը գնահատվում է զուտ իր տաղանդի ու կատարած աշխատանքի և ոչ թե ձևական չափանիշների հիման վրա: Ինչևէ, այսօր դեռևս պահպանվում են գիտական երկու աստիճանները: ՀՀ կառավարության կողմից հաստատված գիտական աստիճանաշնորհման կանոնակարգում տրվում է թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների հետևյալ տարբերությունները.

«7. Թեկնածուի գիտական աստիճանի (առաջին գիտական աստիճան) հայցման համար ներկայացված ատենախոսությունն աշխատություն է, որը կարող է գնահատվել իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում և կամ կիրառական կարևոր խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված տեխնիկական, տնտեսական կամ տեխնոլոգիական մշակում:

8. Դոկտորի գիտական աստիճանի (երկրորդ՝ բարձրագույն գիտական աստիճան) հայցման համար ներկայացված ատենախոսությունն աշխատություն է, որը կարող է գնահատվել իբրև էական նվաճում գիտության տվյալ բնագավառում կամ գիտականորեն հիմնավորված տեխնիկական, տնտեսական, տեխնոլոգիական

այնպիսի լուծում, որը հիմնավորապես կնպաստի գիտատեխնիկական առաջընթացին» [24]:

Գրեթե նույն ձևով է ներկայացվում թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների տարբերությունը նաև ատենախոսություններին նվիրված մեթոդաբանական և մեթոդական գրականության մեջ, այսինքն դրանցում էլ չեն ներկայացվում հստակ չափանիշներ, որոնցով հնարավոր լիներ տարբերակել, թե ատենախոսությունը դոկտորականի, թե՞ թեկնածուականի մակարդակ ունի [11]: Օրինակ՝ ի՞նչ են նշանակում «նշանակալի կամ խոշոր ներդրում կամ նվաճում գիտության մեջ», «ֆունամենտալ հետազոտություն», «մեծ գիտական նորույթ» և նման արտահայտությունները, որոնցով բնութագրվում են դոկտորական ատենախոսությունները, ի՞նչ չափանիշներով են չափվում նորության մեծությունը, ներդրման խոշորությունը: Նման վերացականությունը բնականաբար սուբյեկտիվ գնահատականների տեղիք է տալիս, թույլ չի տալիս տաղանդավոր գիտնականի՝ որպես թեկնածուական ներկայացվող, սակայն դոկտորականի մասշտաբ ունեցող ատենախոսությունը գնահատել որպես դոկտորական և հակառակը՝ անտաղանդ գիտնականի՝ որպես դոկտորական ներկայացվող ատենախոսությունը՝ որպես համապատասխան մակարդակը չբավարարող: Արդյունքում խոչընդոտվում է տաղանդավոր գիտնականների առաջընթացը և լայն ճանապարհ բացվում գիտության հետ կապ չունեցող կարիերիստների բազմացման համար: Վերջիններս էլ հենց խոչընդոտում են գիտության տվյալ բնագավառի զարգացումը, խրախուսում իրենցից ավելի ապաշնորհների և արգելակում տաղանդավորների զարգացումը:

Նշված հանգամանքից ելնելով՝ մենք խիստ կարևորում ենք դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների մակարդակների հստակ տարբերակումը, ըստ որում, ելնելով մեզանում գիտնականների իրական հնարավորություններից, օրինակ, միանգամայն անիրական ենք համարում Կ. Կազակի այն պնդումը, թե՝ «Թեկնածուականից դոկտորական ատենախոսության տարբերությունն այն է, որ երկրորդը պետք է ներկայացնի խոշոր գիտական հայտնագործություն կամ ստեղծի

գիտական նոր ուղղություն» [8]: Թերևս հարյուրավոր դոկտորական ատենախոսություններից մեկն է ներկայացնում խոշոր գիտական հայտնագործություն և հազարավոր ատենախոսություններից մեկն է գիտության նոր ուղղություն բացահայտում:

Ստորև մենք կներկայացնենք այս հիմնախնդրի լուծման մեր տեսլականը.

Ըստ մեզ, հոգեբանական թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների մակարդակները որոշվում են հետևյալ առանձնահատկություններով.

1. Դրանք նախ և առաջ պետք է տարբերվեն հետազոտության հիմքում ընկած հիմնախնդրի մակարդակով. թեկնածուական ատենախոսությամբ լուծվում է մասնավոր գիտական հիմնախնդիր, իսկ դոկտորականով՝ ընդհանուր: Ընդհանուր կարելի է համարել այն հիմնախնդիրը, որն ընդհանուր է մի շարք մասնավոր խնդիրների համար, որի լուծման համար անհրաժեշտ է լուծել մի շարք մասնավոր խնդիրներ, որոնց լուծման արդյունքում գտնվում է նաև մասնավոր խնդիրների լուծման բանալին: Օրինակ՝ այնպիսի հիմնախնդրի լուծումը, ինչպիսին գիտելիքների յուրացման հոգեբանական օրինաչափությունների հարցն է, հնարավորություն է տալիս հասկանալ տարբեր տեսակի գիտելիքների յուրացման առանձնահատկությունները, մշակել ուսուցման արդյունավետ միջոցներ և այլն (այդպիսին էր օրինակ՝ Վ.Վ. Դավիդովի դոկտորական ատենախոսությունը, որի մեջ հեղինակը, հիմնվելով գիտելիքների յուրացման օրինաչափությունների հիմնախնդրի լուծման արդյունքների վրա, առաջարկեց ուսուցման նոր համակարգ): Կամ, բացահայտելով զարգացման ճգնաժամերի հիմքում ընկած ընդհանուր օրինաչափությունները, հնարավոր է բացատրել առանձին ճգնաժամերի, ասենք՝ երեք տարեկանի ճգնաժամի պատճառները, մշակել այդ տարիքի երեխաներին հոգեբանական օգնություն ցուցաբերելու սկզբունքները:

2. Դոկտորական ատենախոսությամբ լուծվում են առավելապես տեսական հիմնախնդիրներ, իսկ թեկնածուականով՝ հիմնականում էմպիրիկ: Եթե թեկնածուական ատենախոսությունն ուղղված է պարզելու, թե ինչ կապեր գոյություն ունեն երևույթների միջև, ապա դոկտորական ատենախոսությունը միտված է բացատրելու երևույթների միջև առկա կապերի պատճառները, ձևերը, մեխանիզմները և այլն: Ասենք, եթե թեկնածուական ատենախոսությամբ բացահայտվում է ինքնազնահատականի և ագրեսիվ վարքի միջև կապը, ապա դոկտորական ատենախոսությունը պետք է միտված լինի պարզելու, թե ինչու է առկա նման կապ, ընդհանրապես ինչ դեր է խաղում ինքնազնահատականը մարդու վարքում, միջանձնային հարաբերություններում և այլն:
3. Դոկտորականի մակարդակի կարող են համարվել նաև այն հետազոտությունները, որոնցով բացահայտվում են սկզբունքորեն նոր, մինչ այդ գիտությանն անհայտ երևույթներ և կապեր, ասենք, կոգնիտիվ դիսոնանսի երևույթը, գիտության նոր հետազոտական ոլորտների, ուղղությունների բացահայտումը (օրինակ, հետազոտությունների նոր ուղղություն կարելի է համարել Վ.Վ. Աբրամենկովայի կողմից առաջարկված «Մանկության սոցիալական հոգեբանություն» ոլորտը, որը տարիքային և սոցիալական հոգեբանության սահմանին գտնվող գիտության ենթաճյուղ է):

**ԳԼՈՒԽ 2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

2.1. Հոգեբանական ատենախոսական հետազոտության փուլերը, ծավալը և կառուցվածքը

Ատենախոսական հետազոտության իրականացման ստանդարտ փուլեր դժվար է առանձնացնել, քանի որ տարբեր հետազոտողներ տարբեր մոտեցումներ կարող են ունենալ. Օրինակ, մեկի մոտ հնարավոր է ծնվի գաղափարը, վարկածը, որից հետո նա սկսի այդ հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծությունը կամ նույնիսկ էմպիրիկ հետազոտություններ իրականացնի: Այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել, այսպես ասած, օրինակելի հետազոտական փուլեր, որոնց հետևելով՝ հեղինակն էապես կկրճատի ավելորդ ջանքերի և ժամանակի ծախսը:

Ըստ այդմ՝ առաջին փուլը կլինի թեմայի ընտրությունը և ատենախոսության պլանի մշակումը: Եթե թեման առաջարկել է տվյալ ոլորտի նեղ մասնագետը, ով քաջածանոթ է հիմնախնդրի ժամանակակից վիճակին, ապա սկսնակ հետազոտողը դա կարող է լուրջ հաջողություն համարել իր համար: Այս դեպքում հետազոտության հիմքում ընկած հիմնախնդիրը հստակ ձևակերպված է լինում, հայտնի է, թե տվյալ թեմայի շրջանակներում հատկապես ինչը հետազոտված չէ կամ թույլ է հետազոտված, իսկ ատենախոսը, ղեկավարի ուղղորդմամբ, միանգամից անցնում է բուն հիմնախնդրին առնչվող գրականության վերլուծությանը: Պետք է ասել, իհարկե, որ շատ հաճախ թեման ընտրվում է «հետաքրքիր է», «հրատապ է» սկզբունքով, առանց հստակ պատկերացնելու, թե որքանով է այն հետազոտված կամ հարմար ատենախոսական հետազոտության համար: Հետազոտության հաջորդ փուլը թեմային առնչվող գրականության վերլուծությունն է՝ հստակեցումը, թե հատկապես ինչ հարցեր են թույլ հետազոտված և ատենախոսության հիմքում ընկած հիմնախնդրի ձևակերպումը: Սրան կհաջորդի բուն հիմնախնդրին առնչվող

գրականության վերլուծությունը՝ պարզելու, թե հիմնախնդրի ինչ լուծումներ են առաջարկվել, ինչն է անտեսվել, հաշվի չի առնվել: Այսպիսով, հետազոտության առաջին փուլը կարող է համարվել ատենախոսության թեմայի ընտրությունը և հիմնախնդրի հստակեցումը, իսկ երկրորդը՝ թեմային և բուն հիմնախնդրին առնչվող գրականության վերլուծությունը: Թեմային առնչվող գրականությունն ավելի ընդհանուր է լինում (ասենք, ինչ են հույզերը, հասկացությունների ճշգրտում, հույզերի դասակարգումը, տեսությունները), իսկ բուն հիմնախնդրին առնչվող գրականությունը վերաբերում է ավելի նեղ հարցերի և դրա վերլուծությունը նպատակ ունի ցույց տալ, թե ինչն է հետազոտված, ինչը՝ ոչ, ինչին է նվիրված լինելու ատենախոսությունը (ասենք, կոգնիտիվ գործոնը հույզերի առաջացման գործընթացում):

Երրորդ փուլը վարկածի առաջադրումն է, այսինքն հիմնախնդրին տրվող հեղինակային լուծման տեսլականի ուրվագծումը և ձևակերպումը: Իհարկե, կան ատենախոսություններ, որոնցում վարկածներ չեն առաջադրվում, էմպիրիկ հետազոտություններ չեն կատարվում: Այս դեպքում թեմային, հիմնախնդրին առնչվող գրականության վերլուծությունից հետո հեղինակը միանգամից անցնում է իր տեսակետների ներկայացմանը:

Չորրորդ փուլը վարկածի տեսական և նախնական էմպիրիկ հիմնավորումն է: Այս դեպքում վարկածը հիմնավորվում է տրամաբանորեն, փաստարկներով և նախնական էմպիրիկ հետազոտությունների արդյունքներով կամ այլ հետազոտություններից, այլ ուղրտներից կամ կյանքից վերցված փաստերով:

Հինգերորդ փուլում կատարվում են վարկածի ապացուցմանն ուղղված էմպիրիկ հետազոտությունները (եթե ատենախոսությունը վարկած չունի, ապա 4-րդ և 5-րդ փուլերը նվիրված կլինեն ատենախոսության պաշտպանությանը ներկայացվող դրույթների հիմնավորմանը, առաջադրված խնդիրների լուծմանն ուղղված տեսական և փաստական նյութերի կուտակմանը):

Վեցերորդ փուլում ատենախոսը վերլուծում և ամփոփում է էմպիրիկ հետազոտությունները, տեսական և փաստական նյութը;

Յոթերորդ փուլում գրվում է ատենախոսության ներածությունը (անշուշտ, ներածության որոշ կետեր նախապես կարող են գրվել, սակայն վերջնական տարբերակը հնարավոր է միայն ատենախոսությունն ավարտելուց հետո գրել):

Ատենախոսությունների ծավալի վերաբերյալ հստակ ցուցումներ, սահմանված կարգ չկա, սակայն հոգեբանության ոլորտում առավել տարածված են հետևյալ ծավալները. մագիստրոսական թեզը՝ 50-80 էջ, թեկնածուական ատենախոսության համար՝ 100-180 էջ, դոկտորականի դեպքում՝ 200-350 էջ (հավելվածները ծավալի մեջ չեն հաշվվում): Տեքստը հավաքվում 1,7 ինտերվալով, 12 տառաչափով (տե՛ս հավելված 4-ը):

Ատենախոսության կառուցվածքն ավելի հստակ է՝ այն բաղկացած է տեսական և էմպիրիկ բաժիններից, պետք է ունենա տիտղոսաթերթ, բովանդակություն, ներածություն, 2, 3-ից ոչ պակաս և ցանկալի է 6-ից ոչ ավել գլուխներ (ավելի հաճախ հոգեբանական ատենախոսությունները բաղկացած են լինում 3-4 գլուխներից), գրականության ցանկ և անհրաժեշտության դեպքում հավելվածներ (հավելվածները ներկայացվում են ամենավերջում՝ համարակալված՝ «Հավելված 1, 2, 3...»): Ներածության մեջ անտենախոսության բնութագրերն են ներկայացվում: Հետազոտության առաջին գլխում (խիստ հազվադեպ նաև 2-րդ գլխում) տրվում է գրականության վերլուծությունը (այս գլխի ծավալը սովորաբար 30-60 էջ է լինում), երկրորդ գլխում՝ ատենախոսության տեսական հիմքերը, դրույթները, վարկածը, վարկածի տեսական հիմնավորումը, հետազոտության տրամաբանությունը (այս գլխի ծավալը 30-40 էջ կարող է լինել), երրորդ գլխում ներկայացվում են էմպիրիկ հետազոտությունների տվյալները, ընթացքը, արդյունքները, դրանց վերլուծությունը (այս գլխի ծավալը սովորաբար լինում է 30-50 էջ), չորրորդ գլխում ներկայացվում են ատենախոսության ամփոփումները, հետազոտությունների արդյունքների ներդրումը

կյանքում (անշուշտ, եթե հեղինակը նախընտրում է դրանք առանձին գլխով ներկայացնել):

2.2. Գիտական ղեկավարի ընտրությունը

Գիտական ղեկավարի ընտրությունը չափազանց կարևոր նշանակություն ունի ինչպես ատենախոսական հետազոտությունն իրականացնելու, այնպես էլ պաշտպանելու գործընթացում: Գիտական ղեկավարի ընտրությունը փոխհամաձայնության արդյունք է և տեղի է ունենում երկու ճանապարհով. ղեկավարն իր տաղանդավոր ուսանողներից ընտրում է նրանց, ովքեր կարող են զարգացնել իր գաղափարները կամ ուղղակի նպաստել գիտության զարգացմանը, լավ դասախոս դառնալ, մյուս դեպքում հայցորդն ինքն է ծանոթների միջոցով կամ այլ ուղիներով գտնում ղեկավարին, համոզում է նրան ղեկավարել: Կարելի է տարբերակել մեզանում հանդիպող գիտական ղեկավարների հետևյալ տիպերը. ա/ ղեկավարներ, որոնք ոչնչով չեն կողմնորոշում և օգնում հայցորդին, նույնիսկ ժամանակ չեն գտնում կարդալ ատենախոսությունը, բ/ ղեկավարներ, որոնք չեն օգնում ատենախոսությունը գրելիս (շատերն ուղղակի ի վիճակի չեն դա անել, քանի որ իրենք էլ գիտական հետազոտությունից հեռու են), սակայն աջակցում են պաշտպանության գործընթացում, գ/ ղեկավարներ, ովքեր խորհուրդներով օգնում են թեմա ընտրել, հետազոտությունն իրականացնել, երբեմն խմբագրում են աշխատանքը, օգնում են պաշտպանության ընթացքում, դ/ ղեկավարներ, ովքեր սեփական տեսությունների, գիտական ուղղության, դպրոցի ձևավորման և զարգացման նպատակ են հետապնդում, իրենք են ընտրում թեման, գաղափարներ են տալիս և մանրամասն կողմնորոշում են հայցորդին, վերահսկում են հետազոտության գործընթացը, աջակցում պաշտպանության ընթացքում: Բնականաբար, լավ գիտնական դառնալու համար նախընտրելի է վերջին տիպի ղեկավար ունենալ, քանի որ սեփական տեսություններ ունեցող գիտնականը քաջածանոթ է տվյալ ոլորտում

գիտության վերջին խոսքին (այս դեպքում տասնապատիկ կրճատվում է հայցորդի կողմից գրականության վերլուծության վրա ծախսվող ժամանակը. ղեկավարն ուղղակի հուշում է, թե ինչ գրականությունից օգտվել), առաջարկում է այնպիսի թեմա, որը հետազոտված չէ և նշանակալի գիտական նորույթ կապահովվի: Այդպիսի ղեկավարն ունի բարձր շահագրգռվածություն, ի վիճակի է օգնել ստեղծելու բարձրարժեք աշխատանք: Ըստ էության, հենց այս ճանապարհով են անցել և գիտության մեջ իրենց ճանապարհը բացել այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Կ. Յունգը, Ա. Ֆրոյդը, Է. Էրիքսոնը, Ա.Ն. Լեոնտեր, Ա. Լուրիան և շատ ու շատ ուրիշներ (նկատի ունենք այն, որ այս գիտնականներին ուղղորդել են գիտական դպրոցի հիմնադիր-ուսուցիչները): Իհարկե, նման ղեկավար գտնելը բավական դժվար է, մանավանդ, որ այս տիպի ղեկավարներն իրենք են ընտրում հայցորդներին:

Ամենաանհաջողն, անշուշտ, առաջին տիպի ղեկավարներն են: Այսպիսի ղեկավար կարող է ընտրել միայն խիստ ինքնուրույն, գիտական հետազոտություններ իրականացնելու հմտություններ ունեցող հայցորդը, հակառակ դեպքում ատենախոսության պաշտպանությունը խիստ կձգձգվի կամ ընդհանրապես տեղի չի ունենա:

Երկրորդ տիպի ղեկավարներ սովորաբար ընտրում են գիտության հետ կապ չունեցող, ոչ գիտական կարիերայի ձգտումներ ունեցող հայցորդները:

Հարաբերականորեն լավ են երրորդ տիպի ղեկավարները, նրանք շատ պահանջկոտ չեն հայցորդի գիտական տաղանդի նկատմամբ, սովորաբար լավ մանկավարժներ են լինում (իհարկե, որպես գիտնական սովորաբար այնքան էլ կայացած չեն լինում), սիրում են աշխատել հայցորդների հետ, և եթե հայցորդը բարեխիղճ լինի, կարող է արժեքավոր աշխատանք ստեղծել (իհարկե, այս դեպքում սովորաբար հետազոտությունն ավելի երկարատև է լինում):

2.3. Ատենախոսության թեմայի ընտրությունը, վերնագրի ձևակերպումը, հիմնախնդրի հստակեցումը և հետազոտության ծրագրի մշակումը

Ատենախոսության թեման այն ոլորտն է կամ դաշտը, որտեղ իրականացվում է հետազոտությունը: Թեման կոնկրետանում է, ձևակերպվում ատենախոսության վերնագրի մեջ: Ըստ որում, շատ հաճախ հետազոտության վերջում, երբ արդեն պարզ են արդյունքները, անհրաժեշտություն է առաջանում ատենախոսության վերնագրում մասնակի փոփոխություններ կատարել ու համապատասխանեցնել վերնագիրը ատենախոսության բովանդակությանը: Հաճախ ատենախոսության թեման և վերնագիրը նույնացվում են, դիտվում որպես հոմանիշներ (այս հարցի հիմնավոր քննության մենք չհանդիպեցինք ատենախոսություններին նվիրված մեթոդական և մեթոդաբանական աշխատություններում), սակայն կարծում ենք, որ դրանք պետք է հստակ տարբերակել. միևնույն թեման կարող է տարբեր ձևակերպումներ, հետևաբար՝ տարբեր վերնագրեր ունենալ: Անհրաժեշտ է, որ վերնագիրը հնարավորինս դյուրըմբռնելի ու կարճ լինի, արտացոլի հիմնախնդիրը:

Ատենախոսության համար ընտրված թեման պետք է ունենա մի շարք առանձնահատկություններ. ա/ այն պետք է հարաբերականորեն թույլ հետազոտված կամ պրոբլեմային լինի, արտացոլի կյանքում և գիտության մեջ առկա հիմնախնդիր. անհրաժեշտ է անպայման ուսումնասիրել արդեն պաշտպանված ատենախոսությունները՝ պարզելու, թե արդյոք նույն (կամ շատ մոտ) թեման և հիմնախնդիրն արդեն հետազոտված չեն բ/ պետք է հրատապ լինի, այսինքն՝ ժամանակավրեպ, հնացած կամ արդեն հետազոտված չլինի, գիտության մեջ լուծումներ չունենա, գ/ կիրառական կամ տեսական արժեք ունենա, դ/ էմպիրիկորեն հետազոտելի լինի:

Չափազանց կարևոր է, որ թեման հայցորդին իսկապես հետաքրքրի, ինչ-որ ձևով կապված լինի նրա հիմնախնդիրների հետ (հաճախ են հոգեբանության ոլորտի ատենախոսությունների և ընդհանրապես հետազոտությունների թեմաների

ընտրության դրդապատճառը լինում հետազոտողի սեփական խնդիրները. ըստ որում, դա կարող է գիտակցվել կամ չգիտակցվել): Այդ դեպքում աշխատանքը սիրով և որակով կարվի:

Հիմնախնդրի հստակեցումը ատենախոսության կարևորագույն պահերից է, քանի որ հետազոտողը պարզում է, թե ինչ հարցի պատասխան է լինելու իր ատենախոսությունը, կոնկրետ ինչ է ինքը պարզելու: Շատ հաճախ հիմնախնդիրը սկսում է հստակորեն գիտակցվել, երբ արդեն առաջ է քաշվել վարկածը, այսինքն գտնվել է հարցի ենթադրվող պատասխանը: Բանն այն է, որ հարցը կարող է ձևակերպվել ենթագիտակցության մակարդակում, և անձը դրա պատասխանը կարող է գտնել ինտուիտիվ, ինչից հետո ներհայել և գիտակցել իր մտքի ընթացքը, բացահայտել այն հարցը, որի պատասխանն ինքը գտել է: Թերևս, գոյություն ունեն հիմնախնդրի հստակեցման, գիտակցման, կոնկրետացման մակարդակներ, որոնցով անցնում է հետազոտողը: Սկզբում հիմնախնդիրը գիտակցվում է խիստ ընդհանուր ձևով (ասենք, ի՞նչն է տարիքային ճգնաժամերի պատճառը), ապա ավելի է կոնկրետանում (ասենք, տարիքային n° օրինաչափ գործընթացներն են հարուցում զարգացման ճգնաժամեր), վերջում՝ գիտակցվում է այն հարցը, որի պատասխանն էլ հանդիսանում է հետազոտության վերջնական վարկածը (ասենք, ինչ դեր են խաղում զարգացման ճգնաժամերի առաջացման գործում ինքնագիտակցության օնոտգենետիկ վերակառուցումները): Հիմնախնդրի կոնկրետացմանը մեծապես նպաստում է ճշգրտող հարցերի շղթան. ասենք, որո՞նք են տարիքային ճգնաժամերի պատճառները, ինչու՞ են դրանք կոչվում տարիքային, կապված են արդյոք այդ ճգնաժամերը տարիքային օրինաչափությունների հետ, տարիքային n° օրինաչափությունների հետ են կապված տարիքային ճգնաժամերը, ինչու՞ են տվյալ տարիքային օրինաչափությունները ճգնաժամ հարուցում և այլն, և այլն (հարցերի շղթայի կառուցման ընթացքում անհրաժեշտ է զուգահեռ աշխատել գրականության վերլուծության վրա): Հետազոտության սկզբում հարցերի այս շղթայի կառուցումը ու այդ հարցերի պատասխանների որոնումը կարող է բազմապատիկ անգամ

հեշտացնել հետազոտությունը: Ըստ որում, անհրաժեշտ է յուրաքանչյուր հարցի համար հնարավորինս շատ պատասխաններ գտնել, ենթադրություններ անել, վերլուծել տվյալ ոլորտի հետազոտությունները ըստ այդ հարցերի, իսկ հարցի պատասխանը տևական ժամանակի ընթացքում չգտնելու դեպքում՝ դադարեցնել այդ ուղղությամբ մտորումները և ավելի ուշ վերսկսել:

Պետք է ասել, որ հաճախ հոգեբանական ատենախոսություններում հստակ չի ձևակերպվում այն հիմնախնդիրը, որի լուծմանն է ուղղված տվյալ հետազոտությունը, շատերն այն նույնացնում են «թեմա» հասկացության հետ, ներկայացնում թեմայի հրատապությունը, արդիականությունը, իսկ հիմնախնդրին չեն անդրադառնում: Մինչդեռ հիմնախնդրի ճշգրտումը, հատկապես հետազոտության սկզբում, փարոսի դեր կարող է կատարել և ուղղորդել հետազոտողին իր հետագա քայլերի մեջ: Նշենք նաև, որ հետազոտության թեման և հիմնախնդիրը տարբեր բաներ են՝ թեման հետազոտության ոլորտն է՝ այն դաշտը որտեղ կատարվում է հետազոտությունը. ասենք, «Զարգացման ճգնաժամի ընթացքը» թեման է, իսկ այն, թե «Ի՞նչ դեր է խաղում դաստիարակությունը տարիքային ճգնաժամերի ընթացքի գործում» կարող է հանդես գալ որպես հետազոտության հիմնախնդիր:

Հետազոտության հիմնախնդիրը և հետազոտության խնդիրները նույնպես տարբեր բաներ են. հիմնախնդիրն այն ելակետային հարցն է, որի պատասխանն է տալիս հեղինակի տվյալ հետազոտությունը, իսկ խնդիրներն այն քայլերն են, որոնց միջոցով հեղինակը լուծում է հիմնախնդիրը, հասնում հետազոտության նպատակին: Ըստ որում, վերջինս բխում է հիմնախնդրից, ասենք, վերը ներկայացված հիմնախնդրի հիման վրա կձևակերպվի հետազոտության նպատակը մոտավորապես այսպես. «Պարզել, թե ինչ դեր է խաղում դաստիարակությունը դեռահասության ճգնաժամի ընթացքի գործում»: Հետազոտության վարկածը հիմնախնդրի լուծման՝ հեղինակի կողմից ներկայացվող տարբերակն է. օրինակ, վերը ներկայացված հիմնախնդրի և նպատակի պարագայում կարող է առաջ քաշվել այսպիսի վարկած. «Դաստիարակության ավտորիտար ոճը սրում է դեռահասության ճգնաժամը, իսկ

դեմոկրատական ոճի կիրառման դեպքում ճգնաժամը մեղմ է ընթանում»: Հաճախ բավական դժվար է լինում հետազոտության հենց սկզբից հստակեցնել հիմնախնդիրը, քանի որ հետազոտողին դեռ հայտնի չի, թե տվյալ թեմայի շրջանակներում ինչ հետազոտություններ են կատարվել, և շատ հնարավոր է, որ հիմնախնդիրը, որ առաջադրել է հետազոտողը արդեն հետազոտվել է (նման խնդիր չի ծագում եթե հետազոտողի գիտական ղեկավարը տվյալ նեղ ոլորտի մասնագետ է, քաջածանոթ է գրականությանը և ինքն է առաջարկել թեման, ձևակերպել է հիմնախնդիրը՝ իմանալով, որ այն հետազոտված չի): Այս դեպքում, բնականաբար հետազոտության հիմնախնդիրը կձևակերպվի գրականության վերլուծությունից հետո, երբ պարզ կդառնա, թե ինչն է հետազոտված, իսկ ինչը՝ ոչ (ըստ էության գրականության վերլուծության հիմնական նպատակը հենց այդ հարցի պատասխանը ստանալն է):

Հետազոտության հիմնախնդիրը ձևակերպելուց հետո հնարավոր է դառնում նախնական կամ աշխատանքային վարկածի առաջադրումը:

Հետազոտության ծրագրի մշակումը: Շատ հետազոտողներ հատուկ չեն քննում ու մշակում այն քայլերը, այն խնդիրները (հետազայում այդ քայլերը ատենախոսության ներածության մեջ ներկայացվում են որպես հետազոտության խնդիրներ), որով իրենք պիտի իրականացնեն հետազոտությունը, մինչդեռ ծրագրի մշակումը, խնդիրների լուծման ժամանակացույցի հստակեցումն էապես օգնում են ավելի պարզ պատկերացնել անելիքները, հոգեբանորեն ծրագրավորվել, տրամադրվել կոնկրետ ժամկետներում ավարտել հետազոտությունը և նրա պաշտպանությունը:

2.4. Թեմային և հիմնախնդրին առնչվող գրականության վերլուծություն

Գրականության վերլուծությունը ատենախոսական հետազոտության ամենակարևոր փուլերից է: Հենց գրականության վերլուծության շնորհիվ է հետազոտողը դառնում տվյալ ոլորտի գիտնական-մասնագետ, քանի որ տեղյակ է

դառնում թեմայի հետազոտվածության մակարդակին, հիմնախնդրի հետազոտման մեթոդաբանական և մեթոդական համակարգին, տրամաբանությանը: Գրականության վերլուծության կարևորությունը նաև այն բանում է, որ նոր գաղափարները հենց այդ ընթացքում են ծնվում կամ ճշգրտվում, ձևավորվում են հետազոտության տեսական հիմքերը: Անցնելով գրականության վերլուծությանը՝ հետազոտողը պետք է նախ և առաջ ճշտի, թե թեմայի, հիմնախնդրի որ կողմերին նվիրված գրականությունն է վերլուծելու, նա պետք է կարողանա խուսափել թեմային չառնչվող գրականության ներկայացումից (հաճախ այս ձևով ուղղակի ծավալ է ապահովվում) և կենտրոնանա հենց այն գրականության վրա, որն անմիջականորեն վերաբերում է հիմնախնդրին և վարկածին: Այսպես, «Անձի ինքնագնահատականի բնութագրերը երկլեզվության պայմաններում» թեման շատ ոլորտների հետ կարող է առնչվել՝ անձի, ես-կոնցեպցիայի, ինքնագնահատականի, լեզվի, լեզվի յուրացման, երկլեզվության, բայց որևէ իմաստ չկա այդ բոլոր թեմաները վերլուծել ատենախոսության մեջ: Մյուս կողմից պարտադիր է ինքնագնահատականի ձևավորման գործընթացում լեզվի և երկլեզվության դերին նվիրված հետազոտությունների վերլուծությունը: Անշուշտ, կարելի է նաև թեմային անմիջականորեն չառնչվող, բայց հիմնախնդիրը լավ հասկանալու համար անհրաժեշտ լրացուցիչ թեմաներ էլ վերլուծել. օրինակ, վերոնշյալ թեմայի շրջանակներում, ըստ մեզ, կարելի է անդրադառնալ նաև ինքնագնահատականի ձևավորման, երկլեզվության հոգեբանական ազդեցությունների հիմնախնդիրներին: Գրականության վերլուծության սխալ տարբերակներ են, երբ ներկայացվում են դասագրքային նյութեր, ասենք «ի՞նչ է սթրեսը», «մտածողության տեսակները», և ոչ թե հեղինակների տեսակետներ ու դրանց վերլուծություն: Հիմնախնդրի հետ կապված գրականությունը փնտրելու այսօրվա լավագույն ուղին համացանցն է. փնտրող համակարգերում գրելով հիմնախնդիրն արտացոլող արտահայտությունները՝ շատ արագ կարելի է պատկերացում կազմել, թե ինչ ինֆորմացիա կա այդ ոլորտում: Այսօր էլ անշուշտ անփոխարինելի են գրադարանները, հատկապես ատենախոսական

ֆոնդերը, այլ հեղինակների աշխատությունների գրականության ցանկերը, բիրլիոգրաֆիական, ռեֆերատիվ և ինֆորմացիոն հրատարակությունները և այլն: Ահռելի ինֆորմացիա կարելի է գտնել գիտական հանդեսներում (սովորաբար, հանդեսի վերջին համարում ներկայացվում են տարվա ընթացքում հրատարակված հոդվածները): Գրականության վերլուծության մի շարք կարևոր պահեր կարելի է նշել: Նախ, շատ կարևոր է հասկացությունների ճշգրտումը: Հոգեբանության մեջ բազմաթիվ հասկացություններ տարբեր մեկնաբանություններ, սահմանումներ ունեն: Հաճախ միևնույն հասկացության տակ տարբեր հեղինակներ տարբեր երևույթներ են հասկանում: Հետազոտողը պետք է վերլուծի հասկացության սահմանումները, երևույթի վերաբերյալ տարբեր տեսակետները և ներկայացնի իր ըմբռնումը: Եթե հիմնախնդիրը հետազոտության ավանդույթներ ունի, ապա կարևոր է, որ ներկայացվի հիմնախնդրի ոչ միայն ժամանակակից վիճակը, այլև պատմությունը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս հասկանալ հիմնախնդրի հետազոտության տրամաբանությունը, այն մակարդակը, որին կարողացել է հասնել գիտությունը և այն ուղղությունները, որոնցով հնարավոր է ընթանան հետագա հետազոտությունները: Շատ հեղինակներ նախընտրում են գրականության վերլուծության մեջ ներկայացնել ոչ միայն հիմնախնդրի պատմությունը և ժամանակակից վիճակը, այլև տարբերակել հայրենական և արտասահմանյան հեղինակների տեսակետերը, հիմնախնդրի հետ կապված հոգեբանական և հարակից գիտություններում կատարված հետազոտությունները և այլն: Նման մոտեցումներն անշուշտ հարստացնում են ատենախոսությունը, սակայն պետք է բխեն թեմայի առանձնահատկություններից և ոչ թե դառնան էջեր լցնելու միջոց: Շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ գրականությունը լինի նոր, արտացոլի գիտության վերջին խոսքը: Մեկ այլ կարևոր հանգամանք է օտարալեզու, հատկապես անգլերեն գրականության վերլուծությունը: Հաճախ հետազոտողներն արհամարհում են հայ հեղինակների հետազոտությունները, ինչը նույնպես անթույլատրելի է: Գրականության ուսումնասիրության ընթացքում անպայման անհրաժեշտ է

ծանոթանալ հիմնախնդրի հետ կապված արդեն պաշտպանված ստենախոսություններին (օրինակ՝ փնտրել ՀՀ ազգային և ԳԱԱ գրադարանների, Ռուսաստանի պետական գրադարանի ստենախոսությունների և սեղմագրերի բաժնում՝ պարզելու, թե ինչ ստենախոսություններ են պաշտպանվել, համացանցում քիչ չեն նաև արևմուտքում պաշտպանված ստենախոսություններ): Գրականության վերլուծության կարևորագույն պահերից է ինֆորմացիայի համակարգված ներկայացումը: Համակարգման դեպքում, օրինակ, տեսությունները կարող են դասակարգվել ըստ ուղղությունների (ասենք՝ ներոգների հոգեվերլուծական, բիհևիորալ կամ կոգնիտիվ տեսությունները) կամ հիմք կարող է ընդունվել հիմնախնդրի հետազոտման պատմական զարգացումը: Սովորաբար հետազոտվող երևույթներն ունեն պատճառներ, պայմաններ, հետևանքներ, գործառման մեխանիզմներ, և կարելի է նյութը նաև այդ ձևով խմբավորել (օրինակ՝ զարգացման ճգնաժամերի առաջացման պատճառները, մեխանիզմները, ընթացքի առանձնահատկությունները բացատրող հետազոտություններ):

Գրականության վերլուծության գլխում հաճախ ներկայացվում են միայն տեսական հետազոտությունները, իսկ էմպիրիկ հետազոտություններին անդրադարձ չի լինում: Ատենախոսության ամբողջականության համար շատ կարևոր է, որ ներկայացվեն նաև էմպիրիկ հետազոտությունները, ցույց տրվի, թե ինչ մեթոդներով և մեթոդիկաներով են իրականացվել հետազոտությունները, ինչ արդյունքներ են ստացվել և այլն: Կան հեղինակներ, որոնք առանձնացնում են տեսական և էմպիրիկ հետազոտությունները, ընդ որում, այդ երկուսի համար առանձին վերլուծություն է ներկայացվում: Գրականության վերլուծության ընթացքում չափազանց կարևոր է հետազոտությունների օբյեկտիվ գնահատկանքը (հաճախ հետազոտողներն ունենում են կանխակալ վերաբերմունք, ասենք այս կամ այն ուղղության ներկայացուցիչների նկատմամբ, ինչը բնականաբար բացասական ազդեցություն կարող է ունենալ հետազոտության օբյեկտիվ գնահատման հարցում): Դա հնարավորություն է տալիս պարզել, թե որ հետազոտություններն են հեղինակի համար ավելի ընդունելի,

տրամաբանորեն հիմնավորված, որոնք են հանդես գալու որպես հետազոտության տեսական հիմքեր: Քննադատելիս կարևոր է ներկայացնել ոչ միայն փաստարկներ, այլև փաստական նյութ, հետազոտություններ, որոնք հակասում են քննադատվող տեսակետներին: Քննադատության ժամանակ պետք է խուսափել հուզական գնահատումներից, պահպանել գիտական էթիկան: Օրինակ, խորհրդային շրջանում ընդունված էր արևմտյան գրականության քննադատական, իսկ խորհրդային հեղինակների՝ գովերգող վերլուծությունը: Ըստ որում, արևմտյան հեղինակը հաճախ սուր, երբեմն էլ հուզական քննադատության էր ենթարկվում, հաճախ առանց ներկայացնելու նրա գաղափարները, ամբողջական տեսությունը: Այս երևույթն այսօր էլ երբեմն հանդիպում է: Ատենախոսական հետազոտություններում երբեմն կարելի է հանդիպել զուտ գովերգող մոտեցման, որի դեպքում ուղղակի ներկայացվում են տարբեր հեղինակների տեսակետները՝ թվարկելու ձևով, առանց քննադատական վերլուծության, անվերապահ բարձր գնահատականով: Մա էլ, ըստ մեզ, բացասական երևույթ է և վկայում է հեղինակի քննադատական մտածողության թույլ լինելու մասին: Ըստ մեզ, ավելի ճիշտ է հստակ ներկայացնել տարբեր հեղինակների տեսակետները, դրանց քննադատությունը հետազոտողի և այլ հեղինակների կողմից, այն պահերը, որ հեղինակը հաշվի չի առել, տեսության հակասությունները, ուժեղ և թույլ կողմերը, գաղափարների փաստական և տրամաբանական հիմնավորվածությունը: Գրականության վերլուծության մեջ անհրաժեշտ է տարբեր տեսությունների, էմպիրիկ հետազոտությունների համեմատական վերլուծություն իրականացնել: Շատ հետազոտողներ գրականության վերլուծության բաժնում առանձին պարագրաֆ են նվիրում ներկայացված հետազոտությունների համակարգմանը և քննադատական վերլուծությանը, իսկ նախորդ պարագրաֆներում ուղղակի ներկայացնում են, թե հիմնախնդրի առնչությամբ ինչ հետազոտություններ են կատարվել:

Գրականության վերլուծության ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել և նշել, թե ինչի վրա է տվյալ ոլորտում քիչ ուշադրություն դարձվել, որ

պահերն են, որ հետազոտված չեն, առկա են հակասական տվյալներ. հենց այս հարցերին պատասխան տալով է հեղինակը հնարավորություն ստանում գիտական նորույթ պարունակող հետազոտություն իրականացնել: Գրականության վերլուծության գլուխն անպայման պետք է ավարտվի եզրակացություններով, որտեղ ներկայացվեն, ամփոփվեն հետազոտության այս փուլի արդյունքները, այն է՝ ինչ մակարդակով է հետազոտված հիմնախնդիրը, որքանով է էմպիրիկ նյութը հաստատում տեսականը, որ հարցերը չեն հետազոտվել կամ բավարար լուծումներ չեն ստացվել և այլն:

Գիտական գրականության հետ աշխատանքի տարբեր մոտեցումներ կան, ասենք՝ մշակելով, ընթերցելով և միանգամից համապատասխան պարագրաֆում շարադրելով (այս դեպքում լավ կլինի, եթե հետազոտողը պայմանական բաժիններ առանձնացնի առաջին գլխում ներկայացվելիք նյութի համար, ասենք՝ «պատմական ակնարկ», «արևմտյան հեղինակներ», «էմպիրիկ հետազոտություններ», «հոգեվերլուծական մոտեցում» և այլն): Ըստ մեզ, գրականության վերլուծությունն անմիջապես շարադրելով պետք է լինի, այսինքն հեղինակի աշխատանքը կարդալուց հետո, միանգամից այն վերլուծվում է, գնահատվում: Իհարկե, այս դեպքում սկզբում մի տեսակ քառու է ստացվում, սակայն պետք չէ վախենալ այդ քառուից: Երբ արդեն տարբեր հեղինակների կարծիքները, մոտեցումները ներկայացված են, կարելի է անցնել դրանց համակարգմանը: Միայն ճանապարհ ենք համարում, երբ թեմային նվիրված գրականությունն ընթերցվում է առանց նշումներ անելու և որոշ ժամանակ անց, զուտ հիշողությամբ շարադրվում է: Շատ տարածված է գրքերը, հոդվածները մշակելու ճանապարհով գրականության հետ աշխատանքը, որը մեր կարծիքով նույնպես արդյունավետ չէ: Նախ, պետք է ընթերցել ոչ թե հեղինակի ամբողջ գիրքը, այլ միայն հիմնախնդրին առնչվող բաժինները, իսկ այս դեպքում ավելի ճիշտ է ոչ թե մշակումներ, այլ նշումներ անելը, ինչը շատ ավելի քիչ ժամանակ է խլում: Ի դեպ, նշումներ ասելով, նկատի ունենք մեջբերումներ առանձնացնելը՝ հետագայում աշխատանքում օգտագործելու համար, հետազոտությունների համառոտ

ներկայացումը, հետազոտությանը տրվող գնահատականները, հաստատող ու ժխտող փաստերը, մտքերը, որ ծագում են տվյալ հեղինակին ուսումնասիրելիս և այլն: Գրականության վերլուծության ժամանակ այլ հեղինակների տեսակետները ներկայացնելու մի քանի տարբերակներ կան: Օրինակ՝ ուղղակի մեջբերումներ են կատարվում (դրանք ներկայացվում են չակերտներով, չակերտներից հետո քառակուսի փակագծերի մեջ աղբյուրը և էջը նշելով: Եթե ուղղակի մեջբերման մեջ մեջբերողն ընդգծում է ինչ-որ հատված կամ փակագծերի մեջ ինչ-որ մեկնաբանություն է տալիս, անպայման պետք է ասվի, որ դրանք մեջբերողին են պատկանում. առաջին դեպքում փակագծերում նշվում է. «ընդգծումը մերն է», շեշտ է դրվում և գրվում են անուն ազգանվան առաջին տառերը, նույն ձևով՝ մեկնաբանության դեպքում): Մեծ ծավալով ցիտումները չեն խրախուսվում: Օրինակ, Վ. Յարսկայան գտնում է, որ ցիտման առավելագույն ծավալը 300 նշանից չպիտի անցնի [19]: Եթե ցիտվող նյութը (կամ ուղղակի հետազոտության մասին ինֆորմացիան) վերցվել է այլ հեղինակի գրքից, ապա այս դեպքում նշվում է ոչ թե բնագրի, այլ այն հեղինակի գիրքը, ումից վերցվել է, ավելացնելով «ըստ» բառը (ցիտ. ըստ՝ աղբյուրը): Ավելի տարածված է ուրիշի տեսակետները սեփական բառերով ներկայացնելը (այս դեպքում կարող է նշվել միայն աղբյուրը, սակայն ավելի ճիշտ կլինի նաև էջերը նշել), վերլուծելը, գնահատելը: Պետք է ասել, որ գրականության վերլուծության նկատմամբ շատ հետազոտողներ անփույթ վերաբերմունք են դրսևորում, այսպես ասած, ժամանակ չեն ծախսում գրականությանը ծանոթանալու վրա, և աստենախոսության այս բաժինն ուղղակի արտագրում են ուրիշներից (աստենախոսական գրագողությունների մեծ մասը հենց այս բաժինն է վերաբերում): Այժմ աշխարհում գրագողության խնդիրը շատ հրատապ է. ստեղծվում են գրագողությունը բացահայտելու տարբեր ծրագրեր, մտավոր սեփականության գողությունը պատժվում է օրենքով (տե՛ս հավելված 2-ը), շատ դեպքերում անձին հեռացնում են զբաղեցրած պաշտոններից, էլ չենք խոսում այն խայտառակության մասին, որին մարդը կարող է արժանանալ մի քանի նախադասություն արտագրելու

դեպքում: Գրագողությունը կարելի է սահմանել հետևյալ կերպ. *Ուրիշի գաղափարները և գրած նախադասություններն առանց չակերտի, հղումի, այսինքն աղբյուրը, էջերը նշելու սեփական անվան տակ ներկայացնելը կոչվում է գրագողություն* (տե՛ս հավելված 2-ը): Անշուշտ, եթե գաղափարները խիստ կոնկրետ չեն, շատ դժվար է ապացուցել, որ դա ուրիշի միտքն է: Գրագողության մեկ այլ տարբերակ կարելի է համարել ուրիշի վերլուծած գրականության վերաշարադրումը: Այս դեպքում հեղինակն ուղղակի փոխադրություն է կատարում ուրիշի վերլուծած գրականությունից, սակայն վերլուծված նյութի հաջորդականությունը, հեղինակային վերլուծություններն ու գնահատականները ուրիշինն են, հետևաբար նույնպես գրագողություն են:

Գրագողություն չի համարվում միայն սեփական աշխատանքներից բառացի մեջբերումները, սակայն այս դեպքում էլ հոդվածի, գրքի գոնե մի մասը պետք է տարբեր լինի (խոսքը չի վերաբերում, իհարկե, կոնֆերանսներում ներկայացվող կամ տարբեր երկրներում, տարբեր լեզուներով հրատարակվող նյութերին): Որոշ հեղինակներ, ուղղակի իրենց հոդվածների միայն վերնագրերը փոփոխելով տպագրում են տարբեր հանդեսներում և ներկայացնում որպես տարբեր աշխատանքներ, ինչը խիստ բացասական երևույթ է: Իհարկե, որոշ դեպքերում հեղինակն այս քայլին դիմում է սեփական տեսակետների պրոպագանդման նպատակով, սակայն ավելի հաճախ դա արվում է ուղղակի սեփական աշխատությունների քանակն ավելացնելու համար:

Մեզանում կան ցիտման վերաբերյալ մի շարք թյուր պատկերացումներ, որոնք հանգեցնում են գրագողությունների: Դրանցից են. հեղինակը նշել է աղբյուրը գրականության ցանկում, ուրեմն կարելի է տեքստում՝ ուրիշի գրած նախադասությունների մոտ, հղում չանել, եթե հեղինակի անունը գրվում է, ուրեմն այդ հեղինակի նախադասություններով շարադրված տեքստը գրագողություն չի, աղբյուրը պետք է նշել հեղինակի անվան հիշատակումից հետո, իսկ դրան հաջորդող այդ հեղինակի նախադասությունների մոտ կարելի է աղբյուր չնշել, ուրիշից վերցված

տեքստը կարելի է չակերտների մեջ չառնել, ուղղակի այդ տեքստի վերջին նախադասության մոտ նշել աղբյուրը և այլն:

Վերջում անդրադառնանք նաև աղբյուրների հետ աշխատանքի տեխնիկական որոշ հարցերի: Նախ, սկզբում աղբյուրները ներկայացվում են տեքստում, քանի որ գրականության ցանկ դեռևս հնարավոր չի կազմել: Ատենախոսության շարադրանքը լրիվ վերջացնելուց հետո միայն պետք է անցնել գրականության ցանկը կազմելուն: Դրա համար անհրաժեշտ է բացել նոր WORD փաստաթուղթ և, առանց տեքստից ջնջելու, դուրս բերել հղումները՝ աշխատելով պահել այբենական կարգը (սկզբում ներկայացվում են հայերեն, ապա՝ ռուսերեն և վերջում՝ այլ լեզուներով գրականությունը): Աղբյուրը գրականության ցանկում ներկայացվում է հետևյալ կերպ. ազգանուն, անվան և հայրանվան առաջին տառերը, վերնագիրը, հրատարակության քաղաքը, հրատարակչությունը, հրատարակության թիվը, էջերի քանակը (եթե հոդված է, նշվում են էջերը): Այնուհետև, երբ արդեն այբենական կարգով դասավորված է գրականության ցանկը, ատենախոսության մեջ աշխատությունների անունները փոխարինվում են տվյալ աշխատության՝ գրականության ցանկի համարով: Հղումները ներկայացվում են քառակուսի փակագծերում, սկզբում գրվում է աղբյուրի համարը, ապա «էջ» բառը և նշվում է էջը: Կարելի է նաև հղումներն անել տողատակում, դա նույնպես սխալ չէ, սակայն այս դեպքում աշխատանքի ծավալը մեծանում է:

2.5. Վարկածի առաջադրումը

Հետազոտության հիմնախնդիրը ձևակերպելուց հետո հնարավոր է դառնում նախնական կամ աշխատանքային վարկածի առաջադրումը: Իհարկե, այն դեպքերում, երբ ատենախոսությունը փորձարարական հետազոտությունների վրա չի հիմնվում (ասենք, հոգեբանության պատմությանը, մեթոդաբանական, տեսական հարցերին նվիրված հետազոտությունները և այլն) վարկած չի առաջադրվում,

սակայն հոգեբանական ատենախոսությունների գերակշիռ մասն առավելապես էմպիրիկ ուղղվածություն է ունենում և հիմնականում վարկածների հիման վրա է կառուցվում: Հենց այդ պատճառով էլ «լավ» վարկածի առաջ քաշումը հետազոտության արժեքը որոշող կարևորագույն գործոններից մեկն է դառնում: Ցավոք, մեզանում վարկածի առաջադրման մեթոդական հարցերին գրեթե ուշադրություն չի դարձվում, ավելին, հաճախ վարկածին նույնիսկ կարևորություն չի տրվում, ինչի արդյունքում ատենախոսական հետազոտությունների մեծ մասում առաջ են քաշվում բացարձակ անիմաստ, անհիմն, ապացուցման կարիք չունեցող «վարկածներ», ինչի հետևանքով ամբողջ ատենախոսությունը դառնում է ձևական, էմպիրիկ հետազոտությունները՝ ինքնանպատակ, հետազոտության հիմնախնդիր-նպատակ-վարկած-վերլուծված գրականություն-էմպիրիկ հետազոտություններ տրամաբանական շղթան խախտվում է:

Ինչպես նշեցինք, վարկածը հետազոտության հիմքում ընկած հիմնախնդրի լուծման՝ հեղինակի կողմից առաջարկվող տարբերակն է, հետազոտության նպատակին հասնելու հեղինակի տեսլականը: Վարկածը էմպիրիկ հետազոտություններ պարունակող ատենախոսության հիմնական միտքն է, նոր գաղափարը, որը ծնվել է հետազոտության ընթացքում և պետք է ապացուցվի: Սովորաբար գիտական հետազոտության վարկածը սահմանվում է որպես «...Գիտական մտքի զարգացման հիմնական մեթոդ, որի էությունն է, վարկածի առաջադրումը և հետագա փորձարարական և նույնիսկ տեսական ստուգումը, ինչը կամ հաստատում է վարկածը և այն դառնում է փաստ, կոնցեպցիա, տեսություն կամ ժխտում է, և հետազոտողը նոր վարկած է առաջադրում» [12, էջ 48]: Այս սահմանման մեջ կարևոր մի պահ է ընդգծվում, այն, որ վարկածի չհաստատվելու դեպքում նոր վարկած է առաջադրվում: Մեզանում հաճախ ենք հանդիպում այն տեսակետին, թե ժխտված վարկածով կարելի է ատենախոսություն կամ ավարտական թեզ պաշտպանել: Նշենք, որ այս տեսակետը մեթոդաբանական սխալ է պարունակում. ժխտված վարկածն այլևս վարկած չէ, այն կեղծ վարկած է, այն այլևս ապացուցման և

պաշտպանության կարիք չունի և ուղղակի մի կողմ է շարժվում: Իհարկե, հեղինակը կարող է նշել, որ իր սկզբնական ենթադրությունն այսպիսին էր, ինչը ժխտվեց, սակայն այդ վարկածն այլևս չի ներկայացվում ատենախոսության ներածության մեջ: Թյուրիմացությունը, թերևս, գալիս է այն բանից, որ շփոթում են նախնական, աշխատանքային վարկածը վերջնականի հետ: «Ձևակերպելով վարկածը,- գրում է Ա.Մ. Նովիկովը,- դուք ենթադրություն եք անում այն մասին, թե ինչպես էք պատրաստվում հասնել հետազոտության առաջադրված նպատակին: Բնականաբար, վարկածը հետազոտության պլան-պրոսպեկտից մինչև պատրաստի ատենախոսությունը բազմիցս լրացվելու կամ փոխվելու է» [13, էջ 36]: Գիտական հետազոտության ընթացքում, սովորաբար հենց այդպես էլ լինում է՝ առաջ քաշված նախնական կամ աշխատանքային վարկածը նոր փաստերի, էմպիրիկ հետազոտությունների արդյունքում ճշգրտվում է, որոշ դեպքերում՝ ժխտվում (պետք է ասել, իհարկե, որ եթե վարկածը ոչ թե արհեստականորեն է ստեղծվել, այլ իսկապես ծնվել է կոնկրետ փաստերից, ապա դրա կեղծ լինելու, լիովին ժխտվելու հավանականությունը քիչ է), իսկ որոշ դեպքերում էլ վարկածի հետ առնչվող գրականության վերլուծության ընթացքում պարզվում է, որ վարկածն արդեն առաջ է քաշվել, հետազոտվել է այլ հեղինակի կողմից: Այս տեսանկյունից չափազանց կարևոր է ադեկվատ, վարկածի հետ առնչվող գրականության վերլուծությունը, որով պարզվում և հիմնավորվում է, որ առաջ քաշված վարկածը նոր է, հետևաբար, կատարված հետազոտությունն էլ օրիգինալ և արդիական է: Այսպիսով, պետք է հիշել, որ ատենախոսության և սեղմագրի մեջ ներկայացվում է վարկածի վերջնական՝ էմպիրիկ նյութով ապացուցված ու հաստատված տարբերակը: Ատենախոսությունը պաշտպանելիս հայցորդն ուղղակի պետք է հիմնավորի, ապացուցի որ իր էմպիրիկ նյութն իսկապես հաստատում է իր ենթադրությունը՝ վարկածը, իսկ չհաստատված վարկածը հիմնավորման կարիք չունի, որպեսզի ներկայացվի պաշտպանության:

Այժմ անդրադառնանք վարկածի՝ որպես նոր գաղափարի, ծննդյան հարցին: Այս կապակցությամբ մենք հանդիպեցինք մի հետաքրքիր սահմանման, որի մեջ

վարկածը բնութագրվում է որպես «...ցանկացած ենթադրություն... կամ կանխատեսում, որը հիմնվում է կա՛մ նախկին գիտելիքների, կա՛մ՝ նոր փաստերի, կա՛մ, ավելի հաճախ՝ այդ երկուսի վրա միաժամանակ» [16, էջ 99-100]: Վարկածի ծննդյան գործում, իսկապես, նախկին գիտելիքները շատ կարևոր դեր են խաղում (եթե հետազոտողը սվյալ ոլորտում գոյություն ունեցող գիտելիքներին հիմնավորապես չի տիրապետում, նա չի կարող գիտական նորություն պարունակող վարկած առաջադրել), սակայն նոր գաղափարի ծնունդը ենթադրում է երևույթի ընկալումը նախկինից միանգամայն տարբերվող տեսանկյունից, և քաջ տիրապետելով սվյալ ոլորտի հետազոտություններին՝ անձը դրանց նկատմամբ սկեպտիկ, քննադատական դիրքորոշում պիտի ունենա՝ անտեսելով ցանկացած հեղինակություն: Եթե գիտնականն անվերապահ ընդունում է գոյություն ունեցող տեսությունները և տեսակետները, դրանց ստեղծողները նրա համար անհերքելի հեղինակություններ են, ում չի կարելի հակադրվել, ապա այս դիրքորոշմամբ չափազանց դժվար է նոր գաղափար ստեղծել:

Վարկածը կարող է ծնվել փաստական նյութի կամ տարբեր տեսակետների տրամաբանական վերլուծությունների արդյունքում (ասենք, հետհիպոտոիկ ներշնչանքների փաստերի վերլուծությունը նպաստեց, որպեսզի Ջ. Ֆրոյդը բացահայտի ենթագիտակցությունը կամ Ռ. Ասաջիլիի հոգեսինթեզի գաղափարը թերևս ծնվել է Ֆրոյդի հոգեվերլուծության գաղափարից), բայց շատ հաճախ վարկածը ծնվում է հանկարծակի, որպես մտքի պայծառացում, իսկական ծնունդ, որին, իհարկե, նախորդում են հիմնախնդրին նվիրված գրականությանը ծանոթանալը, հիմնախնդրի շուրջ անընդհատ մտորումները: Պետք է ասել, իհարկե, որ զուտ տրամաբանական վերլուծությունների ճանապարհով վարկածի ստեղծումը կարող է բավական տառապալից ընթացք ունենալ (կան բազմաթիվ փաստեր, երբ որևէ հիմնախնդրի վրա երկար ժամանակ աշխատող գիտնականները լուրջ հոգեկան խանգարումներ են ունեցել), քանի որ առկա տրամաբանությունը հիմնվում է գոյություն ունեցող գիտելիքների վրա, իսկ նորի բացահայտումը պահանջում է նոր տրամաբանություն,

ինչը ստեղծվում է հենց նոր գաղափարի հիմքի վրա: Այս տեսանկյունից բավական գործուն է այն մոտեցումը, երբ հիմնախնդիրը չլուծվելու դեպքում մարդը մի որոշ ժամանակ մոռանում է դրա մասին, ապա նորից վերադառնում դրան, հաճախ էլ ուղղակի հանկարծակի փայլատակում է տեղի ունենում:

Գիտական վարկածը կարող է ծնվել ինդուկտիվ և դեդուկտիվ (այս հասկացությունները պայմանականորեն ենք օգտագործում) ճանապարհներով: Ինդուկտիվ ուղու դեպքում հետազոտողը հիմնախնդրի լուծման կապակցությամբ որևէ ենթադրություն չունի, նա ուղղակի էմպիրիկ ճանապարհով բացահայտում է փաստեր, որոնք դառնում են հետազոտության վարկած: Օրինակ, փսիխոֆիզիկայի կամ հիշողության ոլորտի բազմաթիվ գիտելիքներ հենց այս ճանապարհով են բացահայտվել. այստեղ սկզբնական ենթադրություններ չեն եղել, ասենք, ուղղակի չափելով հակազդման ժամանակը բացահայտվել են օրինաչափություններ:

Դեդուկտիվ ուղու դեպքում սկզբում գաղափարն է ծնվում, հաճախ զուտ ինտուիտիվ, մտքի փայլատակմամբ, մի ինչ-որ զուգորդության արդյունքում, ապա ստուգվում է գաղափարի նոր լինելը, ինչից հետո էմպիրիկ նյութ է հավաքվում վարկածն ապացուցելու, հաստատելու համար: Շատ գիտնականների կենսագրություններում կարելի է հանդիպել այս ճանապարհով ծնված գաղափարների. օրինակ, Ջ. Ֆրոյդը նկարագրում է երազների վերլուծության հետ կապված, «փայլատակման» ճանապարհով կատարված իր հայտնագործությունը սրճարանում կամ, ասենք, Նյուտոնի՝ խնձորի ընկնելու հետ զուգորդության հիմքի վրա կատարած հայտնագործությունը:

Ստորև ներկայացնում ենք մի քանի խորհուրդ, որոնք կօգնեն վարկածի, նոր գաղափարի ստեղծմանը.

1. Գիտական ստեղծագործության համար աշխատեք ընտրել այնպիսի հիմնախնդիր, ինչի հետ անմիջականորեն բախվել եք, ինչը Ձեզ խիստ հոգեհարազատ է, միշտ հետաքրքրել է Ձեզ, հարցն ինքնաբուխ ձևով է

հայտնվել Ձեր մեջ, կամ տվյալ երևույթի հետ կապված ինչ-որ օրիգինալ միտք է ծագել:

2. Նախքան թեմային առնչվող գրականության հետ ծանոթանալը՝ ստեղծեք հիմնախնդրի հետ կապված Ձեր վարկածը, Ձեր գաղափարը, Ձեր ենթադրությունը:
3. Ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրեք, թե այդ հիմնախնդրի հետ կապված ինչ գաղափարներ կան, ստուգեք, թե գոյություն ունեցող գաղափարները որքանով են մոտ Ձերին, ինչով կարելի է տարբերվել: Նորությունը գնահատելիս հիմք ընդունեք միայն գիտական կարծիքները, հստակ ձևակերպումները, ֆորումներում արտահայտված աղոտ, ոչ մասնագիտական ձևակերպումների վրա ուշադրություն մի դարձրեք: Հիշե՛ք, որ գիտական նորույթ է համարվում այն գաղափարը, որ հստակ ձևակերպված է ու հիմնավորված, հրատարակված է գիտական հանդեսում: Մինչև Ֆրոյդն էլ էին անգիտակցականի մասին խոսել, բայց՝ ակնարկներով, աղոտ. հիմնախնդիրը նա գիտակցեց ու հետազոտեց:
4. Հիմնախնդրի հետ կապված բազմակողմանի հարցեր տվեք ձեզ. հիշեք Հեգելի միտքը, որ կարևորը հարցն է, ճիշտ տրված հարցի պատասխանն ինքնաբերաբար է գալիս:
5. Եթե որևէ առկա տեսության քննադատության արդյունքում եք նորը ստեղծելու, ապա պարզեք, թե ինչ հարցի պատասխան է հանդիսանում այդ տեսությունը և տվեք այդ հարցի «ետևի», ավելի ընդհանուր հարցը, ինչի պատասխանի արդյունքում այդ տեսությունը կդառնա Ձեր ստեղծածի մասնավոր դեպքը:
6. Հիմնախնդրի շուրջ մտածեք անընդհատ, հատկապես գիշերը, քայլելիս, պառկած,...գրառումներն արեք առավոտյան:
7. Եթե փակուղու առաջ եք կանգնել, թողեք հիմնախնդրի շուրջ մտորումները, զբաղվեք ուրիշ բանով, օրերով, շաբաթներով, ամիսներով այդ թեմայի շուրջ մի մտածեք. վերսկսեք Ձեր մտորումները, երբ պատահականորեն թեման կհիշեք:

8. Ձեր գաղափարի հետ կապված քննարկումներ արեք ընկերների, ուսանողների և բոլոր նրանց հետ, ովքեր կլսեն ձեզ: Երևակայությամբ Ձեր մոտեցումները պատմեք ուրիշներին, մտովի լսեք նրանց քննադատությունները, պատասխանեք դրանց:
9. Ձեր գաղափարը հաստատող հնարավորին չափ շատ փաստեր հավաքեք ու հիշեք, որ հոգեբանության ոլորտում թեստերը (հատկապես չադապտացված) հաճախ ինֆորմատիվ չեն: Հետազոտության լավագույն միջոցները, ըստ մեզ, դեպքերի վերլուծությունը, գրույցները, գիտափորձերը, պրոյեկտիվ մեթոդները, դիտումը և, ընդհանրապես՝ որակական մեթոդներն են (սա սուբյեկտիվ տեսակետ է և, անշուշտ՝ վիճելի): Ըստ մեզ, չափազանց կարևոր է վարկածը հաստատող կյանքի փաստերի առկայությունը:
10. Ձեր գաղափարը շարադրեք հնարավորինս պարզ: Հիշեք, բարդ գրելը հաճախ ձև է, որի իմաստն այն է, թե՛ «եթե իմ ասածը չես հասկանում, ուրեմն ես քեզնից խելացի եմ» կամ հեղինակն ինքը տվյալ հիմնախնդիրը լավ չի պատկերացնում, այդ պատճառով էլ միտումնավոր խճճում է: Մեծագույն հանճարները՝ Ֆրոյդը, Յունգը, Ադլերը, Ֆրանկլը, Սարտրը, Վիգոտսկին շատ պարզ են գրել, որովհետև լավ են հասկացել, թե ինչի մասին են գրում, տիրապետել են նյութին:
11. Մի հուսահատվեք Ձեր գաղափարների քննադատությունից, մարդիկ դժվարությամբ են ընդունում նորը. հիշեք, մարդն ի վիճակի չի ստեղծել մի բան, որն իրականության մեջ գոյություն չունի, ուղղակի ուրիշներին համոզելու համար պետք է միտքը պարզ շարադրել և շատ փաստեր ներկայացնել:

Գիտության մեջ նկարագրվում են վարկածների բազմաթիվ տեսակներ, դրանցից մենք անդրադարձանք նախնական, աշխատանքային և վերջնական վարկածներին: Կարելի է տարբերակել նաև ընդհանուր և մասնավոր վարկածները: Ընդհանուր վարկածի դեպքում առաջարկվում է խնդրի լուծում, որը կարող է կիրառվել տարբեր ոլորտներում: Օրինակ՝ Վ. Դավիդովը վարկած առաջ քաշեց, ըստ

որի վերացական հասկացությունից դեպի կոնկրետ հասկացությունները շարժվող ուսուցման դեպքում գիտելիքների յուրացման արդյունավետությունը բարձրանում է: Այս ընդհանուր վարկածը բազմաթիվ գիտնականներ մասնավորեցրին կոնկրետ առարկաների (ասենք, մաթեմատիկայի, լեզվի և այլն) ուսուցման մեջ: Կամ մեկ այլ ընդհանուր վարկած՝ «Զարգացման ճգնաժամերը պայմանավորված են ինքնագիտակցության վերակառուցումներով», սրա մասնավորը դարձավ հետևյալը. «Երեք տարեկանի ճգնաժամը պայմանավորված է տեսակային ինքնագիտակցության արթնացումով»: Տարբերակում են նաև տեսական, փորձարարական, նկարագրական բացատրող, վիճակագրական վարկածները և այլն: «Տեսական վարկածները,-ըստ Վ.Ն. Դրուժինի,- առաջ են քաշվում, որպեսզի տեսության ներքին հակասությունները վերացվեն կամ հաղթահարվեն տեսության և փորձարարական հետազոտությունների անհամապատասխանությունները և հանդես են գալիս որպես տեսական գիտելիքի կատարելագործման գործիքներ» [6, էջ 56]:

Փորձարարական վարկածներն ուղղված են տեսական վարկածների փաստական ապացուցմանը, փորձարարական խնդիրների լուծմանը: Ըստ Ն.Ն. Մելնիկովայի. «Փորձարարական վարկածը ձևակերպվում է կոնկրետ փորձարական հետազոտության հասկացություններով և իր մեջ ներառում է. անկախ փոփոխական, կախյալ փոփոխական, նրանց միջև առկա հարաբերությունը և լրացուցիչ հանգուցային փոփոխականների մակարդակները» [10, էջ 66]:

Նկարագրական վարկածներով ենթադրվում է երևույթների, հատկությունների, կապերի գոյությունը, բացատրական վարկածներով բացատրվում են հետազոտվող իրողությունների պատճառահետևանքային հարաբերությունները:

Վիճակագրական վարկածները վիճակագրական չափումների արդյունքների վերաբերյալ ենթադրություններն են:

Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, թե որ վարկածները չեն կարող վարկած համարվել: Գիտական վարկած չեն կարող համարվել գիտական նորույթ չպարունակող պնդումները (ասենք, «Կոզնիտիվ թերապիան նպաստում է

դեպրեսիայի նվազմանը»․ այն ստեղծվել է հենց դրա համար)։ Որպես վարկած չի կարող հանդես գալ նաև ցանկացած վերացական, խիստ ընդհանուր պնդում, քանի որ այս դեպքում ամեն ինչ կարելի է նկատի ունենալ, ապացուցման ենթակա կոնկրետ իրողությունը չի երևում, հետևաբար ապացուցման անհրաժեշտությունը կորում է։ Տարածված վերացական վարկածներից է՝ «Ինչ-որ բանին նպաստում են մի շարք հոգեբանական գործոններ»։ Վարկածը չպիտի անապացուցելի լինի․ չի կարելի է անել ենթադրություններ, որոնց ժամանակակից գիտությունը չի կարող պատասխան տալ։ Ատենախոսություններում, անշուշտ նման վարկածներ չեն հանդիպում, փոխարենը հանդիպում են վարկածներ, որոնց ապացուցումը հազարամյակներ կարող է տևել․ օրինակ, հանդիպում են այսպիսի վարկածներ․ «Այս կամ այն գործունեության արդյունավետությունը պայմանավորված է այս, այս, այս գործոնների առկայությամբ»։ Այս վարկածն ապացուցելու համար, անհրաժեշտ է ապացուցել, որ հենց այդ, և ոչ թե այլ գործոններ են պայմանավորում գործունեության արդյունավետությունը։ Իհարկե, այս հակասությունից կարելի է խուսափել, ասենք, պնդելով, որ ոչ թե «արդյունավետությունը պայմանավորված է», այլ որ «արդյունավետության գործում կարևոր դեր են խաղում»։ Այս օրինակով, մենք ցանկանում ենք ընդգծել վարկածի ճշգրիտ ձևակերպման կարևորությունը, ինչը հնարավորություն կտա խուսափել հակասություններից, ավելորդ ու անիմաստ, փոխաբերական իմաստ, գնահատական կամ հուզական վերաբերմունք պարունակող արտահայտություններից (չէ որ կարելի է կառչել վարկածի մեջ ներկայացված ցանկացած պնդման և պահանջել, որ դրա ապացույցները ներկայացվեն, ասենք վերը ներկայացված օրինակի դեպքում ներկայացվեն ապացույցներ, որ այլ գործոններ չեն ապահովում գործունեության արդյունավետությունը)։

Վարկածը պետք է խնդրահարույց լինի։ Եթե վարկածը կարդում ես և ոչ մի հարց չի առաջանում, ուրեմն դա վարկած չէ։ Վարկածը պետք առաջադրված հիմնախնդրի լուծում պարունակի։ Հանդիպում են ատենախոսություններ, որոնցում հիմնախնդիրը, հետազոտության նպատակը ու վարկածն իրար հետ տրամաբանորեն

կապված չեն լինում: Այս դեպքերում վարկածի առաջադրումը գուտ ձևական բնույթ է կրում, ըստ որում, հաճախ այս կարգի ատենախոսություններում էմպիրիկ հետազոտություններն էլ վարկածի հետ առնչություն չեն ունենում:

Վարկածն առաջադրելուց հետո մշակվում է դրա էմպիրիկ ապացուցման ծրագիրը հետազոտության «դիզայնը» (այստեղ պետք է խուսափել շեղումներից, վարկածի հետ կապ չունեցող հետազոտությունների ընդգրկումից): Ըստ որում, նախքան վարկածի ապացուցմանն ուղղված լայնածավալ էմպիրիկ հետազոտությունների իրականացումը, անհրաժեշտ է վարկածի ինչպես տեսական, տրամաբանական, այնպես էլ նախնական էմպիրիկ հիմնավորումը:

2.6. Վարկածի հիմնավորմանն ու ապացուցմանն ուղղված հետազոտությունների կազմակերպումն ու իրականացումը

Վարկածի հստակեցումից հետո անհրաժեշտ է մշակել այն ապացուցելու տեսական և էմպիրիկ ուղիները և իրականացնել հետազոտություններ:

Վարկածի տեսական հիմնավորումը: Նախ փորձենք մեկնաբանել վարկածի «հիմնավորում» և «ապացուցում» հասկացությունները: Ըստ մեզ, վարկածը վերջնականորեն հաստատված կարող է համարվել միայն ուղղակի փաստերի միջոցով: Այս տեսանկյունից վարկածի հիմնավորումը դեռ նրա ապացույցը չէ, սակայն չափազանց կարևոր ուղի է հենց իրեն՝ հետազոտողին և ուրիշներին հավատացնելու, համոզելու, որ վարկածն իրատեսական և հիմնավոր է: Օրինակ, Ֆրոյդի էդիպյան բարդության վարկածը բացահայտվել էր ուղղակի փաստերի միջոցով, սակայն այդ վարկածի հիմնավորում հեղինակը չէր անում, ուղղակի նշում էր, որ երևույթը կա, ինչի հետևանքով այդ վարկածը գիտական հանրության կողմից չէր ընդունվում, և միայն շատ տարիներ անց ընդունվեց, երբ արդեն բազմաթիվ հետազոտողներ հաստատեցին էդիպյան բարդության գոյությունը: Ըստ էության, վարկածի հիմնավորումը մենք դիտարկում ենք, որպես այն ընդունելու համար

տրամաբանական հիմքերի ստեղծում, վարկածի տրամաբանությունը հասկանալի դարձնելու գործընթաց: Նշենք նաև, որ գիտության մեջ ընդունված է, որ վարկածն անհրաժեշտ է ապացուցել և՛ տրամաբանորեն, և՛ էմպիրիկորեն «Քանի որ գիտական գիտելիքն ունի երկակի՝ փաստա-տրամաբանական բնույթ, գիտական ապացույցներն էլ լինում են տրամաբանական և էմպիրիկ» [3, էջ 22]: Շատ հաճախ վարկածի համար ուղղակի փաստեր գտնելը կամ դրանք ուրիշին տեսանելի դարձնելն անհնար է լինում և այս դեպքում վարկածի տրամաբանական ապացուցումը, հիմնավորումը նրա հավաստիությունը հաստատող միակ միջոցը կարող է լինել: Անշուշտ, ժամանակի ընթացքում վարկածն ապացուցող փաստերը գտնվում են. անհնար է, որ հիմնավորված վարկածը փաստական ապացույցներ չունենա: Վարկածի հիմնավորում ասելով, մենք նկատի չունենք միայն տրամաբանական փաստարկումը, այլ նաև անուղղակի փաստերով հիմնավորումը: Վերջիններս կարող են վերցվել կյանքի տարբեր ոլորտներից, ժողովուրդների ավանդույթներից, այլ հեղինակների հետազոտություններից և այլն: Օրինակ, հայտնի գիտնական Թ. Շիբուտանին սեփական էմպիրիկ հետազոտություններ գրեթե չէր արել, սակայն իր վարկածները հաջողությամբ հիմնավորում էր այլ հեղինակների էմպիրիկ հետազոտություններով: Մենք ինքնագիտակցության տարիքային վերակառուցումների մեր վարկածները հաջողությամբ հիմնավորել ենք ժողովրդական ավանդույթներից և տարիքային հոգեախտաբանությունից վերցված փաստերով [17]:

Այսպիսով, ատենախոսական հետազոտություններ իրականացնողներին մենք խորհուրդ ենք տալիս անպայման հիմնավորել վարկածը տրամաբանական փաստարկներով, տարբեր հեղինակների տեսակետներով ու էմպիրիկ հետազոտություններով, կյանքի տարբեր ոլորտներից վերցված փաստերով և այլն: Նման մոտեցումը շատ ավելի համոզիչ է դարձնում վարկածը, հասկանալի դարձնում պաշտպանական խորհրդի անդամներին Ձեր վարկածի տրամաբանությունը:

Վարկածի հաստատման մյուս ձևը ապացուցումն է ուղղակի փաստերով: Այդ փաստերը ստացվում են հատուկ կազմակերպված էմպիրիկ հետազոտություններով,

որոնք ատենախոսական հետազոտության կարևորագույն մասն են կազմում: Վարկածն ապացուցող հիմնավոր փաստերը ձեռք են բերվում հետազոտության աղեկվատ «դիզայնով», հետազոտության ընտրանքի ճիշտ ընտրությամբ, աղեկվատ հետազոտական մեթոդներով, հետազոտության արդյունքների քանակական և որակական հիմնավոր վերլուծությամբ: Կարելի է առանձնացնել էմպիրիկ հետազոտության հետևյալ փուլերը. ա/ էմպիրիկ հետազոտության ծրագրի մշակումը, բ/ հետազոտությունների իրականացում, գ/ հետազոտության արդյունքների մշակում, գ/ հետազոտության արդյունքների վերլուծություն (քանակական և որակական), դ/ հետազոտության արդյունքների ներկայացում և մեկնաբանում, ե/ հետազոտության արդյունքների քննարկում, ե/ եզրակացությունների շարադրում:

Էմպիրիկ հետազոտության ծրագրի մշակումը: Հետազոտության ծրագիրը կամ պրոյեկտը, «դիզայնը» մշակելիս հետազոտողն ուրվագծում է, թե ինչ էմպիրիկ փաստերով, փաստարկներով, հեղինակավոր գիտնականներից ցիտումներով և ինչ էմպիրիկ մեթոդներով կարող է ապացուցել իր վարկածը: Նա հստակեցնում է իր էմպիրիկ հետազոտության նպատակը, խնդիրները, հետազոտության փուլերը, ժամանակացույցը, հետազոտության ընտրանու բնութագրերը (հետազոտվողների քանակը, տարիքը, սեռը, ընտանեկան կարգավիճակը և այլն): Հետազոտության ծրագիրը ներկայացվում է ատենախոսության մեջ, ըստ որում էմպիրիկ հետազոտության օբյեկտը, առարկան նպատակը, խնդիրները տարբերվում են ատենախոսության ներածության մեջ ներկայացված նույնանուն կետերից, այսինքն ատենախոսության ընդհանուր ծրագրից: Օրինակ՝ էմպիրիկ հետազոտության նպատակը վարկածի ապացուցումն է և խնդիրներն էլ ըստ այդմ են առաջադրվում:

2.7. Քանակական և որակական մեթոդները հոգեբանության մեջ

Այսօր հոգեբանական ատենախոսություններից շատերում հետազոտական մեթոդների ընտրությունը հստակ չի իմաստավորվում, հաճախ գուտ ձևական բնույթ

է կրում, երբեմն էլ ընդհանրապես վարկածի ապացուցմանն ուղղված չի լինում: Այսպես, հայցորդները հաճախ պարտադիր են համարում մաթեմատիկական-վիճակագրական մեթոդների կիրառումը, սակայն ոչ թե ստացված արդյունքների հավաստիությունը ստուգելու կամ վարկածի հետ կապված կապերը բացահայտելու նպատակով, այլ զուտ ձևականորեն, ցույց տալու համար, թե քանակական մեթոդներ են կիրառել՝ առանց հիմնավորելու, թե որքանով են ադեկվատ այդ մեթոդները տվյալ հիմնախնդրի հետազոտման համար:

Հոգեբանության մեջ հետազոտական մեթոդական ապարատը ճիշտ կիրառելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է հստակ պատկերացնել հոգեբանության՝ որպես գիտության առանձնահատկությունները և քանակական ու որակական մեթոդների հնարավորություններն ու ֆունկցիաները:

Սովորաբար քանակական մեթոդները սահմանվում են որպես «...Սոցիալական երևույթների սխտեմատիկ էմպիրիկ հետազոտություն, որն իրականացվում է վիճակագրական, մաթեմատիկական կամ հաշվողական տեխնիկաներով: Քանակական տվյալներ են բուլոր այն տվյալները, որոնք ներկայացված են թվային տեսքով, օրինակ, վիճակագրական, տոկոսային և այլն» [21]:

Որակական մեթոդները «...Նպատակ են հետապնդում խորքային ձևով հասկանալ մարդու վարքը և այդ վարքը դրդող պատճառները» [21]: Ըստ մեկ այլ բնութագրման՝ «Որակական մեթոդներում հասկացությունների բացատրման, մեկնաբանման համար օգտագործվում են ոչ թե թվերը, այլ բառերը: Որակական մեթոդներով ստացված տվյալները քանակական վերլուծության ենթակա չեն: Այլ կերպ ասած՝ դրանք պատասխանում են ոչ թե «որքա՞ն», այլ «ի՞նչ», «ինչպե՞ս», «ինչու՞» հարցերին» [25]: Որակական հետազոտությունները երևույթները հետազոտում են իրենց բնական դրսևորումների մեջ [20]: Որակական մեթոդների տարբերությունը քանակականից այն է, որ այս դեպքում հետազոտվում է օբյեկտի իմաստային, բովանդակային կողմը, հաշվի է առնվում նրա եզակիությունը: Որակական մեթոդներն ավելի ամբողջական պատկերացում են տալիս հետազոտվող երևույթների

մասին, դրանց հիման վրա ստեղծվում են արողջական տեսություններ (օրինակ, Ժան Պիաժեի տեսությունը ստեղծվել է զրույցի, գիտափորձերի հիման վրա, Զիգմունդ Ֆրոյդի տեսությունը՝ հիպնոսի կիրառմամբ գիտափորձերի, ազատ զուգորդությունների, դեպքերի վերլուծության մեթոդներով և այլն):

Օ. Յու. Բոգդանովան և Ի. Մ. Մարկովսկայան [4, էջ 10] նշում են քանակական և որակական հետազոտությունների հետևյալ տարբերությունները (ներկայացվում է որոշ կրճատումներով և խմբագրումներով).

Որակական մեթոդներ	Քանակական մեթոդներ
Վիճակագրական մեթոդներ չի կիրառվում	Վիճակագրական մեթոդներ կիրառվում է
Ընտրանքը փոքր է	Ընտրանքը մեծ է
Հիմնվում է սուբյեկտիվ աշխարհի հասկացման, խոր հոգեբանական վերլուծության վրա: Ինդուկտիվ մոտեցում է:	Բնագիտական դիրքորոշում, օբյեկտիվության ձգտում, դեդուկտիվ մոտեցում:
Ծագել է հոգեբանությունից, հումանիտար գիտություններից:	Ծագել է սոցիոլոգիայից, բնական գիտություններից:
Կիրառվող մեթոդներն ու մեթոդիկաները. պրոյեկտիվ, չստանդարտացված (դիտում, դեպքերի վերլուծություն, զրույց...)	Կիրառվող մեթոդներն ու մեթոդիկաները. ստանդարտացված հարցարաններ, քննթենթ-վերլուծություն...
Առավելությունները. սոցիալ-հոգեբանական երևույթների բացահայտման մեծ հավանականություն, խորքային վերլուծություն:	Առավելությունները. տնտեսող է, կարելի է մեծ ընտրանք ընդգրկել, լայն ընհանրացումներ անելու հնարավորություն է տալիս, հետազոտության արդյունքները հարաբերականորեն հեշտ են մշակվում:
Թերությունները. սուբյեկտիվության մեծ հավանականություն, հետազոտության արդյունքների մշակման բարդություն,	Թերությունները. ոչ ադեկվատ պատասխանների հավանականություն, ոչ բավարար խորքայնություն:

կարող են իրականացնել բարձրորակ մասնագետները:	
--	--

Հոգեբանության մեջ քանակական մեթոդների կիրառման նպատակահարմարությունը, դրանց արդյունքների հավաստիությունը շատ գիտնականներ կասկածի տակ են դնում: Օրինակ, Ս. Լ. Ռուբինշտեյնը ընդհանրապես դեմ էր թեստերին, հոգեկան երևույթների չափումներին [5]: Մեկ այլ ճանաչված գիտնական, փիլիսոփա Վ. Շադիշը ընդգծելով, որ քանակական մեթոդները հիմնվում են պոզիտիվիստական մոտեցման վրա, նշում է, որ գիտության փիլիսոփայությունն այդ մոտեցումն ամենևին էլ հուսալի չի համարում [22]:

Վ. Սվաջլը իր «Որակական հոգեբանություն և քանակական մեթոդների որոշ դժվարությունները» հոդվածում նշում է. «...Հոգեբանության մեջ հարաբերականորեն վերջերս աճել է կասկածն այն հարցում, թե որքանով են ի վիճակի պոզիտիվիստական հետազոտությունը և քանակական մեթոդները արտացոլել իրականությունը: Ընդգծվում է, որ հոգեբանության և ընդհանրապես հասարակական գիտությունների մեջ իրական օբյեկտիվության հասնելն անհնար է...» [23]: Հեղինակը նշում է, որ հոգեբաններն ուղղակի փորձում են նմանակել բնական գիտություններին՝ հաճախ ոչ ադեկվատ ձևով օգտագործելով քանակական մեթոդները:

Հոգեկան իրողությունները կայուն, անփոփոխ չեն ո՛չ ժամանակի մեջ, ո՛չ անձից անձ (մինչդեռ պոզիտիվիստական մոտեցման ներկայացուցիչները, քանակական մեթոդների կողմնակիցները գտնում են, թե դրանք անփոփոխ են). դեպրեսիան նույնը չէ նույն տարիքի, նույն սեռի, Ա և Բ անձանց մեջ, նույնիսկ եթե թեստով նրանց դեպրեսիայի մակարդակները լրիվ նույնն են: Էլ չենք խոսում այն մասին, որ դեպրեսիան լրիվ տարբեր է ծերունու և պատանու, աղջկա և տղայի մեջ (չնայած թեստը նույնական տվյալներ կարող է է ցույց տալ), թեստի անցկացումից նույնիսկ մի քանի րոպե հետո: Հենց այս է պատճառը, որ զուտ քանակական մեթոդներով կատարված հետազոտությունները, ասենք, հոգեբանության կամ

բժշկության մեջ, խիստ հակասական են. օրինակ՝ հաճախ ենք հանդիպում, որ, ասենք, այս կամ այն սննդամթերքի օգտակար կամ վնասակար լինելու վերաբերյալ քանակական հետազոտություններով բացահայտված փաստն այլ հետազոտություններով ժխտվում է (այս կապակցությամբ նույնիսկ անեկդոտներ կան): Ահա և հոգեբանության ոլորտում քանակական հետազոտությունների հակասական արդյունքների օրինակ. «... Դեռահասության տարիքում ճգնաժամի ի հայտ գալու հաճախականությանը նվիրված հետազոտությունները միանգամայն հակադիր տվյալներ են ներկայացնում. ըստ որոշ հեղինակների, ճգնաժամն այս տարիքին բնորոշ չէ, իսկ ըստ այլ հեղինակների (Ջ. Մասթերսոն, Ա. Ուոշբորն), դեռահասների միայն 17%-ը ճգնաժամային ախտանշաններ չի դրսևորում: Ճգնաժամերի ելքին նվիրված միայն մեկ հետազոտություն կարողացանք գտնել, ըստ որի ստացվում է, որ դեռահասների մոտ 30%-ն է կարողանում առանց հետևանքների հաղթահարել ճգնաժամը: Այս տվյալները, փաստորեն, լիովին հակասում են դեռահասության ճգնաժամին նվիրված մյուս էմպիրիկ հետազոտությունների արդյունքներին: Պետք է ենթադրել, որ հեղինակը հետազոտության է ենթարկել միայն սուր ճգնաժամ ապրած դեռահասների, որոնք, ինչպես նշել ենք, այս տարիքի երեխաների միայն 20%-ն են կազմում» [17, էջ 78]:

Այս առումով հետաքրքիր է Ս.Ա. Բելանովսկու սոցիոլոգիայի ոլորտի քանակական հետազոտությունների վալիդացման մասին տեսակետը (ինչը միանշանակ կարելի է տարածել հոգեբանության վրա): Ըստ հեղինակի, հետազոտությունների վալիդացումը (հուսալի դարձնելը) «...հնարավոր է միայն արտաքին, անկախ չափանիշի առկայության պարագայում, սակայն նման իրավիճակը... հազվադեպ երևույթ է: Բոլոր մյուս դեպքերում քանակական հարցումների արդյունքների վալիդությունը ընդամենը վարկած է... քանակական հետազոտությունները հուսալի են միայն այնքանով, որքանով հենց հուսալիության հիմնախնդիրը հաջողվում է հանգեցնել նրա վիճակագրական մեկնաբանության: Եթե նման հանգեցումը չի հաջողվել կամ սկզբունքորեն հնարավոր չէ, քանակական

տվյալները դառնում են եզրակացությունների համար ծայրահեղորեն անհուսալի հիմքեր» [3, էջ 19]:

Մեր կարծիքով, հոգեբանության ոլորտում չադապտացված թեստերով անցկացվող զանգվածային բնույթ ստացած ատենախոսական հետազոտությունները և դրանց արդյունքների ոչ պրոֆեսիոնալ մակարդակով կատարված վիճակագրան վերլուծությունները հիմնականում արհեստական, կեղծ հետազոտություններ են, որոնք, ըստ էության, ոչ մի իրական գիտական բացահայտումների չեն հանգեցնում: Դրանցով ուղղակի փորձ է արվում օբյեկտիվության տպավորություն թողնել, ցույց տալ, որ ատենախոսությունը կատարվել է ընդունված կանոններով՝ առանց հասկանալու այն մեթոդաբանությունը, որն ընկած է հոգեբանական գիտական հետազոտությունների հիմքում:

Քանակական մեթոդները հոգեբանության մեջ զգուշորեն և իմաստավորված (ոչ ձևական) պետք է օգտագործել, լավ կլինի, որ վիճակագրական մեթոդների կիրառման կապակցությամբ հայցորդը խորհրդակցի վիճակագրագետի հետ: Հնարավորության դեպքում քանակական և որակական մեթոդները կարելի զուգակցել (ասենք, հարցման, թեստի արդյունքները ստուգել զրույցի մեթոդով)՝ ճշգրտելու հետազոտության արդյունքների հավաստիությունը:

2.8. Փորձարարական հետազոտությունների օբյեկտիվության և հավաստիության հիմնախնդիրը

Այն հարցը, թե հոգեբանությունն ինչ պարադիգմաների (բնագիտական, հումանիտար, թե մի երրորդ պարադիգմայի) վրա պիտի հիմնի իր հետազոտությունները, սուր վիճաբանության առարկա է [14]: Հումանիտար տեսանկյան կողմնակիցները մեղադրում են բնագիտական դիրքորոշում ունեցողներին ռեդուկցիոնիզմի, բուն հոգեկան երևույթներն անտեսելու, մեխանիցիզմի մեջ, իսկ բնագիտական պարադիգմայի ներկայացուցիչները

հոգեբանությունը գիտություն չեն համարում, մեղադրում են իդեալիզմի մեջ, նշում են, որ հոգեբանության մեջ տեսությունները չունեն իրենց փաստական հիմնավորվածությունը [14]: Որպես ելք առաջարկվում են նոր պարադիգմաներ՝ խոլիզմը, սիներգետիկան, իսկ Վ.Ա. Ռիբակովը և Ա.Լ. Պոկրիշկինը գտնում են, որ բնագիտական մոտեցումը կարող է կիրառվել հոգեբանության մեջ, եթե հարմարեցվի հոգեկան իրականությանը (հեղինակները գտնում են, որ բնագիտական մոտեցումը «չի աշխատում» հոգեբանության ոլորտում այն պատճառով, որ նյութական իրականության հետազոտական սկզբունքները մեխանիկորեն տարածվել են հոգեկան իրականության վրա):

Այլ տեսանկյունից են իրավիճակը գնահատում և լուծում առաջարկում նշանավոր գիտնականներ Վ.Պ. Զինչենկոն և Մ.Կ. Մամարդաշվիլին: Ըստ նրանց, «Օբյեկտիվության և հոգեբանականի հիմնախնդրի լուծման տարբեր մոտեցումները տատանվում են երկու բևեռների միջև. կա՛մ մեթոդի օբյեկտիվությունն ապահովվում է հոգեկան իրականությունը հասկանալուց հրաժարվելու միջոցով, կա՛մ հոգեկանի պահպանումն ապահովվում է օբյեկտիվ վերլուծությունից հրաժարվելու միջոցով: Ըստ որում, երկու դեպքում էլ հոգեբանականն ու սուբյեկտիվը նույնացվում են: Արդյունքում հոգեբանության բազմաթիվ հարցերի... լուծումը դժվարությունների ու փակուղիների առաջ է կանգնում» [7, էջ 109]: Այս փակուղուց ելքը հեղինակները տեսնում են «օբյեկտիվություն» հասկացության այնպիսի ընդլայնման մեջ՝ «...որն ընդգրկի իր ուղեծրի մեջ այնպիսի առարկաների նկարագրությունը, որոնց բնական դրսևորումներն իրենց մեջ պարունակում են իրականության սուբյեկտիվ գործունեական տրանսֆորմացիայի նստվածքը» [7, էջ 115]: Այլ կերպ ասած, ըստ հեղինակների, մարդու սուբյեկտիվ աշխարհն օբյեկտիվ է [7]: Այս տեսանկյունից, այսպես կոչված «մեկնաբանող մեթոդները» [9], այսինքն, որակական մեթոդները,

որոնք հիմնվում են հետազոտողի սուբյեկտիվ մեկնաբանությունների վրա (ասենք, պրոյեկտիվ թեստերը, զրույցի, կենսագրական, իրավիճակային վերլուծության և նման մեթոդները) միանգամայն օբյեկտիվ կարող են համարվել՝ առանց օբյեկտիվության չափանիշ համարվող մաթեմատիկական մեթոդների, որոնց մեջ հոգեբանությունն ասես կորում է (ասենք, անհասկանալի է, թե ինչ է նշանակում միջին տիրություն կամ ագրեսիվության վիճակագրորեն հավաստի աճ): Այս դիրքերից հետազոտության հավաստիությունը բարձրանում է ոչ թե, ասենք, մաթեմատիկական ապարատի օգտագործմամբ (թյուրիմացություն, որ լայնորեն տարածված է հոգեբանության մեջ բնագիտական դիրքորոշում ունեցող հոգեբանների շրջանում. ենթադրվում է, որ այնպես, ինչպես, ասենք, զգայությունների շեմերը, չափելի են նաև ներքին ապրումները, մտորումները, հարաբերությունները, և եթե դրանք չափվեն, հետազոտությունը կդառնա միանգամայն հավաստի: Սակայն չափելի են միայն հոգեկանի դրսևորումները՝ վարքը, խոսքը, որոնք կարող են ոչ միայն չարտահայտել ներհոգեկան իրողությունները, այլև լինել դրանց ճիշտ հակառակը), այլ միանգամայն այլ ուղիներով: Վերջիններից կարելի է նշել, օրինակ, հետազոտվող օբյեկտը տարբեր մակարդակներում (ասենք, հոգեկան, հոգեախտաբանական, սոցիալական, կենսաբանական և այլն), տարբեր տեսանկյուններից, տարբեր մեթոդներով ուսումնասիրելը և համեմատական վերլուծությունները: Հետազոտության հավաստիությունն ու օբյեկտիվությունը բարձրանում են, եթե շահագրգռված հետազոտողի (նկատի ունենք սեփական վարկածը հաստատելու շահագրգռվածությունը) մասնակցությունը նվազագույն չափի է (ֆենոմենոլոգիական մեթոդները՝ միջմշակութային հետազոտությունները, օբյեկտիվ դիտումը և այլն) և ավելի ցածր են, երբ մասնակցությունը բարձր է (զրույց, գիտափորձ և այլն): Սովորաբար, հետազոտողի մասնակցությամբ պայմանավորված

սուբյեկտիվիզմի լուծմանն է ուղղված հետազոտության կրկնելիությունը, այսինքն այն, որ հետազոտությունը կարող է ցանկացած ոք կրկնել և նույն արդյունքները ստանալ: Սա անշուշտ լավ միջոց է, սակայն այսօր եզակի հետազոտություններ են ուրիշի կողմից կրկնվում: Կարևոր ենք համարում առաջարկվող վարկածները պրակտիկայում (և ոչ թե արհեստածին փորձարարական իրավիճակներում) ստուգելու հանգամանքը (հիշենք, որ ճշմարտության չափանիշը պրակտիկան է): Հայտնի է, որ հավաստի փորձարարության տպավորություն ստեղծող բազմաթիվ հետազոտություններ հաճախ իրականության հետ ոչ մի կապ չեն ունենում, դրանց բացարձակ մեծամասնությունը պրակտիկայում երբեք չի կիրառվում, մինչդեռ «մաթեմատիկորեն» չհետազոտված, ասենք, Ժան Պիաժեի, Ահարոն Բեկի, Վիկտոր Ֆրանկլի կամ հոգեվերլուծության կոնցեպցիաներն ամեն քայլափոխի հաստատվում են կյանքի փաստերով և հոգեթերապևտիկ պրակտիկայով:

Հավաստիության բարձրացման համար չափազանց կարևոր է ադեկվատ մեթոդական ապարատի ընտրությունը, այսինքն այն, որ ընտրված մեթոդներով հնարավոր լինի լիարժեք ինֆորմացիա ստանալ հետազոտվող երևույթի վերաբերյալ, ապացուցել առաջ քաշված վարկածը:

2.9. Էմպիրիկ հետազոտությունների ներկայացումը ատենախոսության մեջ, ատենախոսության եզրակացությունները և գործնական առաջարկները

Սովորաբար էմպիրիկ հետազոտություններին հասկացվում է առանձին գլուխ, որի մեջ ներկայացվում են հետազոտության տրամաբանությունը, ծրագիրը՝ (նպատակը, խնդիրները, փուլերը), հետազոտության մեթոդներն ու մեթոդիկաները, հետազոտության տվյալները (ում հետ, որտեղ և երբ է կատարվել հետազոտությունը), պրոցեդուրան, արդյունքները, դրանց վերլուծությունը, քննարկումը և եզրակացությունները: Հետազոտության տրամաբանությունն ասելով՝ նկատի ունենք

այն, որ հետազոտողը ներկայացնում, քննարկում է տվյալ հիմնախնդրի էմպիրիկ հետազոտության մեթոդաբանական հարցերը, վարկածի ապացուցման իր տեսլականը, ասենք, հետազոտության դժվարությունները, հնարավոր ուղիները, մեթոդների, հետազոտվողների և նրանց քանակի ընտրության տրամաբանությունը և այլն:

Այս գլխի չափազանց կարևոր խնդիրներից է էմպիրիկ հետազոտության ծրագրի հստակ ներկայացումը, այն, թե ինչ էմպիրիկ նպատակ է հետապնդում հետազոտողը, այդ նպատակին հասնելու ինչ քայլեր և փուլեր է նախատեսում: Որպես օրինակ, ներկայացնենք Ա. Դոլաթխահի՝ «Անձի նույնացումների դերը սրտանոթային հիվանդությունների առաջացման գործում» թեկնածուական ատենախոսության ծրագրից հատվածներ. «Հետազոտությունների նպատակն է՝ էմպիրիկ ճանապարհով ճշտել, թե ինչ դեր է խաղում նույն հիվանդությունն ունեցած հիվանդի համար նշանակալի մարդու հետ նույնացումը սրտանոթային հիվանդության առաջացման գործում: Հետազոտության վարկածն է՝ սրտանոթային հիվանդությունների առաջացման գործում որոշակի դեր ունեն անձի նույնացումները իր համար նշանակալի մարդկանց հետ, ովքեր նույնպես ունեցել են սրտանոթային հիվանդություններ: Ըստ որում, նույնացումը հիվանդությունն առաջ է բերում երկու մեխանիզմով. ա/ նույն հիվանդությունն ունեցած նշանակալի մարդու հետ նույնացման հետևանքով անձը «վերցնում է» այնպիսի հոգեկան և վարքային բնութագրեր, որոնք նպաստում են սրտանոթային հիվանդությունների առաջացմանը, բ/ նույն հիվանդությունն ունեցած նշանակալի մարդու հետ նույնացման հետևանքով անձը ծրագրավորում է իրեն հիվանդանալու նույն հիվանդությամբ:

Հետազոտության էմպիրիկ նպատակի և վարկածի հիման վրա առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Պարզել սրտանոթային հիվանդների համար նշանակալի այն մարդկանց, ովքեր ունեցել են նույն հիվանդությունը, և ում հետ հիվանդը կարող էր նույնացնել իրեն:

2. Պարզել, թե արդյոք հիվանդի մեջ իսկապես առկա են նույնացումներ այն նշանակալի մարդկանց հետ, ովքեր ունեցել են նույն հիվանդությունը:
3. Հետազոտության ենթարկել հիվանդի նույնացումների առանձնահատկությունները և դրանց արտացոլումը հիվանդի հոգեկերտվածքի, սովորությունների, կյանքի ուղու մեջ:
4. Պարզել, թե արդյոք հիվանդի մեջ առկա էր գիտակցված կամ չգիտակցված ծրագիր, թե իր համար նշանակալի մարդու նման ինքն էլ կունենա նույն հիվանդությունը:

Վերոնշյալ խնդիրներին համապատասխան հետազոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով.

1. Առաջին փուլում հետազոտությունները նախ ուղղված են եղել պարզելու հետազոտվողների համար նշանակալի այն մարդկանց, ովքեր ունեցել են սրտանոթային հիվանդություններ, և ում հետ նրանք կարող էին նույնանալ, ապա ճշտելու, թե իրենց համար նշանակալի մարդկանց հետ նույնանալով՝ հոգեբանական և վարքային ինչ բնութագրեր են նրանք վերցրել: Այդ բնութագրերը մենք գնահատել ենք սրտանոթային հիվանդություններին նպաստելու տեսանկյունից: Այս փուլում անձի նույնացումները պարզելու նպատակով մենք կիրառել ենք գենոսոցիոգրամայի (Ա. Շուտցենբերգեր), ինչպես նաև հարցման և զրույցի մեթոդները:

Մենք ուսումնասիրել ենք նաև հետազոտվողների հոգեկերտվածքի առանձնահատկությունները՝ պարզելու, թե արդյոք նրանց մեջ իսկապես առկա են նույնացման հետևանքով վերցված սրտանոթային հիվանդություններին նպաստող հոգեբանական բնութագրեր:

2. Երկրորդ փուլում մեր հետազոտություններն ուղղված էին պարզելու, թե հետազոտվողների մեջ առկա են արդյոք իրենց հիվանդության հետ կապված ինքնածրագրավորումներ, և եթե՝ այո, ապա որքանով են այդ ինքնածրագրավորումները պայմանավորված անձի նույնացումներով:

3. Երրորդ փուլում մեր նախորդ հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակել ենք հոգեթերապևտիկ միջոցառումներ՝ օգնելու սրտանոթային հիվանդություններ ունեցող մարդկանց հասկանալու իրենց հիվանդության այն հոգեբանական պատճառները, որոնք պայմանավորված են իրենց համար նշանակալի մարդկանց հետ նույնացմամբ» [2, էջ 64-65]:

Հետազոտողն այս գլխում պետք է մանրամասն ներկայացնի իր կիրառած մեթոդներն ու մեթոդիկաները: Օրինակ, վերոնշյալ հեղինակը հետևյալ կերպ է ներկայացնում գենոսոցիոգրամայի մեթոդը, որը նա օգտագործել էր իր հետազոտության մեջ. «Գենոսոցիոգրամայի հիմնադիրներ են համարվում, Հ. Քոլումբը և Ա. Շուսցենբերգերը: Ա. Շուսցենբերգերն այս մեթոդը հետևյալ կերպ է բնութագրում. «Գենոսոցիոգրաման իրենից ծագումնաբանական ծառ է ներկայացնում, որը կազմվում է հիշողությամբ (այսինքն, առանց լրացուցիչ ինֆորմացիա և փաստաթղթեր ներգրավելու) և լրացվում կյանքի կարևոր իրադարձություններով (տարեթվերով և կապերով) ու հուզական ենթատեքստով (սլաքներով և գունավոր գծերով ընդգծված սոցիոմետրիկ կապերով): Այստեղ ներկայացվում են հարազատների անունները, մասնագիտությունները, նրանց կյանքում տեղի ունեցած նշանակալի իրադարձությունները, ծնունդները, մահերը, հիվանդությունները, բնակավայրերի փոփոխությունները»: Ճշգրտությունը չի կարևորվում գենոսոցիագրամայում, այլ կարևորվում է իրադարձությունների և մարդկանց նկատմամբ անձի հուզական վերաբերմունքը»: [2, էջ 68]:

Մեթոդները ներկայացնելուց հետո անհրաժեշտ է ներկայացնել հետազոտության այնպիսի տվյալներ, ինչպիսիք են ընտրանքը (հետազոտության մասնակիցների սեռը, տարիքը, քանակը և այլն), տեղը (ասենք, Երևանում, մարզերում), հիմնարկը, որտեղ կատարվել են հետազոտությունները (ասենք, թիվ 74 դպրոց), թվականը:

Հետազոտության պրոցեդուրա ասելով՝ նկատի ունենք այն, թե ինչ առանձնահատկություններով է իրականացվել հետազոտությունը, ասենք,

անհատական, թե խմբային, ինչպիսի հարցեր են տրվել և այլն: Որպես օրինակ, ներկայացնենք պրոցեդուրայի ներկայացման մի նմուշ վերոնշյալ ատենախոսությունից. «Հետազոտվողներին տրվել է հետևյալ հրահանգը. «Մենք հետազոտում ենք ժառանգական հոգեբանական գործոնները Ձեր հիվանդության առաջացման գործում: Հիմա մենք կկառուցենք Ձեր տոհմածառը, որի մեջ դուք հիշողությամբ կներկայացնեք Ձեր նախնիներին, հարազատներին, նրանց տարիքը, մասնագիտությունները, բնավորության առանձնահատկությունները, սովորությունները, հիվանդությունները, երբ են հիվանդացել այդ հիվանդությամբ, տարիքները, Ձեր և Ձեր հարազատների միջև եղած հարաբերությունները, վերաբերմունքը՝ համակրանքներն ու հակակրանքները: Անհրաժեշտ է նաև հիշել այն սթրեսները, կյանքի իրադարձությունները, որոնց հաջորդել են Ձեր հարազատների հիվանդությունները, ինչպիսին է եղել հիվանդության ընթացքը: Ինչ ընդհանրություններ կան Ձեր և հարազատների արտաքինի, բնավորության, սովորությունների, ճակատագրերի, ընտրած մասնագիտությունների, հիվանդությունների միջև»: Հետազոտությունն սկսում էինք հետազոտվողի տոհմածառը կառուցելով (երեք սերնդի կտրվածքով՝ քույր, եղբայր, հորեղբոր կամ քեռու տղա, հայր, մայր, հորաքույր, քեռի... և պապ, տատ՝ պապի/տատի եղբայր, քույր և այլն): Գենոսցիոգրաման կազմում էինք մենք՝ հարցեր ուղղելով հիվանդին: Սկսում էինք ընտանիքից՝ հայր, մայր, քույր եղբայր, ապա անցնում էինք երկրորդ սերնդի հարազատներին (հայրական և մայրական կողմի հարազատներին), նրանց երեխաներին (երրորդ սերունդ), որից հետո անցնում էինք պապին, տատին, նրանց քույրերին և եղբայրներին (առաջին սերունդ): Գենոսցիոգրաման կազմում էինք՝ հիմնվելով գծապատկերի վրա: Գենոսցիոգրաման կառուցելուց հետո իրականացնում էինք դրա վերլուծություն»[2, էջ 70]:

Ատենախոսության ամենակարևոր պահերից է էմպիրիկ հետազոտությունների արդյունքների ներկայացումը և վերլուծությունը: Տարբեր մեթոդների արդյունքները

տարբեր ձևերով են ներկայացվում: Կարելի է առանձնացնել ներկայացման հետևյալ տեսակները.

1. Նկարագրական- խոսքային: Որպես օրինակ, ներկայացնենք մեր կողմից դեպքերի վերլուծության մեթոդով իրականացված հետազոտության արդյունքների ներկայացման մի հատված. «Դեպք 1. Կարեն Ա. – 32 տարեկան, կրթությունը՝ բարձրագույն-բժշկական, ապրում է Երևանում, աշխատում է մասնագիտությամբ, ամուսնացած չէ, 26-27 տարեկանի շրջանում բուժվել է ակոհոլամոլությունից, դրսևորում է փսիխոտիկ ախտանշաններ, ախտորոշումը հոգեբուժական հիմնարկում ճշգրտված չէ, մեր կողմից ախտորոշվել է անձի շիզոֆրենիայի ակցենտուացիա և սուր տարիքային ճգնաժամ (25-33 տարիքային շրջանի):

Մեզ է դիմել դեպքեսիվ վիճակի, կաչուն, ագրեսիվ ցանկությունների (ասենք՝ բոր-մեքենան մտցնել այցելուի կոկորդը), կոնֆլիկտայնության, անընդհատ ինքնավերլուծությունների ու անինքնավստահության կապակցությամբ: Դեղորայքային բուժումն արդյունավետ չի եղել: Կյանքի ուղու առանձնահատկությունները – մեծացել է զինվորականի ընտանիքում (հայրը բարձրաստիճան սպա է), միակ զավակն է, հայրը խիստ, կոպիտ անձ է, պահանջկոտ է եղել Կարենի նկատմամբ, մայրը ջերմ ու հոգատար է, միևնույն ժամանակ ուժեղ բնավորություն ունի... » [17, էջ 108]:

2. Հատվածներ հետազոտության արձանագրություններից: Ահա, օրինակ, մեր կողմից զրույցի մեթոդով իրականացված հետազոտությունից մի հատված. «Ներկայացնենք Քրիստինայի հետ զրույցի համապատասխան հատվածը ստորև. «Հոգեբան – Քրիստինա, Ձեր նկարագրած անինքնավստահությունն ի՞նչ իրավիճակներում է դրսևորվում:

Քրիստինա Գ.- Հիմնականում աշխատանքի վայրում, ասենք, բժշկուհու հետ շփվելիս, այն տղաների հետ, որոնք ինձ դուր են գալիս, մի տեսակ ինձ ցածր եմ համարում նրանցից, ծնունդներին, քեֆերին, երբ անձանոթ մարդիկ շատ կան: Առաջ այդպիսին չէի, շատ վստահ էի ինձ զգում, ինչ էս ամուսնության միտքը

հայտնվեց, այդ շրջանից էլ սկսեցի վախենալ մարդկանցից: Մի փոքր բանից կարող եմ լաց լինել, տխրել, օրերով անհավես լինել: Մամայի հետ եմ հաճախ կովում. ամեն անգամ, որ տուն եմ մտնում ասես ինձ աչքերով ասում է. «Էսօր էլ չամուսնացար»: Գիտեմ, որ հիմարություն է, բայց վրաս չեմ կարողանում:

Հոգեբան – Իսկ ինչպե՞ս ծնվեց ամուսնանալու գաղափարը, ինչ-որ մեկը հուշե՞ց, թե՞ իրեն-իրեն հայտնվեց:

Քրիստինա Գ. - Երևի իրեն-իրեն հայտնվեց, ճիշտ է մաման այդ թեմայով հաճախ էր խոսում, բայց առաջ էլ էր խոսում, ես բանի տեղ չէի դնում: Երևի ընկերուհուս ամուսնությունն էլ դեր խաղաց»[17, էջ 110]:

3. Հետազոտությունների արդյունքների ներկայացում աղյուսակների, գծապատկերների, հիստոգրամների ձևով:

Հետազոտության արդյունքները ներկայացնելուց հետո կատարվում է դրանց վերլուծությունը՝ մեկնաբանությունը, տվյալների դասակարգումը, մոդելավորումը, դրանց նկատմամբ հեղինակի վերաբերմունքի ներկայացումը, վիճակագրական վերլուծությունները:

Ստորև ներկայացնում ենք ատենախոսություններից վերցված հետազոտության արդյունքների վերլուծության նմուշներ.

Թեստային մեթոդով իրականացված հետազոտության արդյունքների վերլուծության օրինակ. «Մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ առողջության առավել ծանր վիճակը բնութագրող բժշկական ցուցանիշները կապված են ինչպես պեսիմիզմի բարձր մակարդակի, այնպես էլ անձի կողմից ոչ ադապտիվ վարքային և կոգնիտիվ ստրատեգիաների հետ: Աշխատանքում վերհանված հուզական ոլորտի խառնվածքային առանձնահատկությունների և անհատի ատրիբուտային-ոճային բնութագրերի միջև կորելյացիոն կապերը համապատասխանում են Ա.Ա. Իլյուչենկոյի այն տեսակետին, որ հույզերը մասնակցում են հարմարման գործընթացին....» [15, էջ 123-124]:

Ներկայացնենք նաև կենսագրական մեթոդով կատարված հետազոտության արդյունքների վերլուծության նմուշ. «Ներկայացված կենսագրություններում հստակորեն ուրվագծվում է նույն տարիքային շրջանում (25–32 տարեկանում) տեղի ունեցող սցենարը՝ սեփական ես–ի որոնումներ կյանքում իր տեղը գտնելու առնչությամբ, մտորումներ կյանքի իմաստի շուրջ, արժեքների վերակառուցում, հրաժարում նախկին կենսակերպից և նոր ուղու ընտրություն (կամ ընտրված ուղիով գնալու վերջնական որոշում): Այն, որ միննույն հարցերը միննույն տարիքային շրջանում են բարձրանում տարբեր ժամանակաշրջաններում ապրած, կյանքի տարբեր ուղիներ ընտրած մարդկանց կենսագրություններում, կարծում ենք, հստակորեն վկայում է այդ հարցերի նաև տարիքային պայմանավորվածության մասին: Նշված հարցերի ակտուալացումը, դրանց պատասխանների տառապալից որոնումները վկայում են ինքնագիտակցության, ինչպես նաև սեփական կյանքի ուղու կոնցեպցիայի մեջ տեղի ունեցող վերակառուցումների մասին: Կենսագրություններից հստակորեն երևում են «արթնացող» ինքնագիտակցության առանձնահատկությունները, այն է՝ սեփական ես–ի՝ որպես հասարակական ակտիվության սուբյեկտի գիտակցումը» [17, էջ 117]:

Շատ հեղինակներ առանձին են ներկայացնում էմպիրիկ հետազոտությունների և ամբողջ ատենախոսության կապակցությամբ կատարված եզրակացությունները, սակայն ավելի տարածված է միայն ընդհանուր եզրակացությունների ներկայացումը: Ընդհանուր եզրակացություններում արտացոլվում են ատենախոսության ինչպես տեսական, այնպես էլ էմպիրիկ հետազոտությունների արդյունքում կատարված ընդհանրացումները: Ըստ որում, եզրակացությունների մեջ պետք է արտացոլվեն հետազոտության խնդիրները, վարկածը, պաշտպանության ներկայացված դրույթները, այսինքն, եզրակացությունների և նշված կետերի միջև ներդաշնակություն, համապատասխանություն պիտի լինի (անշուշտ եզրակացությունները բառացի չպիտի կրկնեն դրանք): Եզրակացությունների մեջ չպիտի լինեն պնդումներ, որոնք

հեղինակի հետազոտություններով չեն հիմնավորվել: Ստորև ներկայացնում ենք ընդհանուր եզրակացությունների նմուշներ տարբեր ատենախոսություններից.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զարգացման ճգնաժամերի ինչպես տեսական, այնպես էլ էմպիրիկ հետազոտություններն էապես դժվարանում էին այն պատճառով, որ տարիքային հոգեբանության մեջ չկային տարիքային շրջանների էությունը, նշանակությունը բացատրող պարբերացումներ: Մարդու առանձին ենթահամակարգերի զարգացման վրա հիմնվող, նկարագրական բնույթի տարիքային շրջաբաժանումները հնարավորություն չէին տալիս հասկանալու, թե որն է զարգացման այս կամ այն շրջանում տեղի ունեցող տարաբնույթ փոփոխությունների իմաստը, դրանցով ինչ խնդիրներ են լուծվում: Արդյունքում՝ անհասկանալի էր մնում, թե երբ է սկսվում և վերջանում տվյալ տարիքը, դրա հիմքում ընկած զարգացման հիմնախնդրի լուծման գործընթացը: Բնականաբար, այս շրջաբաժանումների վրա հիմնվելով՝ հնարավոր չէր հասկանալ նաև անցումային շրջանների, տարիքային ճգնաժամերի էությունը. չէ որ մարդու առանձին ենթահամակարգերի զարգացումը չի արտացոլում ամբողջի զարգացումը, հետևաբար տարիքային անցումները և ճգնաժամերը, որպես ամբողջի զարգացմամբ պայմանավորված օրինաչափ գործընթացներ, հնարավոր չէր բացատրել՝ հիմնվելով այդ պարբերացումների վրա (ասենք՝ հնարավոր չէ ինտելեկտի կամ գործունեության զարգացման փուլերի հիման վրա որոշել ամբողջական անձնավորության զարգացման անցումային փուլերը): Նույնը կարելի է ասել նաև այլ համակարգերի, ասենք, կրթադաստիարակչական համակարգի զարգացման հիման վրա կառուցված պարբերացումների մասին: Դրանք արտացոլում են այդ համակարգերի և ոչ թե մարդու զարգացումը, հետևաբար, վերջինիս օրինաչափությունները չեն կարող բացատրել: Ինչ վերաբերում է այն պարբերացումներին, որոնք չունեն տարիքների դասակարգման համար ընդհանուր հիմքեր, տարբեր սկզբունքներով են կառուցված, ապա դրանք

ընդհանրապես կույր կարելի է համարել, քանի որ ոչ միայն չեն բացատրում տարիքները, այլև վերջիններս միանգամայն պատահական բնութագրերի հիման վրա են որոշվում. ասենք՝ մի դեպքում տարիքը որոշվում է ըստ այն բանի, որ երեխան դպրոց չի գնում (նախադպրոցական տարիք), այլ դեպքում՝ որ մարդը հասուն չէ (դեռահասություն) և այլն:

Այսպիսով, եղած պարբերացումները հնարավորություն չեն տալիս բացատրել մարդու՝ որպես ամբողջական համակարգի, զարգացման տարիքային փուլերը, իսկ առանց դրա, այսինքն, առանց հասկանալու տարիքային փուլերի իմաստը՝ այն, թե այդ փուլերում զարգացումը, որպես գործընթաց, ինչ խնդիրներ է լուծում, ինչ արդյունքի է հանգեցնում, հնարավոր չէ բացատրել, թե երբ է սկսվում և ավարտվում այդ գործընթացը, ինչպիսի անցումներ են կատարվում, որն է տվյալ փուլում զարգացման ճգնաժամի իմաստը, բովանդակությունը, ինչ է տեղի ունենում ճգնաժամի ընթացքում...» [18]:

Մեկ այլ նմուշ.

«...3. Նույնացման հետևանքով սրտանոթային հիվանդությունների առաջացումը նախ և առաջ պայմանավորված է այն հանագամանքով, որ անձը նույնացման օբյեկտ հանդիսացած, նույն հիվանդություն ունեցող մարդուց «վերցնում է» այնպիսի հոգեկան և վարքային բնութագրեր, որոնք նպաստում են սրտանոթային հիվանդությունների առաջացմանը: Մասնավորապես, անձը վերցնում է այսպես կոչված «Ա» տիպի վարքին բնորոշ գծեր, բնավորության այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են աշխատամոլությունը, բարձր պատասխանատվությունը, տազնապայնությունը, մրցակցության ձգտումը և այլն:

4. Սրտանոթային հիվանդությունների՝ մասնավորապես սրտամկանի ինֆարկտի առաջացումը հաճախ պայմանավորված է հիվանդի համար նշանակալի և նույն հիվանդությունն ունեցած մարդու հետ նույնացման հետևանքով, նրա ճակատագիրը կրկնելու ծրագրավորմամբ...» [2, էջ 102-103]:

Եվս մեկ նմուշ.

«3. Տվյալ ընտրանքում խառնվածքային և ատրիբուտիվ բնութագրերի կորելյացիոն կապերը վկայում են անհատականության ձևական-դինամիկ բնութագրերի դերի մեծացում սոմատիկ բարդություններով ընթացող հղիության ընթացքում:

4. Վերհանված անհատական-հոգեբանական առանձնահատկությունները անհրաժեշտ է դիտարկել որպես ռիսկի այնպիսի ցուցիչներ, որոնք նվազեցնում են հղիության վիճակին կնոջ հարմարումը:

5. «Լավատեսության թեստ» մեթոդական ձեռնարկն ունի հուսալի փսիխոմետրիկ ցուցիչներ և կարող է օգտագործվել որպես ախտորոշող գործիք ուղղված հոգեբանական խորհրդատվության ընթացքում անհատի ատրիբուտիվ ոճերի առանձնահատկությունների որոշմանը» [15, էջ 157]:

Նշենք, որ սովորաբար ատենախոսությունը բաղկացած է լինում 3, 4 - 10,12 եզրակացություններից:

Հետազոտության արդյունքում մշակված գործնական կամ մեթոդական առաջարկները: Հոգեբանական ատենախոսություններում երբեմն ներկայացվում են նաև գործնական կամ մեթոդական առաջարկներ (դա, անշուշտ, պարտադիր չի), որոնք բխում են հետազոտության արդյունքներից:

2.10. Ատենախոսական տեքստի շարադրման մեթոդական հարցեր

Որպես կանոն ատենախոսությունը գնահատելիս անդրադառնում են նաև նրա լեզվին և ոճին (անշուշտ, տարբեր գիտություններում ատենախոսության լեզվին և գիտական ոճին ներկայացվող պահանջները տարբեր են): Ըստ որում, հաճախ բավական հաջող ատենախոսությունը կարող է բացասական գնահատական ստանալ զուտ այն պատճառով, որ տեքստը խրթին, անհասկանալի է շարադրված և գնահատողն ուղղակի չի հասկացել, թե ինչ է ուզում ասել հեղինակը: Այս տեսակետից հայցորդը պետք է հատուկ ուշադրություն դարձնի տեքստի

շարադրմանը: Նշենք նաև, որ հաճախ գրագողություն են անում այն մարդիկ, ում գրավոր խոսքը զարգացած չէ, նրանք չեն կարողանում հստակ, հեշտ շարադրել իրենց մտքերը:

Կարելի է առանձնացնել աստենախոսության տեքստի շարադրանքի հետևյալ բնութագրերը. ա/ շարադրման պարզությունը, հստակությունը, մատչելիությունը, տրամաբանականությունն ու տրամաբանական կապակցվածությունը, հակիրճությունը բ/ լեզվական առանձնահատկությունները (նախադասությունների ու պարբերությունների կապակցվածությունը, օտարաբանությունների առկայությունը, կրկնությունները և այլն, հասկացությունների օգտագործման աղեկվատությունը, հապավումների օգտագործումը), գ/ոճական առանձնահատկությունները, դ/ գրագիտությունը:

Որքան ավելի պարզ, մատչելի, հասկանալի է շարադրված գիտական տեքստը, այնքան այն ավելի արժեքավոր կարելի է համարել: Գրեթե բոլոր հանճարեղ հոգեբանները, օրինակ, Ջ. Ֆրոյդը, Լ. Վիգոտսկին, Կ. Յունգը և ուրիշներ հասկանալի են գրել իրենց տեքստերը. պատճառն, ըստ մեզ, այն է, որ եթե հեղինակը լավ է պատկերացնում, թե ինչի մասին է խոսում, ապա նա չի կարող նյութը խրթին շարադրել: Պարզ շարադրանքի հարցում կարևոր դեր է խաղում նաև այն, որ գիտնականը, եթե նոր ասելիք ունի, ձգտում է հնարավորինս հասկանալի լինել ընթերցողին (իհարկե, կան բացառություններ, որոնք պայմանավորված են գիտնականի լեզվական ընդունակություններով, տպավորություն թողնելու ցանկությամբ և այլն):

Տեքստը մատչելի ու պարզ շարադարելու համար նախ անհրաժեշտ է նման դիրքորոշում ունենալ: Շատերը ճիշտ հակառակ դիրքորոշում ունեն` կարծում են, թե որքան խճճված լինի տեքստը, ընթերցողին անհասկանալի հասկացություններով հարուստ, այնքան գիտական կդառնա, իրենք ավելի խելացու տպավորություն կթողնեն (շատերն, իրոք, ազդվում են այս հնարից): Փորձառու գիտնականների մոտ

նման ձեռնածություններն անշուշտ չեն աշխատում և կարող են սուր քննադատության արժանանալ:

Ատենախոսության լեզուն ավելի պարզ դարձնելու համար կառաջարկեինք հետևյալ հնարները. անհրաժեշտ է, որ հայցորդն ուրիշի «աչքերով» ընթերցի իր գրածը, փորձի որոշել, թե ինչպես կհասկանան իրեն: Մյուս հնարը այլ բառերով («այլ կերպ ասած», «այսինքն» արտահայտությունների միջոցով), օրինակներով շարադրելն է: Ատենախոսությունը կարելի է տալ ուրիշին՝ ընթերցելու և գնահատելու մատչելիության տեսանկյունից:

Ատենախոսական տեքստին ներկայացվող մյուս կարևոր պահանջը գիտականությունն է: Շատերը, «գիտականություն» ասելով, հասկանում են տեքստի բարդությունը, խրթինությունը, վերացականությունը, նեղ գիտական հասկացություններով հագեցածությունը (շատերը հատուկ են բարդացնում տեքստը գիտականության տպավորություն թողնելու համար): Մինչդեռ գիտականությունը որևէ կապ չունի բարդության, խրթինության կամ գիտական հասկացությունների առատության հետ: Գիտականությունը, նախ և առաջ, բնութագրվում է տեքստի տրամաբանականությամբ, ռացիոնալությամբ, հակիրճությամբ, կոնկրետությամբ, շարադրման հետևողականությամբ, օբյեկտիվությամբ, հուզականության, սուբյեկտիվության, տենդենցիոզության բացակայությամբ...

Գիտական տեքստում անթույլատրելի են բառերի փոխաբերական իմաստներով օգտագործումը, երկիմաստությունը, հակասական դատողությունները, հասկացությունների ոչ ադեկվատ կիրառումը, գիտական էթիկայի խախտումները, ասենք, այլ գիտնականներին կամ տեսությունները ծաղրելը, անթույլատրելի արտահայտությունների օգտագործումը:

Սկզբնական շրջանում հայցորդները լուրջ խնդիրներ են ունենում տեքստի շարադրման հարցում (հաճախ հենց սա է պատճառ հանդիսանում գրագողության դիմելու): Դժվար է լինում հատկապես մուտքը շարադրելը, մի պարբերությունից մյուսին անցումը, ամփոփումն ու վերջաբանը, գիտափորձերի ներկայացումը և այլն:

Իհարկե, գեղեցիկ, ճիշտ գրավոր խոսքը և գիտական ոճը պայմանավորված են ինչպես ներքին (հնարավոր է նույնիսկ ժառանգական) որոշակի ընդունակություններով, այնպես էլ փորձով: Ստորև կփորձենք ներկայացնել որոշ խորհուրդներ, որոնք, ըստ մեզ, կօգնեն հայցորդին ավելի արագ ու հեշտ յուրացնել աստենախոսական տեքստի, գիտական ոճի շարադրման կարողությունները.

1. Հոդվածը, աստենախոսության գլուխները (իհարկե ոչ էմպիրիկ հետազոտությունների գլուխը), պարագրաֆները ավելի ճիշտ է սկսել ընդհանուր դատողություններով, հիմնախնդրի, դրա պատմության, թեմայի հրատապության, ինչ-որ հեղինակի տեսակետի ներկայացմամբ, ընդհանուր ձևով գլխի, պարբերության վերաբերյալ ինֆորմացիա տալով. ասենք, «Զ. Ֆրոյդն առաջիններից էր, որ...», «Զարգացման ճգնաժամերի հիմնախնդիրը լրջորեն սկսեց հետազոտվել...», «Փոխակերպվող հասարակության մեջ նույնականության հիմնախնդիրը չափազանց հրատապ է, քանի որ...» և այլն:
2. Ուղղակի տրամաբանական շարունակություն չհանդիսացող, իրար հետ այնքան իմաստային կապ չունեցող նախադասություններն իրար կապելուն օգնում են այնպիսի արտահայտություններ ինչպիսիք են՝ «Պետք է ասել», «Ըստ էության», «Այս տեսանկյունից», «Բացի այդ...» և այլն:
3. Նոր պարբերությունները կարելի է սկսել նոր թեմայից, ասենք, վերլուծել լրիվ այլ հեղինակի տեսակետ: Անցումը հաճախ իրականացվում է այսպիսի արտահայտություններով. «Իսկ այժմ անցնենք...», «Հաջորդ հարցը, որին կցանկանայինք անդրադառնալ» և այլն:
4. Եթե վստահ չեք հասկացության իմաստի հարցում, ապա անպայման իմաստը ճշտեք մասնագիտական և բացատրական բառարաններով: Խուսափեք նորամուծություններից, գիտության մեջ դրանք չեն խրախուսվում: Եթե, այնուամենայնիվ, նոր հասկացություններն անխուսափելի են, ապա բացատրեք դրանք, անհրաժեշտության դեպքում բառարան տեղադրեք աստենախոսության մեջ:

5. Գլխի, պարագրաֆի վերջում ցանկալի է ամփոփում տալ: Ամփոփելիս օգտագործվում են այսպիսի արտահայտություններ. «Ամփոփելով շարադրվածը...», «Վերջում նշենք, որ...», «Այսպիսով, կարելի է ասել...» և այլն:
6. Նախադասությունների տրամաբանական կապակցվածությունն ապահովվում է այնպիսի արտահայտություններով, ինչպիսիք են. «Հետևաբար...», «Այսպես...», «Այնուամենայնիվ...» և այլն:
7. Մեփական տեսակետներն ավելի համոզիչ դարձնելու համար օգտագործվում են այսպիսի արտահայտություններ. «Եվ իսկապես...», «Փաստերը վկայում են...» և այլն, լավ են «աշխատում» հռետորական հարցերը:
8. Մեփական տեսակետները ներկայացնելիս օգտագործվում է «մեր» և ոչ թե «իմ» արտահայտությունը. «Մենք գտնում ենք...», «Մեր կարծիքով...» «Ըստ մեզ...»:
9. Գիտական տեքստում, նախադասություններում բառերի կրկնությունները չեն խրախուսվում, դրանցից խուսափելու համար կարելի է օգտագործել հոմանիշ կամ իմաստով մոտ բառեր:
10. Հաճախակի կրկնվող արտահայտությունները կարելի է հապավված ձևով ներկայացնել տեքստում՝ այդ մասին նախապես նշելով. օրինակ՝ կոգնիտիվ դիտմանս՝ ԿԴ:
11. Ատենախոսության մեջ խրախուսվում է գծապատկերների, գրաֆիկների, աղյուսակների, հիստոգրամների, մոդելների ներկայացումը (դրանք պետք է համարակալված ներկայացվեն և վերնագրեր ունենան):

Անդրադառնալով օտարաբանությունների խնդրին՝ պետք է ասել, որ մեզանում հաճախ են հայցորդին դիտողություն անում, թե օգտագործվել են օտար հասկացություններ, այն դեպքում, երբ կան դրանց հայերեն համարժեքները: Ըստ մեզ, գիտական հասկացությունները չի կարելի ընկալել որպես օտարաբանություններ և խուսափել դրանցից: Գիտությունը լեզու է և գիտնականի կարևոր բնութագրերից է այն, որ նա ազատ տիրապետում է այդ լեզվին: Պուրիզմն այս հարցում լուրջ խնդիրներ է հարուցում. գիտության մեջ ընդունված հասկացությունները և դրանց

թարգմանությունները իմաստային նուրբ երանգներով տարբերվում են իրարից (օրինակ՝ կոգնիտիվն ու ճանաչողականը նույն չեն), տվյալ հասկացության արմատով կազմված այլ ընդունված հասկացությունները հաճախ հնարավոր չի լինում թարգմանել (օրինակ՝ «կոգնիտիվիստական» կամ «Էմպաթիկ» հասկացությունները), դժվարություններ են առաջանում ուսանողների համար օտարալեզու գրականություն կարդալիս, հեղինակն ավելորդ ժամանակ և նյարդեր է ծախսում՝ գտնելու հասկացության հայերեն արհեստածին տարբերակը և այլն: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ կարծում ենք սխալ է, որ գիտական հասկացությունները թարգմանվեն և պարտադրվի օգտագործել միայն դրանց թարգմանված տարբերակները: Եթե գիտական հասկացության համարժեքը կա հայերենում (անշուշտ դրանք լրիվ նույնը չեն կարող լինել), ապա պետք է երկու տարբերակն էլ ընդունելի լինեն. դա կհարստացնի տվյալ գիտության հայերեն բառապաշարը և կօգնի տեքստում խուսափել կրկնություններից:

2.11. Ինչպես գրել ատենախոսության ներածությունը

Սովորաբար ատենախոսության ներածությունը գրվում է ատենախոսությունն ավարտելուց հետո, սակայն ավելի ճիշտ է հետազոտության ծրագիրը մշակելիս անդրադառնալ ներածության որոշ կետերի՝ օրինակ հետազոտության արդիականությանը, նպատակին, խնդիրներին, մեթոդաբանական մոտեցումներին և այլն. անշուշտ, հետագայում դրանք կարող են փոփոխվել:

Ներածությունը կատարված աշխատանքի յուրահատուկ ներհայեցողություն, գնահատում և ամփոփում է: Ատենախոսության բնութագրերի, նրա արժեքի մասին ընթերցողները ներածության միջոցով են գաղափար կազմում, այն աշխատանքի մասին առաջին տպավորությունն է, այդ պատճառով էլ շատ ուշադիր պետք է լինել ատենախոսության այս բաժինը գրելիս:

Ավանդաբար ներածության մեջ ներկայացվում են հետևյալ կետերը.

Թեմայի արդիականությունն ու հրատապությունը - Ռուսական ատենախոսություններում սովորաբար այս կետը մեկ՝ «հրատապություն» (актуальность) հասկացությամբ է ներկայացվում, իսկ հայերենում առկա են երկու հասկացություններ՝ «արդիականություն» և «հրատապություն»: Ըստ մեզ, այս հասկացությունները չպիտի ընկալվեն որպես հոմանիշներ, մեկը մյուսի փոխարեն չպիտի օգտագործվեն ատենախոսության մեջ: Արդիականությունը, ըստ մեզ, թեմայի գիտական և կյանքային առումներով տվյալ ժամանակաշրջանին համահունչ լինելն է, այսինքն արտացոլում է գիտության և հասարակության զարգացման ժամանակակից վիճակը: Թեման կարող է և՛ գիտական, և՛ կյանքի առումներով ժամանակավրեպ լինել. օրինակ՝ խորհրդային կարգերի փլուզման շրջանում շատ ատենախոսություններ նվիրված էին կոմերիտական, պիոներական կազմակերպությունների գործունեությանը, սակայն դրանք արդեն ժամանակավրեպ էին: Թեման կարող է գիտական առումով հնացած լինել բավական խորը և բազմակողմանի ուսումնասիրված լինելու հետևանքով (այս դեպքում հնարավոր չի գիտական նորույթ ստեղծել): Մագիստրոսական աշխատանքներում են այդպիսի թեմաներ հաճախ հանդիպում (ասենք, շատ տարածված է «Մանկական վախերը և դրանց հաղթահարման ուղիները» թեման), ինչը մենք սխալ ենք համարում. գիտական առումով մագիստրատուրայում գրեթե նույն պահանջներն են, ինչ ասպիրանտուրայում: Թեմայի հրատապ լինելը նշանակում է, որ այն կարևոր նշանակություն ունի տեսության, պրակտիկայի, գիտության և կյանքի համար: Օրինակ՝ գիտության մեջ տվյալ հիմնախնդիրը չի բարձրացվել կամ չի լուծվել, իսկ կյանքում հետազոտվող հիմնախնդիրը խիստ կարևորություն է ստացել և պահանջում է անհապաղ լուծման ուղիներ գտնել: Ներածության մեջ այս երկու պահերն էլ, նույնիսկ եթե մեկ հասկացության տակ են ներկայացվում, պետք է քննվեն: Հայցորդը (մագիստրոսը, դոկտորանտը) պետք է հիմնավորի, որ ընտրված թեման գիտության ժամանակակից պրոբլեմատիկան է արտացոլում, կապված է հասարակության զարգացման ներկա վիճակի հետ, գիտական առումով կարևոր

նշանակություն ունի, քիչ կամ ընդհանրապես հետազոտված չի, կարող է նպաստել կյանքում առկա կարևոր խնդիրների լուծմանը: Որպես օրինակ, ներկայացնում ենք հատվածներ ատենախոսության ներածության «Հիմնախնդրի հրատապությունը» կետից. «Հոգեկան զարգացման գործընթացում քանակական փոփոխություններից որակականին անցումների, օրինաչափորեն տեղի ունեցող բեկումների, ճգնաժամերի մեջ խտացված ձևով արտացոլվում են զարգացման բուն էությունը, նրա ուղղվածությունն ու առանձնահատկությունները, նորմատիվ հակասություններն ու դժվարությունները: Ինչպես իրավացիորեն նշում է Լ. Վիգոտսկին հոգեկան զարգացման օրինաչափությունների բանալին հենց ճգնաժամերի մեջ պետք է փնտրել: Հայտնի է, որ հաճախ հենց տարիքային ճգնաժամերի շրջաններում են տեղի ունենում մարդու կյանքի ուղու շրջադարձերը, բեկումները, կտրուկ փոփոխությունները, ինչը հրատապ է դարձնում տարիքային ճգնաժամերի հետազոտությունը նաև մարդու կյանքի ուղու օրինաչափությունները հասկանալու համար: Հնուց ի վեր նկատվել է, որ ինչպես հոգեկան, այնպես էլ մարմնական հիվանդությունները հաճախ առաջանում կամ սրվում են տարիքային ճգնաժամերի շրջաններում, նույնիսկ որոշ գիտնականներ այն կարծիքին են, որ անբարեհաջող ընթացքի դեպքում տարիքային ճգնաժամերը կարող են հոգեկան մի շարք հիվանդությունների հանգեցնել (Է. Կրեչմեր, Հ. Ռեմշմիդտ և ուրիշներ), հետևաբար կարելի է ենթադրել, որ տարիքային ճգնաժամերի բազմակողմանի հետազոտությունները կարող են լույս սփռել նաև որոշ հիվանդությունների առաջացման պատճառների, հիվանդագին գործընթացի մեխանիզմների ու ընթացքի առանձնահատկությունների վրա: Տարիքային ճգնաժամերի հիմնախնդիրը կարևորել ու դրան անդրադարձել են այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպիսիք են Լ. Ս. Վիգոտսկին, Կ. Յունգը, Շ. Բյուլերը, Կ. Լևինը, Ա. Ֆրոյդը, Է. Էրիքսոնը, Հ. Վալոնը և շատ ու շատ ուրիշներ: Չնայած դրան, պետք է ասել, որ տարիքային այդ երևույթի մասին դեռևս շատ քիչ բան է հայտնի. ինչպես իրավացիորեն նշում է Ա. Վենգերը. «Չարգացման անցումային շրջանների հետազոտման անհրաժեշտության մասին

Վիզուտակու դրույթն այսօր էլ նույնքան հրատապ է, համարյա նույնքան քիչ իրականացած, որքան հիսուն տարի առաջ»: Դեռևս մշակված չէ տարիքային այս երևույթը բացատրող միասնական կոնցեպցիա, իսկ տերմինաբանական առումով «զարգացման ճգնաժամ» հասկացության շուրջ իսկական խառնաշփոթ է տիրում. տարբեր հեղինակներ միանգամայն տարբեր բովանդակություն են դնում այս հասկացության մեջ: Նշված հանգամանքները նկատելիորեն դժվարացնում են տարիքային ճգնաժամերի էմպիրիկ հետազոտությունները: Վերջիններս շատ քիչ են, իսկ ստացված արդյունքները հաճախ խիստ հակասական են: Հատկապես թույլ են հետազոտված հասուն տարիքի ճգնաժամերը, եղած հետազոտություններն էլ (Գ. Շիհի, Դ. Լևինսոն և ուրիշներ) առավելապես նկարագրական բնույթ ունեն: Գործնական տեսանկյունից տարիքային ճգնաժամերի հիմնախնդիրը կարևորվում է նախ և առաջ մանկավարժության մեջ: Ճգնաժամային շրջաններում մարդու զարգացումը տարբերվում է կայուն շրջաններից, հետևաբար, պահանջում է մանկավարժական այլ մոտեցումներ: ...Ճգնաժամերի հետազոտությունները հնարավորություն կտան մշակել մանկավարժական այնպիսի ստրատեգիաներ, որոնք կմեղմեն այդ շրջանների դժվարությունները, կառավարելի կդարձնեն հոգեկան զարգացման գործընթացներն այդ տարիքներում: Նշենք նաև, որ ճգնաժամային շրջանների մանկավարժության հիմնախնդիրները գրեթե հետազոտված չեն: Տարիքային ճգնաժամերի հիմնախնդիրը գործնական տեսանկյունից խիստ հրատապ է հոգեբուժության, հոգեթերապիայի, հոգեբանական պրակտիկայի ամենատարբեր ոլորտներում: Շատ հաճախ են այս ոլորտների մասնագետները բախվում տարիքային ճգնաժամի երևույթին, վերջինիս դիֆերենցիալ ախտորոշման և հոգեբանական աշխատանքների իրականացման համար տեսական բազայի մշակումը թույլ կտա ավելի արդյունավետ դարձնել ճգնաժամերի ախտորոշմանը, կանխմանը և հաղթահարմանն ուղղված աշխատանքները»[18, էջ 3]:

Հիմնախնդրի էությունը- Այս կետը հաճախ չի ներկայացվում ներածության մեջ, սակայն, ըստ մեզ, այն շատ կարևոր է և՛ հետազոտության իրականացման, և՛ աշխատանքի մասին պատկերացում կազմելու համար: Հիմնախնդրի ձևակերպումը, հստակեցումը հնարավորություն է տալիս հասկանալ, թե արդյոք այն արդիական է, հրատապ է գիտության համար: Որպես օրինակ, ներկայացնենք հատված ատենախոսությունից. « Հիմնախնդրի էությունը, ըստ մեզ, նախ և առաջ, զարգացման այն օրինաչափությունների բացահայտումն է, որոնք սթրեսագեն են, դժվարացնում են զարգացման գործընթացը, հանգեցնում ճգնաժամի: Մյուս կողմից, անհրաժեշտ է պարզել, թե հատկապես ինչ հանգամանքներ են, որ մեր մշակույթում զարգացման տվյալ օրինաչափությունները սթրեսագեն են դարձնում» [18, էջ 3-4]:

Հիմնախնդրի հետազոտվածության մակարդակը- Այստեղ ներկայացվում է, թե հիմնախնդրի որ կողմերն են հետազոտվել, ինչ մակարդակով, և ինչը հետազոտված չէ: Որպես օրինակ, ներկայացնենք հատված ատենախոսությունից. «Սրտանոթային հիվանդությունների առաջացման պատճառների հարցերին անդրադարձել են բազմաթիվ նշանավոր հոգեթերապևտներ՝ Ֆ. Ալեքսանդերը, Փեզեշկյանը, Ա. Լոուենը, Ա. Շուտցենբերգերը և ուրիշներ: Նրանց աշխատություններում ներկայացված են բազմաթիվ հետաքրքիր վարկածներ, որոնք, սակայն, էմպիրիկ հետազոտության չեն ենթարկվել, ինչի հետևանքով դրանք մնում են որպես զուտ ենթադրություններ: Այս հետազոտություններում սրտանոթային հիվանդությունների առաջացման գործում կարևորվում են արտամղված, ճնշված հույզերը, մղումները, մասնավորապես՝ ագրեսիան, թշնամանքը, տագնապը, ինքնահաստատման մղումը (Ֆ. Ալեքսանդեր, Ա. Միտչերլիխ և ուրիշներ): Ենթադրվում է, որ արտամղված, սակայն չլիցքաթափված հույզերն անընդհատ լարվածության մեջ են պահում անձին՝ բացասաբար անդրադառնալով օրգանիզմի վրա: Մյուս կողմից արտամղված բովանդակություններն իրենց լիցքաթափումն են գտնում տարբեր հիվանդությունների, այդ թվում սրտանոթային հիվանդությունների ախտանշանների մեջ (Ա. Միտչերլիխ): Հոգեվերլուծական հոգեսոմատիկ հետազոտություններում

կարևորվում է նաև ներհոգեկան բախումը, որն օրգանական (ասենք, սրտային), խորհրդանշանային ձևով է արտահայտում (Է. Վեյս և ուրիշներ): ... Գիտական հետազոտություններում ավելի մեծ ուշադրություն է դարձվում հույզերի, մասնավորապես ագրեսիայի, տագնապների, դեպրեսիայի բացասական ազդեցության վրա (Թ. Սմիթ և ուրիշներ): Բազմակողմանի փորձարարական հետազոտություններ են իրականացվել սրտանոթային հիվանդությունների առաջացման գործում անձնային բնութագրերի, բնավորության դերի բացահայտման ուղղությամբ (Հ. Այզենկ և ուրիշներ): Բացահայտվել է, այսպես կոչված, «Ա» տիպի վարքը, որը նպաստում է սրտանոթային հիվանդությունների առաջացմանը (Մ. Ֆրիդման և ուրիշներ):

Գիտական-էմպիրիկ ուղղվածություն ունեցող հետազոտություններում սրտանոթային հիվանդությունների առաջացման գործում կարևորվում են նաև սթրեսային իրադարձությունները:

Սրտանոթային հիվանդությունների առաջացման (նաև բուժման) հոգեբանական գործոնների հետազոտության ժամանակակից էտապում կարևոր ենք համարում, նախ և առաջ, հոգեթերապևտ-հետազոտողների կողմից առաջ քաշած վարկածների էմպիրիկ ստուգումը, քանի որ այս ոլորտում էական խզում է նկատվում տեսությունների և դրանք ապացուցող փաստական նյութի միջև...

Մյուս կարևոր և հարաբերականորեն թույլ հետազոտված ոլորտն, ըստ մեզ, սրտանոթային հիվանդությունների առաջացման հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական մեխանիզմներն են: Սովորաբար, հետազոտության են ենթարկվում հիվանդությունների առաջացման պատճառները, ասենք, այն, որ հարազատների կորուստները կամ արտամղումը կարող է հիվանդության պատճառ դառնալ, սակայն հաճախ այն հարցը, թե ինչ մեխանիզմներով է դա տեղի ունենում, մնում է անհասկանալի: Այսպես, հայտնի է, որ նույնացումը կարող է հիվանդության պատճառ հանդիսանալ (այս վարկածն էմպիրիկ ստուգման չի ենթարկվել), սակայն անհասկանալի է, թե ինչ մեխանիզմներով է նույնացումը սրտանոթային

հիվանդությունն առաջացնում: Այս հարցում շատ կարևոր են հատկապես միջգիտական հոգեֆիզիոլոգիական հետազոտությունները, օրինակ ասենք, այն, թե ինչ ֆիզիոլոգիական մեխանիզմներով է բնավորությունը առաջ բերում սրտանոթային հիվանդությունը (ասենք, ապացուցված չէ, որ «Ա» տիպի վարք ունեցողների խոլեստերինի մակարդակն ավելի բարձր է, ինչն էլ նպաստում է հիվանդության առաջացմանը): Միայն հոգեբանական մեխանիզմների հետազոտության միջոցով է հնարավոր մշակել արդյունավետ հոգեթերապևտիկ ստրատեգիա սրտանոթային հիվանդների բուժման գործընթացում:

Հենց նշված տեսանկյուններից ենք մենք անդրադարձել հիմնախնդրին. փորձել ենք պարզել, թե արդյոք էմպիրիկորեն հիմնավորված է այն, որ նույնացումը սրտանոթային հիվանդության առաջացման գործում դեր է խաղում, և եթե՝ այո, ապա ինչ հոգեբանական մեխանիզմներով է դա տեղի ունենում» [2, էջ 5-7]:

Հետազոտության օբյեկտը և առարկան- Ներածության այս կետերն ուղղված են կոմնորոշելու ընթերցողին, թե որ ոլորտին է վերաբերում հետազոտությունը (հետազոտության օբյեկտը), և այդ ոլորտում կոնկրետ ինչն է հետազոտվում (հետազոտության առարկան): Թեմայի, հետազոտության օբյեկտի և առարկայի միջև ներդաշնակություն պիտի լինի: Այս հանգամանքը մենք հատուկ ենք ընդգծում, քանի որ հաճախ ատենախոսություններում խախտվում է այդ ներդաշնակությունը: Օրինակ՝ մի ատենախոսության մեջ թեման է՝ «Հոգեբանական օգնությունը սոցիալական պրոբլեմային վարքի պարագայում», իսկ որպես օբյեկտ է նշված՝ «Հոգեբանական օգնության դիմած թմրամոլների և ակոհոլամոլների անձնային իմաստների ոլորտը»: Այս դեպքում թեման շատ ընդհանուր է ձևակերպվել, ինչի հետևանքով խախտվել է ներդաշնակությունը թեմայի և օբյեկտի միջև: Ներկայացնենք մեկ այլ օրինակ Ա. Նովիկովի աշխատությունից, որի մեջ ցույց է տրվում, որ թեմայի և օբյեկտի աններդաշնակությունը կարող է հարուցել ատենախոսության թվանիշի հետ կապված խնդիրների. «Մի պաշտպանված ատենախոսության թեման է՝ «Կրտսեր դպրոցականների մեջ գեղարվեստական կերպարի մասին պատկերացումների

ձևավորումը արվեստին նվիրված դասարանային և արտադասարանային պարապմունքների ընթացքում»: Թեման ակնհայտ մանկավարժական է, իսկ այդ ատենախոսության հետազոտության օբյեկտը՝ «Գեղարվեստական կերպարի ընկալման գործընթացը» ավելի շուտ հոգեբանության ոլորտին է վերաբերում (ընկալման հոգեբանություն)» [13, էջ 27]:

Ահա և թեմայի, հետազոտության օբյեկտի և առարկայի ներդաշնակության օրինակ. թեման է՝ «Անձի նույնացումների դերը սրտանոթային հիվանդությունների առաջացման գործում», օբյեկտն է՝ «Հոգեբանական գործոնների դերը սրտանոթային հիվանդությունների առաջացման գործում», առարկան է՝ «Սրտային հիվանդություն ունեցող հարազատի հետ նույնացման դերը սրտային հիվանդության առաջացման գործում և այդ գործընթացի հոգեբանական մեխանիզմները» [2, էջ 8]:

Այսպիսով, թեման արտացոլում է այն հիմնախնդիրը, որը հետազոտվել է, օբյեկտը ցույց է տալիս, թե որ ոլորտին է վերաբերում հետազոտությունը, իսկ առարկան ցույց է տալիս, թե այդ ոլորտում կոնկրետ ինչն է հետազոտվում:

Հետազոտության նպատակը- Հետազոտության նպատակը կետով ցույց է տրվում այն արդյունքը, որին ուզում է հասնել հետազոտողն իր հետազոտությամբ: Օրինակ՝ «Հետազոտության նպատակն է պարզել. ա/ թե ինչ դեր է խաղում նույն հիվանդությունն ունեցած հիվանդի համար նշանակալի մարդու հետ նույնականացումը սրտանոթային հիվանդության առաջացման գործում, բ/ ինչ հոգեբանական մեխանիզմներով է նույնականացումը նպաստում սրտանոթային հիվանդությունների առաջացմանը» [2, էջ 7]:

Հետազոտության վարկածը- Այստեղ ներկայացվում են հետազոտության վարկածի դրույթները:

Հետազոտության խնդիրները -ներկայացվում են այն խնդիրները, որոնք լուծվել են հետազոտության ընթացքում: Մովորաբար ներկայացվում են այս կարգի խնդիրներ.

1. Ուսումնասիրել թեմային նվիրված գրականությունը:
2. Մշակել հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերը, մոդելավորել գործընթացը և այլն:
3. Հետազոտության ենթարկել այս կամ այն հարցը, ճշգրտել հասկացությունները և այլն:
4. Մշակել էմպիրիկ հետազոտության ծրագիրը և իրականացնել այն:
5. Մշակել մեթոդական հանձնարարականներ:

Հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերը - Հետազոտության մեթոդաբանական հիմքերը այն համընդհանուր գիտական սկզբունքներն են, որոնցով գիտակցաբար կամ ենթագիտակցաբար ղեկավարվել է հետազոտողը (համակարգայնության, դետերմինիզմի, զարգացման սկզբունքները, ֆունկցիոնալ, ինդրային, անհատական մոտեցումներ և այլն): Այստեղ հետազոտողը յուրահատուկ ձևով ներհայում է սեփական մտածելակերպի, հետազոտության տրամաբանության առանձնահատկությունները, իր հետազոտական դիրքորոշումները, մոտեցումները: Ցավոք, այս կետի իմաստը շատերը հստակ չեն պատկերացնում, ձևական մոտեցում են դրսևորում, մինչդեռ այն չափազանց կարևոր է աշխատանքի փիլիսոփայական հիմքերը, ակունքները հասկանալու համար:

Հետազոտության տեսական հիմքերը այն տեսությունները, գաղափարներն են, որոնք օգնել են հեղինակին մշակել իր հետազոտության տեսական դրույթները:

Հետազոտության մեթոդները- Այս կետում ներկայացվում են այն մեթոդները և մեթոդիկաները, որոնցով իրականացվել են էմպիրիկ հետազոտությունները, ինչպես նաև դրանց արդյունքների վիճակագրական վերլուծության մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը - Հետազոտության գիտական նորույթը այն նոր բացահայտումներն են (նոր երևույթներ, նոր կապեր, օրինաչափություններ, նոր մեկնաբանություններ, մեթոդներ, տեսություններ), որոնք առկա են ատենախոսության մեջ: Ըստ էության, գիտական աստիճանը շնորհվում է, ինչպես

նան գիտնականի մակարդակը որոշվում է նրա ստեղծած գիտական նորություններով: Գիտական նորույթը պետք է հիմնավորվի հայցորդի կողմից, այն պետք է հաստատեն պաշտպանական խորհրդի անդամները: Մեթոդաբանական գրականության մեջ հաճախ է քննվում այն հարցը, թե ինչը կարող է համարվել գիտական նորույթ: Սովորաբար նոր են համարվում այն հետազոտությունները, որոնց մեջ հիմնախնդիրը նախկինում չի հետազոտվել կամ նոր տեսանկյունից է հետազոտվել, հիմնախնդրի նոր լուծում է բացահայտվել, նոր մեթոդ կամ մեթոդիկա է ստեղծվել, հայտնի մեթոդը նոր կիրառություն է ստացել, մշակվել է նոր մոդել, էմպիրիկ ճանապարհով հիմնավորվել է նախկինում առաջ քաշված, սակայն էմպիրիկ հետազոտության չենթարկված տեսակետը [1, 13]: Գիտական նորույթը մագիստրոսական թեզում, թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններում որոշակիորեն իրարից պետք է տարբերվեն, չնայած գործնականում հստակ տարբերություններ ուրվագծված չեն: Ըստ մեզ, անհրաժեշտ է յուրաքանչյուր մակարդակի ատենախոսության համար մշակել գիտական նորույթի աստիճանի ստորին շեմեր, իսկ վերին շեմը գիտական նոր տեսությունը և ուղղությունն է, որին կարող է հասնել նույնիսկ մագիստրոսը: Թերևս, գիտական նորույթի ստորին շեմ կարող է համարվել այն, որ նոր իրողություն բացահայտած հետազոտությունը կրկնվում է՝ ուղղակի ցույց տալու արդյունքների այն տարբերությունները, որոնք ի հայտ են գալիս հետազոտությունը տարբեր մարդկանց կողմից, տարբեր սերունդների հետ անցկացնելիս: Այս հետազոտություններով նաև հաստատվում կամ ժխտվում են օրիգինալ հետազոտության արդյունքները: Ըստ մեզ, նման հետազոտություններ կարելի է իրականացնել մագիստրոսական թեզի շրջանակներում: Այդ կարգի հետազոտությունները և՛ ուսուցողական են, և՛ գիտության համար արժեքավոր՝ դրանք մի կողմից կբացահայտեն հետազոտությունների արդյունքների որոշակի տարբերություններ, որոնց պատճառների հետազոտությունը կտա իսկական գիտական նորույթներ, մյուս

կողմից ուղղակի կհաստատեն կամ կժխտեն նախկինում կատարված հետազոտությունները:

Թեկնածուական ատենախոսության գիտական նորույթի նվազագույն շեմը, ըստ մեզ, կարող է համարվել արդեն բացահայտված իրողության վարիացիաների, նրբությունների հետազոտությունը, տարբեր հանգամանքներում այդ իրողությունների դրսևորման տարբերությունները: Ասենք, «Կոզնիտիվ դիսոնանսի դրսևորման առանձնահատկությունները դեռահասների մեջ»:

Դոկտորական ատենախոսության գիտական նորույթի նվազագույն շեմն ըստ մեզ կարող է լինել կամ նախկինում չհետազոտված հիմնախնդրի հետազոտությունը կամ որևէ տեսության կիրառումը նոր ոլորտում (սրանք գիտական դպրոցի շրջանակներում կատարվող հետազոտություններն են): Օրինակ՝ «Հայ հոգեբանական մտքի զարգացումը հետխորհրդային շրջանում» (չհետազոտված հիմնախնդիր է) կամ «Աշխարհագրական դասընթացի կառուցումը տեսական ընդհանրացումների տեսության սկզբունքներով» (այս կարգի բազմաթիվ դոկտորական ատենախոսություններ են պաշտպանվել խորհրդային շրջանում):

Հետազոտության տեսական նշանակությունը – Այստեղ ներկայացված է, թե ինչ արժեք ունի հետազոտությունը տեսական առումով, ինչ նոր գիտելիքներով է հարստացրել հետազոտությունը գիտության տվյալ ոլորտը: Այս և գիտական նորույթի կետը հաճախ միասին են ներկայացվում:

Հետազոտության գործնական նշանակությունը– Այս կետում ներկայացվում են այն կիրառական ոլորտները, որտեղ կարելի է ներդնել հետազոտության արդյունքները:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը – Այս կետում ներկայացվում են այն ուղիները, որոնցով հետազոտողն ապահովել է հետազոտությունների հավաստիությունը: Սովորաբար այդ ուղիներից են համարվում հետազոտության հիմնավոր տեսական բազան, ադեկվատ հետազոտական մեթոդների ընտրությունը, հետազոտական մեթոդների բազմազանությունը, հետազոտվողների նշանակալի

քանակը, հետազոտությունների արդյունքների բազմակողմանի որակական և քանակական վերլուծությունը, հետազոտությունների արդյունքների փորձաքննությունը:

Հիմնական դրույթները, որոնք ներկայացվում են պաշտպանության- Այս կետում ներկայացվում են հետազոտության ընթացքում բացահայտված այն նոր իրողությունները՝ տեսական դրույթները, էմպիրիկ հետազոտությունների արդյունքները, մեթոդները և այլն, որոնք հեղինակը պատրաստվում է պաշտպանության ընթացքում հիմնավորել, ապացուցել և պաշտպանել: Դրանք հիմնականում վարկածի դրույթներն են (ձևակերպումը վարկածի հետ նույնը չպիտի լինի) կամ հետազոտության ընթացքում բացահայտված այլ նոր իրողություններ: Բնականաբար, պաշտպանության ներկայացվող դրույթները պետք է ներդաշնակ լինեն հետազոտության վարկածին և եզրակացություններին: Այս հանգամանքը նշում ենք, քանի որ շատ ատենախոսություններում այդ ներդաշնակությունը խախտված է լինում (նույնիսկ մենք հանդիպել ենք ատենախոսության, որի նպատակը, վարկածը, վերլուծված գրականությունը, էմպիրիկ հետազոտությունները և եզրակացություններն իրար չեն համապատասխանել):

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը – Այստեղ ներկայացվում են այն գիտական կառույցները, գիտական կոնֆերանսները, որտեղ քննարկվել են ատենախոսության դրույթները, այն դասընթացները, որոնցում ներկայացվել են հետազոտության արդյունքները:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը – Այս կետում ներկայացվում է, թե քանի գլխից, ներածությունից, եզրակացությունից, հավելվածներից է բաղկացած ատենախոսությունը, ինչ քանակությամբ գրականություն, քանի գրաֆիկ, աղյուսակ, հիստոգրամ ունի, ինչպես նաև ատենախոսության էջերի քանակը:

2.12. Ատենախոսական հետազոտության արդյունքների հրատարակումը

Ատենախոսական հետազոտության արդյունքները պետք է հրատարակվեն գիտական գրախոսվող հանդեսներում (ԲՈՂ-ն ունի հանդեսների ցանկ, որտեղ կարող են հրատարակվել հետազոտության արդյունքները), մենագրություններով, գիտական ժողովածուներում (վերջին երկու դեպքերում աշխատությունները պետք է հրատարակության երաշխավորված լինեն գիտական կազմակերպությունների կողմից): Թեկնածուական ատենախոսության դեպքում պահանջվում է առնվազն երեք (մեկն առանց համահեղինակի), իսկ դոկտորականի դեպքում՝ 20 աշխատանք (հինգն առանց համահեղինակի), որոնցից 5-ը՝ արտասահմանում: Հոդվածները կամ մենագրությունները պետք է արտացոլեն ատենախոսության հիմնական դրույթները և հետազոտության արդյունքները: Թեկնածուական ատենախոսության դեպքում լավ կլինի, որ յուրաքանչյուր գլխի բովանդակությունն արտացոլող հոդվածներ հրատարակվեն: Առավել կարևոր են ատենախոսության տեսական դրույթների և էմպիրիկ հետազոտությունների արդյունքների հրատարակումը: Պետք է նկատի ունենալ, որ հանդեսներում, հատկապես՝ արտասահմանյան, հրատարակությունը բավական երկար կարող է ձգվել (որոշ դեպքերում, նույնիսկ մեկ, մեկուկես տարի), իհարկե ԱՊՀ երկրների որոշ գիտական հանդեսներ լրացուցիչ գումարով անհերթ են տպագրում հոդվածները: Հոդվածների հրատարակումը որոշ հանդեսներ գումարով են իրականացնում, իսկ մեծ մասը, հատկապես հեղինակավոր արտասահմանյան գիտական հանդեսները՝ անվճար: Պետք է ասել, իհարկե, որ հեղինակավոր հանդեսներում հրատարակվելը բավական բարդ է (հատկապես սկսնակ հեղինակների համար), պահանջները խիստ են (հոդվածը պետք է բարձր գիտական մակարդակ ունենա, գրված լինի գրագետ, գիտական ոճով, գրագողություն բացահայտելու դեպքում հոդվածը մերժվում է, այդ մասին ինֆորմացիան հաղորդվում է մյուս գիտական հանդեսներին և հեղինակի աշխատանքի վայր. ի դեպ, լավ կլիներ, որ ԲՈՂ-ը գիտական պարբերականները գնահատելիս հաշվի առներ գրագողություն պարունակող հոդվածների առկայությունը հանդեսներում): ԱՊՀ-ում

հրատարակվելու դեպքում պետք է ընտրել այն հանդեսները, որոնք երաշխավորված են տվյալ երկրի ԲՈՀ-ի կողմից:

Շատ ավելի հեշտ է գիտական կոնֆերանսների ժողովածուներում, կոլեկտիվ մենագրություններում նյութեր հրատարակելը: Հայաստանում և արտասահմանում ամեն տարի կազմակերպվում են գիտական կոնֆերանսներ հոգեբանությունից, (դրանց մասին ինֆորմացիան կարելի է գտնել համացանցում. պետք է փնտրել конференции по психологии, conferences in psychology, ասենք 2014, 2015 արտահայտություններով), որոնք բավական արագ հրատարակում են նյութերը (երբեմն անվճար տեղադրելով համացանցում):

ԳԼՈՒԽ 3. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԵՂՄԱԳԻՐԸ ԳՐԵԼՈՒ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

3.1. Ատենախոսության սեղմագիրը

Սեղմագիրը ատենախոսության համառոտ շարադրումն է սովորաբար 20-25 էջի շրջանակներում թեկնածուական ատենախոսության դեպքում և մինչև 40-45 էջ՝ դոկտորական ատենախոսության դեպքում (տե՛ս հավելված 1): Սեղմագրի գրագետ կազմումը չափազանց կարևոր է, քանի որ շատ քիչ մարդիկ են կարդում ատենախոսությունը, իսկ սեղմագիրը կարդում են շատերը, բացի այդ, այն պահվում է տարբեր երկրների գիտական կենտրոնների գրադարաններում:

Սեղմագիրը բաղկացած է տիտղոսաթերթից, որի մեջ նշվում է այն կազմակերպությունը, որտեղ պաշտպանվում է ատենախոսությունը, հեղինակի անուն-ազգանունը, վերնագիրը, գիտության ճյուղը՝ թվանիշով (օր՝ ՀՀ-ում հոգեբանության թվանիշը ԺԹ-ն է, իսկ ճյուղը՝ 00.0+ճյուղի թվանիշը): Հաջորդ էջում գրվում է, թե ով է ատենախոսության ղեկավարը և ընդդիմախոսները, ինչպես նաև առաջատար կազմակերպությունը, այսինքն, այն կազմակերպությունը, որին ուղարկվում է ատենախոսությունը կարծիքի համար: Այս էջում գրվում է նաև, թե երբ տեղի կունենա պաշտպանությունը և որտեղ: Սեղմագիրն ուղարկվում է արտասահման, այդ պատճառով էլ սեղմագրի մեջ համառոտ (երկու էջի սահմաններում) ներկայացվում են ատենախոսության տվյալները անգլերեն և ռուսերեն տարբերակով: Սեղմագրի մեջ՝ վերջում, ներկայացվում են նաև հայցորդի հրատարակած աշխատություններն այն հանդեսներում, որոնք երաշխավորված են բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից:

Սեղմագրի ներածությունը գրեթե նույնն է, ինչ ատենախոսության ներածությունը (շատերն այն որոշ չափով կրճատում են): Ներածությանը հաջորդում է ատենախոսության գլուխների համառոտ շարադրանքը: Սովորաբար սեղմագրի մեջ

գլուխների վերնագրերը նշվում են, իսկ ենթագլուխներինը՝ ոչ միշտ: Գլուխների բովանդակության ներկայացման երկու ձև կա. մի դեպքում ներկայացվում է, թե ինչի մասին է տվյալ գլուխը կամ ենթագլուխը՝ առանց ներկայացնելու կոնկրետ բովանդակությունը (ասենք. «այս ենթագլխում տարբեր տեսությունների համեմատական վերլուծություն է կատարվում, ցույց է տրվում, որ որոշ տեսություններ ավելի են կարևորում...»), մյուս դեպքում ատենախոսությունից ուղղակի հատվածներ են տեղափոխվում սեղմագիր: Սեղմագրի մեջ ներկայացվում են ատենախոսության առավել կարևոր գծապատկերները, հիստոգրամներն ու աղյուսակները (անշուշտ, դրանց ներկայացումը պարտադիր չէ): Սեղմագրի մեջ գրականության ցանկ չի ներկայացվում և հղումներ չեն արվում, ուղղակի ներկայացվում են հեղինակների տվյալները, անհրաժեշտության դեպքում նաև աշխատության հրատարակման տարեթիվը: Գլուխների համառոտ շարադրումից հետո ներկայացվում են ընդհանուր եզրակացությունները: Սեղմագրի անգլերեն և ռուսերեն տարբերակներում համառոտ ներկայացվում են հետազոտության հրատապությունը, նպատակը, գիտական նորույթը (վարկածը պարտադիր չէ), տեսական և գործնական նշանակությունները, ատենախոսության կառուցվածքը և մեկ-երկու նախադասություն յուրաքանչյուր գլխի մասին:

3.2. Ինչպես պատրաստել զեկուցումը

Ատենախոսության հրապարակային պաշտպանության նիստում հայցորդի զեկուցումը պաշտպանական գործընթացի ամենակարևոր պահն է: Պետք է կարողանալ մոտ 15 րոպեում (զեկուցումը պետք է շարադրել 10-12 էջի սահմաններում) ունկնդիրներին հասկանալի դարձնել երկարամյա աշխատանքի արդյունք հանդիսացող 100-300 և ավելի էջեր ունեցող ատենախոսությունը:

Եթե սեղմագիրը ատենախոսության հակիրճ շարադրումն է, ապա զեկուցումը սեղմագրի համառոտ ներկայացումը կարելի է համարել: Ըստ որում, զեկուցումը կարող է ներկայացվել ինչպես սեղմագրի կառուցվածքին համապատասխան (աշխատանքի ընդհանուր բնութագիր, գլուխների համառոտ շարադրում, եզրակացություններ), այնպես էլ ավելի ստեղծագործական տարբերակով, ասենք՝ ներկայացնելով հիմնախնդրի արդի վիճակը, վարկածը, վարկածի հիմնավորմանն ու ապացուցմանն ուղղված փաստարկներն ու էմպիրիկ նյութը, եզրակացությունները: Ինչպես և սեղմագրում, այստեղ նույնպես ատենախոսության ներածական մասը գրեթե նույնությամբ, բայց որոշ կրճատումներով ներկայացվում է: Հաջորդ քայլը ատենախոսության բովանդակության ներկայացումն է: Առավել տարածված է գլուխների բովանդակության համառոտ ներկայացնելը. ըստ որում, յուրաքանչյուր գլուխ ունի ներկայացման իր առանձնահատկությունները: Առաջին գլուխը ներկայացնելիս պետք է համառոտ ուրվագծել հիմնախնդրի ժամանակակից վիճակը և շեշտադրել այն հարցերը, որոնք հետազոտված չեն կամ ադոտ են հետազոտված, վիճելի են և կարիք ունեն ավելի մանրամասն հետազոտությունների:

Երկրորդ գլխին անդրադառնալիս (մենք անշուշտ պայմանական ենք գլուխներին վերագրում բովանդակային ուղղվածություն, միայն առաջին գլուխն է հիմնականում նվիրված լինում գրականության վերլուծությանը, իսկ երկրորդ և հաջորդ գլուխների բովանդակությունը հեղինակն ինքն է որոշում. գլուխներին բովանդակային ուղղվածության վերագրումը նպատակ ունի ցույց տալու

ատենախոսական հետազոտության տրամաբանական հաջորդականությունը) համառոտ ներկայացվում են հետազոտության տեսական հիմքերը, վարկածը, վարկածի առաջադրման տրամաբանությունը, այն փաստարկները, որոնք հիմնավորում են հիմնախնդրի լուծման հեղինակի առաջարկած տարբերակը և այլն: Էմպիրիկ նյութը ներկայացնելիս պետք է անպայման անդրադառնալ հետազոտության փուլերին, մեթոդներին, մանրամասն ներկայացնել արդյունքները, դրանց վերլուծություն կատարել: Ժամանակը խնայելու համար հետազոտության եզրակացությունները բաժանվում են պաշտպանական խորհրդի անդամներին և չեն ընթերցվում: Հավելված 5-ում ներկայացված է ատենախոսության պաշտպանության ելույթի նմուշ, որը կառուցված է ոչ թե գլուխների բովանդակության ներկայացմամբ, այլ ատենախոսական հետազոտության տրամաբանական կառուցվածքի հիման վրա:

Ատենախոսության ներկայացումը սլայդներով Microsoft Office PowerPoint ծրագրով:

Ատենախոսությունը պատկերավոր և ինֆորմացիան համակարգված ներկայացնելու համար սլայդներ են կազմվում և ցուցադրվում պրոյեկտորով: Սլայդները պետք է կազմել հնարավորինս պատկերավոր և համառոտ, պետք է ձգտել ինֆորմացիան ներկայացնել կետերով՝ համակարգված: Չնայած ատենախոսության հեղինակն ինքն է որոշում՝ սլայդներում ինչ ներկայացնել և ինչպես, այնուամենայնիվ փորձենք որոշ խորհուրդներ տալ: Նախ, սլայդները պետք է համապատասխանեն զեկուցմանը: Ատենախոսության ներածական մասը սովորաբար ներկայացվում է ամբողջությամբ, սակայն կետերով (ասենք, արդիականությունը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը և մյուս կետերը նպատակահարմար է ներկայացնել հստակ, կետերով): Նպատակահարմար է ատենախոսության բովանդակությունը, ասենք՝ գրականության վերլուծության արդյունքները, հետազոտության տեսական դրույթները նույնպես կետերով ներկայացնել, այսինքն բովանդակությունը բաժանել ինֆորմացիոն միավորների: Էմպիրիկ հետազոտությունները սլայդներում նույնպես ներկայացվում են կետերով, նաև՝

պատկերավոր, այսինքն գրաֆիկները, հիստոգրամները, աղյուսակները սլայդներում ներկայացվում են:

3.3. Պաշտպանությանը պատրաստվելու հետ կապված խորհուրդներ

Հայցորդները թերևս ամենաշատը վախենում են ընդդիմախոսների քննադատությունից (ընդդիմախոսի կարծիքի գնահատման Ս. Խուդոյանի մշակած չափանիշները տե՛ս հավելված 6-ում), պաշտպանության ընթացքում շփոթվելուց, անսպասելի հարցերից, որոնք կարող են շփոթեցնել նրան, փչացնել պաշտպանության տպավորությունը: Ընդդիմախոսի դիտողություններին պատասխանելու համար բավականաչափ ժամանակ է տրվում (10 օր և ավելին), այնպես որ կարելի է լավ պատրաստվել, պատասխանների հետ կապված խորհուրդներ հարցնել մասնագետներից: Նույնիսկ պետք չէ հուսահատվել այն դեպքում, երբ կարծիքը բացասական է. ուղղակի այս դեպքում պետք է էլ ավելի հիմնավոր պատրաստվել և ամենայն հարգանքով, առանց հուզական զեղումների պատասխանել դիտողություններին: Կոմպետենտ պաշտպանական խորհուրդը ադեկվատ կգնահատի աշխատանքը, իսկ ԲՈՀ-ի համար դա նշան կլինի, որ իսկական պաշտպանություն է տեղի ունեցել և հայցորդն արժանի է հավակնած գիտական աստիճանին:

Ինչ վերաբերում է անսպասելի հարցերին, ապա ատենախոսության քննարկումների ընթացքում հայցորդը սովորում է ելույթ ունենալ, հանպատրաստից պատասխանել հարցերին, սակայն պետք է ասել, որ հաճախ բուն պաշտպանության ընթացքում տրվող հարցերը ոչ թե ինչ-որ բան ճշգրտելու, այլ իսկապես հայցորդին շփոթեցնելու, քննադատելու, սեփական կոմպետենտությունը ցուցադրելու համար են տրվում և հայցորդի տազնապներն իզուր չեն: Չափազանց կարևոր է պաշտպանությանը լավ պատրաստվել: Կարելի է առաջարկել պաշտպանությանը պատրաստվելու հետևյալ խորհուրդները. ա/ մասնակցել ուրիշների

ատենախոսությունների պաշտպանությանը, բ/ մտովի պատկերացնել ամբողջ պաշտպանական գործընթացը, գ/ անընդհատ մտածել այն մասին, թե ինչպիսի հարցեր կարող են տալ պաշտպանության ընթացքում, գրառել այդ հարցերը և պատասխանել դրանց, դ/ փորձնական պաշտպանություններ կազմակերպել, խնդրել ուրիշներին, որ հարցեր ուղղեն ատենախոսության վերաբերյալ, է/ հարցերը հաճախ լինում են վերացական, ոչ նեղ մասնագիտական (խորհրդի անդամներից շատերը հնարավոր է տվյալ թեմայի հետ որևէ առնչություն ունեցած չլինեն), հռետորական, հուզական. նման հարցերին պատասխանելու համար պետք է մանրամասն ճշգրտել, կոնկրետացնել հարցը և պատասխանել միայն այն ժամանակ, երբ լրիվ հասկանալի է հարցը, գ/ հարցերին միշտ պետք է պատասխանել հարգալից՝ հարցի համար շնորհակալություն հայտնելով, է/ եթե չի ստացվում հարցին պատասխանել, ավելի ճիշտ է ոչ թե հրաժարվել պատասխանից, այլ ինչ-որ բան այնուամենայնիվ ասել, թեկուզ այդ պատասխանը վատը լինի կամ այնքան էլ կապ չունենա հարցի հետ:

Գրականություն

1. Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Երևան, 2011թ.179 էջ:
2. Դոլաթխահ Ա. Անձի նույնացումների դերը սրտանոթային հիվանդությունների առաջացման գործում: Ատենախոսություն «Բժշկական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբ. գիտ. թեկնածուի հայցման, Եր. 2012, 131 էջ:
3. Белановский С.А. Глубокое интервью: Учебное пособие.. - М.: Никколо-Медиа, 2001 - 320 С.
4. Богданова О.Ю., Марковская И.М. Качественные методы социально-психологических исследований 2001. Учебное пособие. - Челябинск: Изд-во ЮУрГУ, 2001.106 с.
5. Дружинин В.Н.. Структура и логика психологического исследования. Москва. Институт психологии РАН. 1994. – 320 с.
6. Дружинин В.Н. Экспериментальная психология: Учебное пособие — М.: ИНФРА-М, 1997. -- 256 с.
7. Зинченко В. П., Мамардашвили М. К. Проблема объективного метода в психологии // Вопросы философии 1977, N 7, с. 109-125.
8. Казак К. руководства для аспирантов <http://www.aspirantura.spb.ru/rukvo/>
9. Корнилова Т. В. Экспериментальная психология. Теория и методы: Учебник для вузов. М.: Аспект Пресс, 2002.- 381 с.
10. Мельникова Н.Н. Экспериментальная психология: Учебное пособие. Челябинск: Изд-во ЮУрГУ, 2002. - 47 с.
11. Новиков А.М. Докторская диссертация?: Пособие для докторантов и соискателей ученой степени доктора наук. - 3-е изд. - М.: Издательство «Эгвес», 2003. - 120 с.
12. Новиков А.М. Научно-экспериментальная работа в образовательном учреждении (деловые советы). М.: Ассоциация «Профессиональное образование», 1998. – 134 с.
13. Новиков А.М. Как работать над диссертацией: Пособие для начинающего педагога-исследователя . 4-е изд. – М.: Издательство «Эгвес», 2003. – 104 с.

14. Рыбаков В. А. Покрышкин А. Л. Совместима ли психология и естественнонаучная парадигма. Томск, "Дельтаплан" 2005.- 30 с.
15. Рудина Л. М. Индивидуально-психологические особенности адаптивности женщин к состоянию беременности. Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук. М.: РАН, 2003. – 198 с.
16. Рузавин Г.И. - Методы научного исследования. М. — 1975.- 238 с.
17. Худоян С. С. Онтогенетические перестройки самосознания и кризисы развития личности. Ер. Зангак-97, 2010.- 232 с.
18. Худоян С. С. Проблема возрастных кризисов развития личности. Автореф. диссертации на соискание ученой степени доктора психологических наук по специальности 19.00.01 - «Теория и история психологии», Ер. 2010.- 42 с.
19. Ярская В.Н. Методология диссертационного исследования: Методическое пособие. - Саратов: ПМУЦ, 2002. - 189 с.
20. Denzin N. and Lincoln Y. (Eds.) (2000). Handbook of Qualitative Research. London: Sage Publication Inc. 680 p.
21. Quantitative research. http://en.wikipedia.org/wiki/Quantitative_research
22. Shadish, W. R. (1995). Philosophy of science and the quantitative-qualitative debates: Thirteen common errors. Evaluation and Program Planning, 18 (1), 63–75.
23. <http://makersidiom.wordpress.com/2012/03/14/qualitative-psychology-some-difficulties-in-quantitative-methods/>
24. http://www.boh.am/files/jurist/20101228_180541_am_gitast_kanonakarg.pdf
25. http://otherreferats.allbest.ru/marketing/00154733_0.html

Հավելված 1

Հատված ԲՈՀ-ի կանոնակարգից

13. Ատենախոսությունը պետք է ունենա համառոտ շարադրանք՝ սեղմագիր: Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը: Սեղմագիրը տպագրվում է մասնագիտական խորհրդի թույլտվությամբ՝ թեկնածուի գիտական աստիճանի համար՝ մինչև մեկ, դոկտորի գիտական աստիճանի համար՝ երկու տպագրական մամուլ ծավալով: Հասարակական գիտությունների գծով ատենախոսության սեղմագրի ծավալը կարելի է ավելացնել 30 տոկոսով: Սեղմագիրը տպագրվում է մասնագիտական խորհրդի սահմանած քանակով՝ առնվազն 50 օրինակ: Գիտական զեկուցման ձևով ատենախոսության համար սեղմագիր չի կազմվում, այն ընդունվում է որպես սեղմագիր:

14. Ատենախոսությունը և սեղմագիրը ներկայացվում են հայերեն: Մասնագիտական խորհրդի համաձայնությամբ դրանք կարելի է ներկայացնել այլ լեզվով: Սեղմագրի վերջում տրվում է ռուսերեն ամփոփագիր (հայերեն ամփոփագիր, եթե սեղմագիրն այլ լեզվով է): Անհրաժեշտության դեպքում, մասնագիտական խորհրդի որոշմամբ, սեղմագրի տպաքանակի մի մասը կարող է լինել նաև այլ լեզվով:

ՍԵՂՄԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Սեղմագիրը պետք է ունենա սահմանված ձևերի կազմ և 2-րդ էջ /հավելված 1/: Սեղմագրում՝ այսինքն աշխատանքի համառոտ բնութագրում, պետք է հիմնավորվի՝ ատենախոսության թեմայի արդիականությունը, նրա նպատակն ու խնդիրները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը: Ապա պետք է ներկայացվի ատենախոսության գլուխների խիստ համառոտ բովանդակությունը, ատենախոսության հիմնական դրույթները, անհրաժեշտության դեպքում՝ փորձարկման մասին տեղեկություններով, եզրակացություն, անհրաժեշտության

դեպքում՝ գիտագործնական երաշխավորություններ կամ առաջարկներ, և
ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ
/անվանումները՝ բնօրինակի լեզվով, նշելով՝ հեղինակի (ների) ազգանունը և անվան
առաջին տառը, հրատարակության տվյալները և էջերը/:

Սեղմագրի վերջում տրվում են ռուսերեն և անգլերեն ամփոփագրեր՝
յուրաքանչյուր լեզվով երկու էջ /հայերեն և անգլերեն, եթե սեղմագիրը ռուսերեն է,
հայերեն և ռուսերեն, եթե սեղմագիրն այլ լեզվով է/:

Սեղմագիրը տպագրվում է գրամեքենայով կամ համակարգչով /9
տառաչափով/, A5 /148x210 մմ/ չափի սպիտակ թղթի վրա, թեկնածուական
ատենախոսության սեղմագիրը 1 տպագրական մամուլ, դոկտորականինը՝ 2
տպագրական մամուլ ծավալով: Հասարակական գիտությունների համար նշված
ծավալները կարող են ավելանալ 30 %-ի չափով:

Սեղմագրում բանաձևերը, աղյուսակները, նկարները, գծապատկերները
ձևավորվում են այնպես, ինչպես ատենախոսության մեջ:

Սեղմագրի բնօրինակի վրա ստորագրում են՝ մասնագիտական խորհրդի
գիտքարտուղարը /2-րդ էջում/ և հայցորդը /վերջին էջում/:

ՍԵՂՄԱԳՐԻ ԿԱԶՄԸ

Հիմնարկի անվանումը, որտեղ գործում է
ատենախոսությունը պաշտպանության ընդունած
մասնագիտական խորհուրդը

Ազգանուն, անուն, հայրանուն

Ատենախոսության անվանումը

_____ մասնագիտությամբ

_____ գիտությունների
դոկտորի «թեկնածուի» գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր

քաղաք-տարեթիվ

ՄԵՂՄԱԳՐԻ 2-ԸԴ ԷՋԸ

Ատենախոսության թեման հաստատվել է _____
հիմնարկի անվանումը

Գիտական ղեկավար (խորհրդատու) _____
գիտական աստիճանը, ա.ա.հ.

Պաշտոնական ընդդիմախոսներ _____
գիտական աստիճանը, ա.ա.հ.

Առաջատար կազմակերպություն _____
անվանումը

Պաշտպանությունը կայանալու է _____
Ամսաթիվ, ժամ

հիմնարկի անվանումը (հասցեն)

_____ մասնագիտական խորհրդում
խորհրդի անվանումը և համարը

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ _____
գրադարանում

Սեղմագիրն առաքված է _____
ամսաթիվ

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար _____
«ստորագրություն» «ա.ա.»

Հավելված 2

Գրագողության բնութագրերը

1. Գրագողությունը հաստատված կարելի է համարել, եթե հեղինակի կողմից որպես իրենը ներկայացվող գաղափարը կամ տեքստը հրատարակվել է այլ հեղինակի կողմից ավելի վաղ:
2. Գրագողություն է համարվում, եթե տեքստը ուրիշ հեղինակից բառացի արտագրված է կամ թարգմանված՝ առանց չակերտների մեջ առնվելու, տեքստի աղբյուրը և էջերը նշելու:
3. Մեթոդական ձեռնարկների, դասագրքերի, հանրամատչելի գրքերի կամ հոդվածների մեջ բառացի արտագրություններն առանց հղումների նույնպես գրագողություն են:

4. Առանց չակերտների կարող է ներկայացվել այն տեքստը, որի մեջ մեջբերողը փոփոխություններ է արել, բայց միտքը պահպանել է: Այս դեպքում նշվում են միայն աղբյուրը և էջերը; Էջերը կարող են չնշվել, եթե միայն հեղինակի գաղափարներն են ներկայացվում:
5. Գաղափարի գրագողությունը կարող է հաստատվել միայն, եթե տվյալ գաղափարը գիտական նորություն և օրիգինալություն է պարունակում, ապացուցվում է, որ հեղինակը ծանոթ էր տվյալ աշխատանքին:
6. Հաճախ գրագողությունը քողարկվում է տեքստի վերջում նշված աղբյուրներով, որոնց մեջ նշված չէ այն աղբյուրը, որից գրագողություն է կատարվել: Սա լինում է գրականության վերլուծության մեջ, սովորաբար ուրիշի վերլուծությունն է վերցվում, բայց նշվում են վերլուծված հեղինակների աշխատանքները:
7. Գրագողությունը հաճախ քողարկում են՝ արտագրված մի քանի պարբերություններից կամ նախադասություններից վերջինի մոտ աղբյուրը նշելով, առանց նախորդ նախադասությունները չակերտների մեջ առնելու:

ՀՀ քրեական օրենսգիրք

ՀՈԴՎԱԾ 158. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

1. Հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, ինչպես նաև առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը շահույթ ստանալու նպատակով մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների վրա ամրագրելը, տարածելը և (կամ) վաճառելը՝ եթե այդ արարքը կատարվել է զգալի չափերով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) պաշտպանիչ տեխնիկական միջոցների շրջանցմամբ,
- 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) մեկից ավելի անգամ,
- 4) ստացված դրոշմապիտակները դրանց օգտագործման համար չնախատեսված ստեղծագործությունների կրիչների վրա փակցնելով,
- 5) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երկուհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածում նախատեսված արարքը համարվում է կատարված զգալի չափերով, եթե այդ մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների օրինակների հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքի օբյեկտն օգտագործելու թույլտվության իրավունքի (լիցենզիայի) ընդհանուր արժեքը (գինը), անկախ իրավատերերից, հեղինակի կամ այլ իրավատիրոջ մոտ նշված գներով (իսկ չնշված լինելու դեպքում՝ շուկայական մանրածախ գներով) կազմում է հանցագործության պահին գործող սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև երկուհարյուրապատիկը:

4. Սույն հոդվածում նախատեսված արարքը համարվում է կատարված խոշոր չափերով, եթե այդ մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների օրինակների հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքի օբյեկտն օգտագործելու թույլտվության իրավունքի (լիցենզիայի) ընդհանուր արժեքը (գինը), անկախ իրավատերերից, հեղինակի կամ այլ իրավատիրոջ մոտ նշված գներով (իսկ չնշված լինելու դեպքում՝ շուկայական մանրածախ գներով) գերազանցում է հանցագործության պահին գործող սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը:

(158-րդ հոդվածը փոփ. 01.06.06թ. ՀՕ-119-Ն օրենք, 15.06.06 ՀՕ-144-Ն. լրացվ. 26.10.10 ՀՕ-147-Ն, փոփոխվ. է 19.03.12թ. ՀՕ-45-Ն օրենք)

Հավելված 3

Ատենախոսական հետազոտության գնահատման չափանիշները

1. Ատենախոսության վերնագիրը լիարժեքորեն համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:
2. Հիմնախնդիրը ձևակերպված է հստակ և կոնկրետ:
3. Հիմնավորվում է, որ հետազոտվող խնդիրը հետազոտված չէ կամ տվյալ տեսանկյունից հետազոտված չէ:
4. Հետազոտության վարկածը գիտական նորություն է պարունակում: Վարկածի գաղափարը որևէ տեղ ներկայացված չէ, ասենք, չկա գիտական գրականության մեջ կամ համացանցում ներկայացված գիտական նյութերում:
- 4ա. Հետազոտության վարկածը մասնավոր խնդրի լուծում է հանդիսանում (թեկնածուական ատենախոսությունների համար):
- 4բ. Հետազոտության վարկածը ընդհանուր խնդրի լուծում է և կարող է տարածվել մի շարք մասնավոր դեպքերի վրա (դոկտորական ատենախոսությունների համար):
5. Եթե հետազոտությունը վարկած չունի, ապա թեման նախկինում չի հետազոտվել կամ հեղինակը միանգամայն նոր տեսանկյունից է այն հետազոտել:
6. Եթե գտնում եք, որ վարկածը նոր չէ, կարող եք նշել հեղինակներ (աղբյուրներ), որոնց մոտ կան նշված գաղափարները:
7. Հիմնախնդիրը, հետազոտության նպատակը, խնդիրները, վարկածը, պաշտպանության ներկայացվող դրույթները և եզրակացությունները տրամաբանորեն կապված են իրար հետ:
8. Հետազոտության արդյունքները հաստատում են պաշտպանության ներկայացվող դրույթները:

9. Վերլուծված գրականությունը համապատասխանում է հիմնախնդրին և արտացոլում է հիմնախնդրի ժամանակակից վիճակը:
10. Հետազոտության մեթոդները համապատասխանում են թեմային և հնարավորություն են տալիս ապացուցել վարկածը:
11. Էմպիրիկ հետազոտությունները շեղումներ չեն պարունակում և ապացուցում են վարկածը:
12. Էմպիրիկ հետազոտությունն իրականացված և ներկայացված է պատշաճ գիտական մակարդակով, էմպիրիկ հետազոտությունների արդյունքները գիտական վերլուծության են ենթարկված:
13. Գնահատեք ատենախոսության լեզուն և ոճը: Նյութը հասկանալի^օ, թե^օ խրթին է շարադրված, ոճը գիտակա^օն է, շարադրանքը գրագե^օտ է:
14. Ատենախոսության մեջ կա^օն արդյոք թեմայի հետ չառնչվող նյութեր: Կա^օ արդյոք տպավորություն, որ արհեստականորեն է ապահովվել ատենախոսության էջաքանակը:
15. Աշխատանքում կա^օն գրագողության դեպքեր (մտքեր, բառացի արտագրություններ, հետազոտական ծրագրի, հետազոտության արդյունքների և այլն): Եթե կան, ապա խնդրում ենք նշել աղբյուրները:
16. Որո^օնք են հետազոտության նոր բացահայտումները, որոնք մինչ այդ չեն եղել գիտության մեջ:

Հավելված 4

Հատված ԲՈՀ-ի կանոնակարգից

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ատենախոսությունը պետք է ունենա հետևյալ բաղադրիչ մասերը՝ սահմանված ձևի տիտղոսաթերթ, բովանդակություն, առաջաբան կամ ներածություն՝ ներառելով ատենախոսության հիմնական դրույթները, տեքստ՝ առանձին գլուխներով, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ,

անհրաժեշտության դեպքում՝ գիտագործնական երաշխավորություններ կամ առաջարկներ, հավելված, նշանակումների, հապավումների, միավորների և տերմինների ցանկ:

Ատենախոսությունը տպագրվում է համակարգիչով /12 տառաչափով/,

A4 /210x297 մմ/ չափի սպիտակ թղթի մի կողմի վրա, էջում՝ 28-30 տող: Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ:

Ատենախոսության գլուխների անվանումները պետք է լինեն մեծատառերով և սկսվեն նոր էջից:

Ատենախոսության բոլոր էջերը, ներառյալ լուսաբանող նկարները, աղյուսակները, հավելվածը և այլն, համարակալվում են: Տիտղոսաթերթը համարվում է առաջին էջ, որի վրա համարը չի դրվում:

Ատենախոսության յուրաքանչյուր օրինակի տիտղոսաթերթին հայցորդը ստորագրում է:

Թեկնածուական ատենախոսության համար ընդունելի է 100-150 էջ, իսկ դոկտորական ատենախոսության համար՝ 200-300 էջ ծավալը՝ առանց հավելվածների: Հասարակական գիտությունների համար նշված ծավալները կարող են ավելանալ 30 %-ի չափով, որոշ տեսական բնույթի ատենախոսություններ, խորհրդի միջնորդությամբ և ԲՈՀ-ի համաձայնությամբ, կարող են ունենալ ավելի փոքր ծավալ:

Բնական և տեխնիկական գիտությունների համար առաջաբանը կարող է լինել 3-5, իսկ հասարակական գիտությունների համար՝ 10-15 էջերի սահմաններում:

Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները տրվում են ներքևում կամ վերևում: Լուսանկարները կարելի է ստանձել թղթի վրա: Աղյուսակները կարելի է տեղադրել ուղղաձիգ, հորիզոնական դիրքով, յուրաքանչյուր աղյուսակ պետք է համարակալել վերևի աջ անկյունում արաբական թվերով, որի տակ գրվում է անվանումը: Եթե մեկ թերթի վրա աղյուսակը չի տեղավորվում, պետք է շարունակել մյուս թերթի վրա՝ նշելով, որ

շարունակությունն է: Աղյուսակի սյունակներում ազատ տեղեր չպետք է մնան դատարկ, պետք է դնել գծիկ կամ գրել «չկա»/«չի որոշված»/:

Գրականության ցանկը կարելի է ներկայացնել կամ այբբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում, կամ համարակալված ըստ աստենախոսության մասերի հղումների: Ցանկում աղբյուրները պետք է ընդգրկեն՝ հեղինակի/ների/ ազգանունը և անվան առաջին տառը, նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները /տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը/: Տեղեկատվական պաշտոնական, այդ թվում՝ էլեկտրոնային աղբյուրների, համակարգչային ծրագրերի, հաշվետվությունների, հրահանգների, հեղինակային իրավունքի արտոնագրերի, պատենտների դեպքում ներկայացվում են լրիվ տվյալները:

Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով:

Մեծ ծավալով հավելվածը կարող է կազմվել առանձին:

Աստենախոսության էջերում ուղղումներ չեն թույլատրվում:

Հավելված 5

ԱՆՁԻ ՉԱՐԳԱՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՏԱՐԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ելույթ

Մեծարգո նախագահ, հարգարժան խորհրդի անդամներ, ընդդիմախոսներ, հյուրեր, շնորհակալ եմ, որ ներկա եք գտնվում իմ աստենախոսության պաշտպանությանը: Թույլ տվեք ներկայացնել իմ՝ «ԱՆՁԻ ՉԱՐԳԱՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՏԱՐԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ» թեմայով դոկտորական աստենախոսության համառոտ բնութագիրը:

Ընդհանուր տվյալներ

Թեմայի հրատապությունը սովորաբար որոշվում է 3 հանգամանքով՝ հիմնախնդրի տեսական և կիրառական կարևորությամբ, ժամանակի պահանջներով, հետազոտվածության մակարդակով: Կարծում եմ՝ ընտրված թեման այս երեք առումներով էլ հրատապ է: Հիմնախնդրի կարևորությունը հիմնավորել է դեռևս Լև Վիգոտսկին՝ գտնելով որ զարգացման օրինաչափությունների բանալին հենց ճգնաժամերի մեջ պետք է փնտրել: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ ճգնաժամերը կարևոր դեր են խաղում անձի ձևավորման, մարդու կյանքի ուղու շրջադարձերի, ինչպես նաև հոգեկան հիվանդությունների առաջացման գործում: Թեման հրատապ կարելի է համարել նաև այն պատճառով, որ այն իրականացվել է ճգնաժամային հասարակության մեջ. բացառիկ հնարավորություն է ստեղծվել հետազոտել ճգնաժամային սերնդի զարգացման ճգնաժամերը: Ճգնաժամերին անդրադարձել են բազմաթիվ գիտնականներ, սակայն ինչպես նշում է ռուս գիտնական Վենգերը. «Զարգացման անցումային շրջանների հետազոտման անհրաժեշտության մասին Վիգոտսկու դրույթն այսօր էլ նույնքան հրատապ է, որքան Վիգոտսկու ժամանակաշրջանում»: Մասնավորապես բավարար չափով հետազոտված չեն հետևյալ հարցերը.

1. Ճգնաժամերի պատճառ հանդիսացող զարգացման օրինաչափությունները չափազանց աղոտ են հետազոտված, ուղղակի անքննադատ և առանց էմպիրիկ հետազոտությունների ընդունվել է այն տեսակետը, թե ճգնաժամերի պատճառը տարիքային մի փուլից մյուսին անցումն է:
2. Մարդու կյանքի ողջ ցիկլի (մանկություն, դեռահասություն, հասուն տարիք, ծերություն) ճգնաժամերը միավորող տեսական և էմպիրիկ հետազոտություններ գրեթե չկան:
3. Տարբերակված չեն զարգացման ճգնաժամերի տեսակները:

4. Հետազոտման կարիք ունի անձի ձևավորման և նորմալ ու հիվանդագին զարգացման գործում զարգացման ճգնաժամերի դերի հիմնախնդիրը: Այսօր ավելի ու ավելի է հաստատվում այն տեսակետը, որ հոգեկան հիվանդություններն անձի հիվանդագին զարգացումներ են, և կարելի է ենթադրել, որ ճգնաժամերը որոշակի դեր են խաղում անձի հիվանդագին զարգացման գործում:
5. Կիրառական առումով խիստ հրատապ են և քիչ հետազոտված այնպիսի հարցեր, ինչպիսիք են ճգնաժամերի դիֆերենցիալ ախտորոշման, ճգնաժամերի դեպքում հոգեբանական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև ճգնաժամերի ընթացքի հարցում դաստիարակության դերի և այդ շրջաններում դաստիարակչական ստրատեգիաների հարցերը:

Մեր հետազոտության նպատակն է եղել պարզել զարգացման ճգնաժամերի հիմքում ընկած հոգեբանական օրինաչափությունները:

Հետազոտության առարկան է ինքնագիտակցության վերակառուցումներով պայմանավորված ճգնաժամերը, այսինքն երեք, 12-15, 25- 33 և 55- 65 տարիքային շրջանների ճգնաժամերը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Մարդու օնտոգենեզը ֆունկցիոնալ մոտեցման դիրքերից կարելի է բաժանել 4 հիմնական փուլերի (շրջանների, ցիկլերի)` տեսակային հատկությունների ձևավորման փուլ (Էմբրիոգենեզից մինչև 7-9 տարիքային շրջանը), սեռային ակտիվության սուբյեկտի ձևավորման փուլ (8-22 տարիքային շրջան), սոցիալական ակտիվության սուբյեկտի ձևավորման փուլ (22 տարեկանից մինչև 45 տարիքային շրջանը) և ինքնաիրացման կամ ինքնասպառման փուլ (45-ից մինչև կյանքի վերջը):

Պաշտպանության ներկայացվող դրույթների հաջորդ կետերում ներկայացված են մեր վարկածի կետերը. ժամանակը խնայելու համար հետազոտության վարկածն այլևս չեմ ընթերցի:

2. Գոյություն ունեն տարիքային ճգնաժամերի տեսակներ, որոնցից այսօր վստահորեն կարելի է առանձնացնել երկուսը՝ տարիքային մի ցիկլից մյուսին անցմամբ և ինքնագիտակցության տարիքային վերակառուցումներով պայմանավորված ճգնաժամերը: Անցումայնությամբ պայմանավորված ճգնաժամերն են՝ 7-8, 18-22, 35-45 տարիքային շրջանները: Ինքնագիտակցության տարիքային վերակառուցումներով պայմանավորված ճգնաժամային տարիքներն են՝ 3, 12-15, 25-35 և 55-65 շրջանները:
3. Օնտոգենեզի ընթացքում ինքնագիտակցությունը չորս անգամ որակական վերակառուցում է ապրում, փոխվում է ինքնագիտակցության բովանդակությունը, մարդը սկսում է ընկալել իրեն որպես նոր ակտիվության սուբյեկտ: Այդ վերակառուցումների շրջանները ճգնաժամային են: Կյանքի առաջին ցիկլում՝ մոտ 3 տարեկանի շրջանում, արթնանում է տեսակային ինքնագիտակցությունը: Զարգացման երկրորդ ցիկլում՝ 12-15 տարեկանում, արթնանում է սեռային ինքնագիտակցությունը: Կյանքի երրորդ ցիկլի ընթացքում՝ 25-33 տարեկանում, արթնանում է սեփական ես-ի՝ որպես սոցիալական, այսինքն, ընտանեկան և աշխատանքային ակտիվության սուբյեկտի ինքնագիտակցությունը: Կյանքի վերջին ցիկլում՝ 55-65 տարիքային շրջանում, արթնանում է սեփական ես-ի՝ որպես մահկանացուի ինքնագիտակցությունը:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՑԹԸ

1. Առաջարկվում է մարդու կյանքի փուլերը բացատրող նոր պարբերացում:
2. Տարբերակվում է զարգացման ճգնաժամերի երկու տեսակ, որոնց հիմքում ընկած են զարգացման տարբեր օրինաչափություններ՝ տարիքային անցումներով պայմանավորված ճգնաժամերը և ինքնագիտակցության վերակառուցումներով պայմանավորված ճգնաժամերը:

3. Հիմնավորվում է, որ կյանքի յուրաքանչյուր փուլում ինքնագիտակցության բովանդակությունը փոխվում է՝ 3 տարեկանում արթնանում է տեսակային ինքնագիտակցությունը, 12-15 տարեկանում՝ սեռային, 25-33 տարեկանում մարդը գիտակցում է իրեն որպես ընտանեկան և աշխատանքային ակտիվության սուբյեկտ, 55-65 տարիքային շրջանում անձը սկսում է գիտակցել սեփական անձը որպես մահկանացու:
4. Հիմնավորվում է, որ 3, 12-15, 25-33 և 55-65 տարիքային շրջանների ճգնաժամերը պայմանավորված են ինքնագիտակցության վերակառուցումներով:
5. Առաջարկվում են անձի զարգացման ճգնաժամերի և հոգեկան խանգարումների տարբերակիչ ախտորոշման սկզբունքներ:

Հետազոտության մեթոդները: Վարկածի ապացուցման համար կիրառվել են հիմնականում որակական մեթոդներ՝ հարցում, զրույց, իրավիճակային վերլուծություն, դեպքերի վերլուծություն, կենսագրական մեթոդ, պրոյեկտիվ մեթոդներ: Կիրառել ենք տարիքային հոգեախտաբանության, տարիքային ժողովրդական ծեսերի, ավանդույթների, պատկերացումների վերլուծության մեթոդները: Կիրառվել է մոդելավորված իրավիճակների մեկնաբանման մեթոդը՝ որպես հետազոտության առարկային ադեկվատ և ինֆորմատիվ: Հետազոտությանն ընդհանուր առմամբ մասնակցել է 378 մարդ:

Այլ տվյալներ

Հետազոտությունն իրականացվել է մոտ 15 տարվա ընթացքում «Սթրես» հոգեկան առողջության կենտրոնում, Երևանի մանկապարտեզներում, դպրոցներում, բուհերում: Արդյունքները ներկայացվել են Հոգեբանության 4-րդ Եվրոպական կոնգրեսին (Աթենք, 1995), Հոգեբանության 26-րդ միջազգային կոնգրեսին (Մոնրեալ, 1996), Հոգեբուժության 11-րդ միջազգային կոնգրեսին (Համբուրգ, 1999), Վարքի զարգացման հետազոտությունների միջազգային միության 17-րդ տարեկան

հանդիպմանը (Օտտավա, 2002) և բազմաթիվ այլ գիտաժողովների: Արդյունքների հիման վրա անցկացվել են բազմաթիվ սեմինարներ ու թրեյնինգներ՝ կազմակերպված «Փսիխեա» ասոցիացիայի, Լոնդոնի Թախթայան վարժարանի, հոգեկան առողջության հիմնադրամի և մի շարք այլ հեղինակավոր կազմակերպությունների կողմից, շուրջ 10 տարի ԵՊՀ հոգեբանության բաժնի մագիստրատուրայում անց է կացվել ներկայացված հետազոտության հիման վրա մշակված դասընթաց, ստեղծվել է հոգեամոքիչ ձայնասկավառակ, հրատարակվել է երկու մենագրություն, մոտ 50 հոդված, հետազոտության գաղափարները բազմիցս ներկայացվել են ՋԼՄ-ներով:

Կոնցեպտուալ դրույթները

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է մեկ ամբողջական հայեցակարգ՝ իր մեթոդոլոգիայով, տեսական հիմնադրույթներով և կոնկրետ վարկածային դրույթներով:

1. Մեթոդաբանական հիմքը՝ ֆունկցիոնալ և խնդրային մոտեցումներն են, ըստ որոնց յուրաքանչյուր գործընթաց, այդ թվում նաև օնտոգենեզն, ունի ֆունկցիոնալ նշանակություն, իրականացնում է որոշակի ֆունկցիա, լուծում է մի ինչ-որ խնդիր:
2. Յուրաքանչյուր տարիքային փուլ ուղղված է մի ինչ-որ կոնկրետ զարգացման հիմնախնդրի լուծմանը, իսկ ի հայտ եկող նորագոյացությունները քայլեր են այդ հիմնախնդրի լուծման ճանապարհին: Գոյություն ունեն չորս տարիքային հիմնախնդիրներ և, համապատասխանաբար՝ դրանց լուծմանն ուղղված չորս զարգացման փուլեր. դրանք են՝ տեսակային ակտիվության սուբյեկտի ձևավորման փուլ (ներարգանդային շրջանից մինչ 7-8 տարեկանը), սեռային ակտիվության սուբյեկտի ձևավորման փուլ, (8-20 տարեկանը), սոցիալական ակտիվության սուբյեկտի ձևավորման փուլ (20-45) և ինքնաիրացման/ինքնասպառման փուլը (45-ից մինչև կյանքի վերջը): Օրինակ՝ կյանքի առաջին փուլի հիմնական նորագոյացությունները տեսակային հատկություններ են.

Էմբրիոգենեզի ընթացքում կրկնվում է ֆիլոգենեզը՝ շերեփուկից մարդն է ձևավորվում, ծննդից հետո ճանաչում է իր տեսակը, ձևավորվում է խոսքը, ուղղահայաց քայլվածքը, մտածողությունը, դաստիարակությունն ուղղված է տեսակային վարքի ձևերի ուսուցմանը՝ ինչպես ուտել, հագնել: Մարդու օնոտգենեզի կարևորագույն բնութագրերից է այն, որ յուրաքանչյուր տարիքային ցիկլում զարգացումը տեղի է ունենում երկու հիմնական ձևերով՝ ինքնաբուխ և գիտակցված: Ինքնաբուխ զարգացումը տեղի է ունենում հիմնականում ժառանգական և հասարակության մշակած ծրագրերով: Այս շրջանում անձը հստակորեն չի գիտակցում զարգացման հիմնախնդիրը, այն իր համար հրատապ չի համարում, չի ընկալում իրեն որպես տվյալ հիմնախնդիրը կրող: Սակայն տարիքային փուլի որոշակի շրջանում անձն սկսում է գիտակցել զարգացման հիմնախնդիրը, իրեն՝ որպես տվյալ հիմնախնդիրը կրող, իսկ զարգացման գործընթացը գիտակցված, նպատակաուղղված բնույթ է ստանում: Օնոտգենեզի յուրաքանչյուր փուլում կարելի է հստակորեն ուրվագծել այն շրջանը, երբ տեղի է ունենում անցումն ինքնաբուխ զարգացումից գիտակցված, նպատակաուղղված զարգացմանը: Ըստ մեր հայեցակարգի, այդ շրջաններում տեղի են ունենում ինքնագիտակցության օնոտգենետիկ վերակառուցումներ, ինչով էլ պայմանավորված են անձի զարգացման ճգնաժամերը՝ 3, 12-15, 25-33 և 55-65 տարիքային շրջաններում: Սրանք ախտանշաններով տարբերվում են մյուս ճգնաժամերից: Օրինակ՝ մինչև 12-15 տարեկանը սեռական զարգացումը տեղի է ունենում ժառանգական և սոցիալական ծրագրերով՝ երեխային սեռին համապատասխան անուն են տալիս, շորեր են հագցնում և այլն, սակայն երեխան իրեն չի զգում, չի գիտակցում որպես սեռային ակտիվության սուբյեկտ, նա գիտի իր սեռը, բայց չկա ինգնագիտակցության աֆեկտիվ բաղադրիչը, որն ի հայտ է գալիս դեռահասության շրջանում սեռական պահանջմունքի, զգացողությունների, զգացմունքների և այլնի ազդեցությամբ:

3. Բացի ինքնագիտակցության վերակառուցումներով պայմանավորված ճգնաժամերից, գոյություն ունեն օնտոգենետիկ այլ սթրեսներ և ճգնաժամեր: Դրանցից այսօր վստահորեն կարելի է առանձնացնել զարգացման մի փուլից մյուսին անցման շրջանները: Ըստ մեր պատկերացումների (նաև վերը ներկայացված տարիքային պարբերացման տրամաբանության), տարիքային անցումներով են պայմանավորված 7-9, 18-22, 35-45 տարիքային շրջանների ճգնաժամերը:
4. Երեք տարեկանի ճգնաժամը պայմանավորված է տեսակային ինքնագիտակցության արթնացմամբ, դեռահասության ճգնաժամը սեռային ինքնագիտակցության արթնացմամբ, 25-33 տարեկանի ճգնաժամը պայմանավորված է սեփական ես-ի՝ որպես սոցիալական ակտիվության սուբյեկտի գիտակցմամբ և 55-65 տարիքային շրջանի ճգնաժամը պայմանավորված է սեփական ես-ը որպես մահկանացու գիտակցելով:
5. Ինքնագիտակցության վերակառուցումներով պայմանավորված ճգնաժամերի ընթացքում ձևավորվում է նոր ես կոնցեպցիա՝ իր կոգնիտիվ և աֆեկտիվ բաղադրիչներով, ինքնագնահատական, վերաբերմունք սեփական ես-ի նկատմամբ: Մինևույն ժամանակ այս շրջաններում մարդն սկսում է գիտակցել այն հիմնախնդիրը, որի լուծմանն է ուղղված տարիքային զարգացման գործընթացը, ձևավորվում է հիմնախնդրի լուծման կոնցեպցիան:
6. Հիմնական տարբերակիչ ախտանշանը, որով այս ճգնաժամերը տարբերվում են տարիքային անցումներով պայմանավորված ճգնաժամերից, ինչպես նաև հոգեկան զանազան խանգարումներից ճգնաժամային տարիքներում ի հայտ եկող գերզգայունությունն ու գերկենտրոնացումն է սեփական ես-ի՝ որպես որոշակի ակտիվության սուբյեկտի վրա (ես՝ որպես լիարժեք մարդ, որպես տղամարդ/կին և այլն):

Էմպիրիկ նյութը

Վարկածի հիմնավորմանն ուղղված մեր փաստական նյութը կարելի է բաժանել երեք խմբի՝ բնական փաստեր, մեր կողմից իրականացված կամ կազմակերպված հետազոտությունների արդյունքում ստացված փաստեր և այլ հեղինակների հետազոտություններից վերցված փաստեր: Բնական են այն փաստերը, որոնք անկախ են մեր հետազոտություններից, բացարձակ սուբյեկտիվություն չեն պարունակում, ինչի շնորհիվ էլ ունեն ապացուցողական խիստ բարձր մակարդակ: Խոսքը հոգեախտաբանական, էթնոգրաֆիական կամ առօրյա կյանքում հանդիպող բոլորիս ծանոթ փաստերի մասին է: Մենք հատուկ չենք անդրադառնա այլ հեղինակների և առօրյա կյանքում հանդիպող մեր վարկածը հաստատող փաստերին (դրանք բազմաթիվ են և ցրված են ամբողջ ատենախոսության մեջ): Այստեղ ուղղակի ներկայացնենք օրինակներ, որ հասկանալի լինի թե ինչի մասին է խոսքը: Ասենք, ըստ Ջ. Սթոուտի հետազոտությունների՝ երեք տարեկաններին բնորոշ է այն, որ իրենց երազի հերոսին զգում են որպես կենդանի կամ ըստ Ռ. Բուտլերի հետազոտությունների, 55-ից հետո մահվան հիմնախնդիրն է դառնում առաջատար: Առօրյա կյանքի փաստերից է, օրինակ, թոշակի տարիքը, որ ընդունված է մեր հասարակության մեջ և այլն:

Մեր կարծիքով, մեր վարկածների ամենահիմնավոր ապացույցը տալիս են հոգեախտաբանական փաստերը: Պաթոլոգիան նորմայի յուրահատուկ «ծաղրանկարն է», որտեղ ընդգծված ձևով ներկայացված են մարդու հիմնախնդիրները, անհատական առանձնահատկությունները. ասենք, մեծամտությունը վերաճում է մեծամոլական գառանցանքի: Հիվանդագին շեղումները ցույց են տալիս, թե ինչ խնդիրներ են մարդու համար հրատապ, ինչպես պիտի նորմայում լուծվեին այդ խնդիրները. ասենք, եթե 3-4 տարեկանից երեխան սկսում է հայտարարել թե ինքը մարդ չէ, կատու է, իսկ 8-10 տարեկանից հետո այլևս այսպիսի գառանցանք չի հանդիպում, ուրեմն կարելի է ենթադրել, որ 3 տարեկանում

արթնացած ինքնագիտակցությունը տեսակային բնույթ ունի: Նշենք նաև, որ զարգացման ճգնաժամերը միջանկյալ դիրք են գրավում նորմայի և պաթոլոգիայի միջև. ճգնաժամերի խորացումը ըստ բազմաթիվ հեղինակների, հանգեցնում է հոգեկան խանգարումների, հետևաբար, կարելի է ենթադրել, որ հոգեախտաբանության մեջ հաճախ հանգուցալուծվում է, հստակ ի հայտ է գալիս այն կոնֆլիկտը, որ ծնում է ճգնաժամը: Հատկապես հատուկ հետաքրքրություն է ներկայացնում այսպես կոչված «հիվանդագին կերպարանափոխությունների համախտանիշը»: Հոգեբանական տեսանկյունից նման խանգարումների ժամանակ մարդը մի կողմից մերժում է իր իրական ես-ը, մյուս կողմից՝ իր ես-ի սխալ կատեգորիզացիա է կատարում: Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ հիվանդագին կերպարանափոխություններն իրենց հստակ տարիքային առանձնահատկություններն ունեն, այսինքն, տարբեր տարիքներում հիվանդները որոշակի տիպի կերպարների մեջ են մտնում՝ երեք տարեկանից մինչև դեռահասություն կերպարանափոխությունները տեսակային բնույթ են կրում, այսինքն երեխան իրեն համարում է կենդանի, բույս, դեռահասության և պատանեկության շրջանում՝ սեռային, իսկ 25 տարեկանից հետո՝ սոցիալական-դերային. հիվանդը մտնում է հանճարեղ գիտնականի, գորավարի և այլ կերպարների մեջ: Ըստ որում, յուրաքանչյուր տարիքին բնորոշ կերպարանափոխությունները տեղի են ունենում անձի զարգացման համապատասխան ճգնաժամային շրջաններում կամ դրանցից հետո, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ նման խանգարումները կապված են ինքնագիտակցության վերակառուցման գործընթացի բացասական զարգացումների հետ: Բացի հիվանդագին կերպարանափոխություններից, ինքնագիտակցության վերակառուցումների ու դրանց առանձնահատկությունների մասին են վկայում բազմաթիվ այլ ախտանիշներ՝ օրինակ, ասենք, տեսակային հատկություններից (խոսքից, ուղղահայաց քայլվածքից և այլն) հրաժարումը և կենդանական վարքի ձևերի (չորեքթաթ քայլվածք, մոնչոցներ և այլն) նմանակումը նախադարձական տարիքում, դիսմորֆոֆոբիայի, նյարդային անորեքսիայի

դրսևորումները՝ դեռահասության տարիքում, մահվան վախի հետ կապված հիպոխոնդրիան, անբնությունը՝ ուշ տարիքում:

Բնական մյուս փաստերը վերաբերում են տարիքային էթնոգրաֆիային: Ազգագրական փաստերով մենք ցույց ենք տալիս, որ տարբեր ժողովուրդների (ավստրալական ցեղերի, թայլանդցիների, օսերի, էթովպացիների և այլն) տարիքային պատկերացումներում ճգնաժամային շրջաններն ընկալվում են որպես հին անձնավորության «մահվան» և նորի «ծնունդի» շրջաններ, իսկ այդ «ծնունդների» բովանդակությունը անձի տեսակային (3 տարեկան), սեռային (14-15 տարեկան), սոցիալական-դերային (25-30 տարեկան) և մահկանացուի (60 տարեկան) ես-երն են: Ժամանակի սղության պատճառով այստեղ ուղղակի 1-2 քիչ ծանոթ փաստեր նշենք. օրինակ, որոշ ժողովուրդներ երեխային անուն են տալիս 3 տարեկանի շրջանում, հատուկ ծեսերով նրան ընդունում են որպես մարդ, այդ տարիքից սկսած մահանալու դեպքում երեխային թաղում են ընդհանուր գերեզմանում: Որոշ ժողովուրդների շրջանում 25-30 տարիքային շրջանում, նոր անուն է տրվում մարդուն՝ մասնագիտական հատկությունների հիման վրա: Օսերի մեջ այն կարծիքը կա, որ 60 տարեկանից մարդը մահանում է այս աշխարհի համար և ծնվում նախնիների աշխարհի համար, այս պատկերացումն այսօր իր արտահայտությունն է գտել, ասենք, թոշակային տարիքի որոշման հարցում:

Մեր կողմից իրականացվել և կազմակերպվել են հետազոտություններ իրավիճակային վերլուծության, դեպքերի վերլուծության, կենսագրական, կլինիկական զրույցի, հարցման, թեստերի և պրոյեկտիվ մեթոդներով: Համառոտ ներկայացնենք այդ հետազոտությունները.

Երեք տարեկանի ճգնաժամ

Կիրառվել է իրավիճակային վերլուծության մեթոդը երկու տարբերակով՝ բնական իրավիճակային վերլուծություն (1995 թ.) և մոդելավորված իրավիճակային վերլուծություն (1998 թ.): Առաջին դեպքում հետազոտվել է երկու երեխա (3,2 և 3,5

տարեկան), դիտումն իրականացրել են երեխաների մայրերը. նպատակն է եղել պարզել, թե ինչ իրավիճակներում են երեխաները դրսևորում ճգնաժամի ախտանշաններ: Նույն նպատակով նաև մոդելավորված իրավիճակներն են ներկայացվել 3 տարեկան երեխաներին՝ խնդրելով որպեսզի նրանք մեկնաբանեն հերոսների վարքը (մասնակցել է 32 երեխա): ճգնաժամային ախտանշանների դրսևորման իրավիճակների վերլուծությունը հնարավորություն տվեց առանձնացնել երկու տիպի իրադրություններ, որոնցում դրսևորվում են ճգնաժամային ախտանշանները. ա/ երբ երեխան փորձում է որոշակի գործունեություն ծավալել՝ դրսևորելու իր լիարժեք մարդ լինելու հանգամանքը (ասենք, նմանակում է ծնողի վարքը), սակայն դրա համար պատժվում է, քննադատվում կամ ուղղակի նրան թույլ չեն տալիս անել դա, բ/ երբ մեծերը վերաբերվում են երեխային այնպես, որ նվաստացնում են նրա լիարժեք մարդ լինելու հանգամանքը (ասենք, փորձում են ստիպելով կերակրել երեխային): Բնական և մոդելավորված իրավիճակներում ճգնաժամային ախտանշանների դրսևորման և այդ դրսևորումների՝ երեխաների կողմից մեկնաբանությունների վերլուծությունը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ երեք տարեկանի ճգնաժամի ախտանշանների հիմքում ընկած է երեխաների ձգտումն ինքնահաստատվելու որպես լիարժեք մարդ՝ այնպիսին, ինչպիսին մեծերը: Ախտանշաններն ի հայտ են գալիս ինքնահաստատման գործընթացի ֆրուստրացիայի հետևանքով: Ըստ որում, այս հետազոտության շնորհիվ պարզվեց, որ երբ երեխաները հայտարարում են, թե «մեծ են» ուղղակի նկատի ունեն, որ լիարժեք մարդ են:

Դեռահասության ճգնաժամ

Դեռահասության տարիքի ճգնաժամին մենք հարաբերականորեն քիչ ենք անդրադարձել, քանի որ այս տարիքը լավ ուսումնասիրված է, հայտնի է, որ այս շրջանում արթնանում է սեռային ինքնագիտակցությունը: Մեր նորամուծությունն այն է, որ ճգնաժամը պայմանավորել ենք սեռային ինքնագիտակցության ձևավորման հետ: Մենք հետազոտել ենք այն, ինչ հետազոտված չէր. այն է՝ դաստիարակության

ռճերի և դեռահասության ճգնաժամի ընթացքի կապը, որի արդյունքում պարզվել է, որ ավտորիտար ոճն ամենևին չի սրում ճգնաժամը, ինչպես ընդունված էր կարծել նախկինում: Ճգնաժամը սրվում է հակասական դաստիարակության և սիմբիոտիկ հարաբերությունների արդյունքում:

25-33 տարեկանի ճգնաժամ

Այս ճգնաժամը հետազոտվել է դեպքերի վերլուծության, կենսագրական, կլինիկական գրույցի և հարցման մեթոդներով:

Դեպքերի վերլուծության արդյունքում (վերլուծության է ենթարկվել 3 դեպք) պարզվել է, որ 25-33 տարիքային շրջանում անձը գերզգայուն է դառնում իր սոցիալական ես-ի նկատմամբ: Նրան տանջում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ Ճի՞շտ եմ ընտրել արդյոք իմ կյանքի ուղին, ի՞նչ եմ ինձնից ներկայացնում որպես տվյալ ոլորտի մասնագետ, ինչպե՞ս գտնել կյանքի ընկերոջ, ընտանիքում ի՞նչ դիրք եմ գրավում և այլն: Ճգնաժամային այս շրջանին բնորոշ է անինքնավստահությունը սեփական սոցիալական կոմպետենտության նկատմամբ, սեփական ես-ի թերագնահատումը, խիստ զգայունությունն ընտանեկան և աշխատանքային սթրեսների նկատմամբ, ընտանիք ստեղծելու, երեխա ունենալու, աշխատանքային ոլորտում ինքնահաստատվելու բուռն ձգտումը և այլն: Որպես այս հետազոտության եզրակացություն կարելի է նշել այն, որ 25-33 տարիքային շրջանում լուրջ խմորումներ են տեղի ունենում անձի սոցիալական ես-ի ոլորտում, ինչի արդյունքում փոխվում են սեփական ես-ի գնահատման չափանիշները, ես-կոնցեպցիան ընդհանրապես: Ճգնաժամի սրումը պայմանավորված է լինում սեփական կյանքի ուղին գտնելու, աշխատանքային ոլորտում ինքնահաստատվելու, ընտանիք կազմելու և նմանատիպ խնդիրների հաղթահարման դժվարություններով:

Մեր կողմից կազմակերպվել է 25-33 տարիքային ճգնաժամի ևս մեկ հետազոտություն՝ կենսագրական մեթոդով: Վերլուծության են ենթարկվել նշանավոր մարդկանց (Հիսուս Քրիստոս, Բուդդա, Ֆրանցիսկ Ասիզացի, Լև Տոլստոյ և ուրիշներ)

կենսագրությունները (ինքնակենսագրությունները, նրանց մասին հուշերը)՝ պարզելու 25–33 տարիքային շրջանում նրանց մեջ ճգնաժամին բնորոշ ախտանշանների առկայությունը, այդ ախտանշանների առանձնահատկությունները և կապը ինքնագիտակցության վերակառուցման հետ: Ներկայացված կենսագրություններում հստակորեն ուրվագծվում է նույն տարիքային շրջանում (25–32 տարեկանում) ակտուալացող հետևյալ խնդիրները՝ սեփական ես–ի որոնումներ՝ կյանքում իր տեղը գտնելու առնչությամբ, մտորումներ կյանքի իմաստի շուրջ, արժեքների վերակառուցում, հրաժարում նախկին կյանքից և նոր ուղու ընտրություն (կամ ընտրված ուղիով գնալու վերջնական որոշում), հաճախ է հանդիպում մարդկանցից մեկուսանալու սցենարը: Կենսագրություններից հստակորեն երևում են «արթնացող» ինքնագիտակցության առանձնահատկությունները, այն է՝ սեփական ես–ի որպես հասարակական ակտիվության սուբյեկտի գիտակցումը: Այս տարիքում Հիսուսն անապատային փորձություններից հետո որոշում է նվիրել իր կյանքն Աստծուն և մարդկության փրկությանը, Զրադաշտը, Բուդդան, Կոնֆուցիոսը հրաժարվում են իրենց նախկին կյանքից, մեկուսանալով ստեղծում են իրենց աշխարհայացքային տեսությունները, որոնցում ըստ էության տրվում են այս տարիքային հիմնախնդրի լուծման մոդելներ՝ այն է, թե ինչպես պիտի ապրի մարդն այս կյանքում:

Կլինիկական գրույցը մենք իրականացրել ենք «Մթրես» հոգեկան առողջության կենտրոնում և մասնավոր պրակտիկայի ընթացքում (հետազոտվել է երկու կին, երկու տղամարդ): 25-33 տարիքային շրջանի ճգնաժամի մեջ հայտնված անձանց մեջ գերակշռում են կոնֆլիկտայնությունն ու դեպրեսիվ վիճակները, սեփական ես–ի նկատմամբ զգայունության սրվածությունը՝ կապված սոցիալական դիրքի հետ, անինքնավստահությունը, ինքնագնահատականի անկումը: Բոլոր այցելուների մեջ ակնհայտ էր սեփական ես–ի նկատմամբ զգայունության սրվածությունը՝ կապված սոցիալական դիրքի հետ «Արդեն 27 եմ ու դեռ ամուսնացած չեմ» (Քրիստինա, 27 տարեկան), «Կինս բավարար հարգանք չի դրսևորում» (Արտյոմ, 32 տարեկան), «Ալեքսանդր Մակեդոնացին 25 տարեկանում աշխարհն էր գրավել, իսկ ես արդեն 30

եմ ու դեռ գլուխս չեմ կարողանում պահել. նույնիսկ չգիտեմ, թե այս կյանքում որն է իմ տեղը» (Արմեն, 30 տարեկան) և այլն: Իրադարձությունները, որոնք սրել էին ճգնաժամը կապված էին աշխատանքային անհաջողությունների (1 տղամարդու մոտ), ընտանեկան հարաբերությունների սրման (մեկ տղամարդ և մեկ կին) և ընտանիք կազմելու հետ կապված անհաջողության հետ (փեսացուից բաժանում):

Մեր կողմից 2002 թ. կազմակերպվել է 25–33 տարիքային շրջանում ինքնագիտակցության և անձնավորության մոտիվացիոն համակարգի առանձնահատկություններին նվիրված հետազոտություն հարցման մեթոդով: Հետազոտության նպատակն էր պարզել, թե որ տարիքային շրջանում են ակտուալանում և հստակորեն գիտակցվում ընտանիք կազմելու, ծնող դառնալու, աշխատանքային առումով կյանքում սեփական տեղը գտնելու և ինքնահաստատվելու պահանջմունքները (հետազոտության են ենթարկվել 30–ից բարձր տարիք ունեցող, սոցիալական տարբեր խավերից 102 մարդ՝ 38 կին և 64 տղամարդ): Արդյունքները ցույց տվեցին, որ մեծամասնությունը (60 տոկոսը) սոցիալական ակտիվության հետ կապված պրոբլեմատիկան, պահանջմունքները 25-33 տարեկանում է հստակորեն գիտակցել:

55-65 տարիքային շրջանի ճգնաժամ

Կիրառվել է դեպքերի վերլուծության, զրույցի, թեստերի և պրոյեկտիվ մեթոդներ:

Վերլուծության է ենթարկվել երկու դեպք «Զարգացման ճգնաժամ» ախտորոշմամբ: Հետազոտությունը ցույց տվեց, որ 55-65 տարիքային շրջանի ճգնաժամը լիովին պայմանավորված է սեփական ես-ը որպես մահկանացու ընկալելով և դրա հետևանքով առաջ եկած մահվան տազնապներով: Հենց նշված հանգամանքներով են պայմանավորված հիպոխոնդրիկ տազնապները, դեպրեսիան, անքնությունը և այս տարիքին բնորոշ այլ ախտանշաններ (ասենք, մտորումներն ապրած կյանքի ճիշտ լինելու, մահվան, հանդերձյալ կյանքի շուրջ): Ճգնաժամի

սրմանը սովորաբար նպաստում են առողջության ոլորտում ի հայտ եկած խնդիրները, տարեկիցների մահը:

Կլինիկական գրույցը անց է կացվել 55-65 տարեկան չորս այցելուի հետ: Նպատակն էր՝ հետազոտել ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունները, իրադարձությունները, որոնց ազդեցությամբ ի հայտ են եկել կամ սրվել են ախտանշանները, բնավորության առանձնահատկությունների դերը ճգնաժամի սրման գործում:

Հետազոտվողները հիմնականում բողոքում էին դեպրեսիայից և տագնապային վիճակներից, որոնք հաճախ ուղեկցվում էին մարմնական տհաճ զգացողություններով (սրտխփոց, ցավեր սրտի շրջանում, ոտքերի դող, շշմածության զգացողություն և այլն): Ըստ որում, հիմնականում հստակ գիտակցվում էր, որ և՛ տագնապները, և՛ դեպրեսիան կապված են մահվան հիմնախնդրի հետ: Այս ապրումների՝ տարիքային ճգնաժամով պայմանավորված լինելու հանգամանքը գիտակցելը կտրուկ փոխում էր այցելուի հոգեվիճակը, մեղմացնում ախտանշանները:

Մեր կողմից 2003-ին կազմակերպվել է համալիր հետազոտություն՝ նվիրված 55–65 տարիքային շրջանի ճգնաժամին: Կիրառվել են գրույցի, թեստերի և պրոյեկտիվ մեթոդներ: Հետազոտության ընթացքում համեմատական վերլուծության էին ենթարկվել երկու տարիքային խմբերի՝ 25–55 և 55–65 տարեկան, մարդկանց վերաբերմունքը և պատկերացումները մահվան և սեփական ես–ի՛նքայես մահկանացուի վերաբերյալ: Հետազոտությանը մասնակցել էր 64 մարդ: 55–65 տարիքային շրջանում մահվան կոնցեպցիան որակական փոփոխություններ է կրում, որոնք բերում են սեփական անձի մասին մարդու պատկերացումների փոփոխմանը: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ՝ 55–65 տարիքային շրջանում մահը և սեփական ես–ը՛նքայես մահկանացու, ավելի իրատեսական են դառնում, ինչի հետևանքով աճում է տագնապը մահվան և զանազան հիվանդությունների առնչությամբ:

Եվս մեկ հետազոտություն է իրականացվել՝ պարզելու, թե տարբեր տարիքներում ներոտիկ խանգարումներ առաջ բերած սթրեսներն ինչ բնույթի են, ինչը ցույց կտար, թե որ տարիքում, ինչ հիմնախնդիրներ են հրատապ և, ըստ այդմ էլ, թե ինչպիսի ակտիվության սուբյեկտ է անձն իրեն գիտակցում տվյալ տարիքային շրջանում: Արդյունքները ցույց տվեցին, որ սիրային և սեռային ինքնահաստատման հետ կապված պրոբլեմներն ավելի հրատապ են 14-25 տարեկանում, ընտանեկան անախորժությունները, աշխատանքային պրոբլեմները՝ 25-55 տարեկանում, և, վերջապես, առողջության և մահվան հետ կապված պրոբլեմներն ավելի հրատապ են 60 տարեկանի շրջակայքում: Նույն տիպի հետազոտություն ավելի ուշ իրականացվել է ռուս գիտնական Յու. Վազինի կողմից, և գրեթե նույն արդյունքներն են ստացվել:

Ամփոփելով՝ նշենք, որ ներկայացված էմպիրիկ նյութը լիովին հաստատում է մեր վարկածային դրույթները, որ երեք տարեկանի շրջանում արթնանում է տեսակային ինքնագիտակցությունը և ճգնաժամը հենց դրանով է պայմանավորված, որ դեռահասության ճգնաժամի ընթացքում արթնանում է սեռային ինքնագիտակցությունը, և հենց դրանով է պայմանավորված դեռահասության ճգնաժամը: 25-33 տարեկանում արթնանում է սոցիալական ես-ը և ճգնաժամը հենց դրանով է պայմանավորված և, վերջապես, 55-65 տարեկանում սեփական ես-ը գիտակցվում է որպես մահկանացու և ճգնաժամը հենց դրանով է պայմանավորված: Հետազոտության եզրակացությունները դրված են սեղաններին, թույլ տվեք դրանք չընթերցել:

Հավելված 6

Ընդդիմախոսի կարծիքի գնահատման չափանիշները

1. Ընդդիմախոսը տվյալ թեմայի հետ առնչվող գիտական խնդիրներ է հետազոտել, ծանոթ է տվյալ ոլորտի վերջին նվաճումներին, ի գորու է գնահատել տվյալ թեմային նվիրված հետազոտությունը:
2. Կարծիքը հուզական չէ, չի արտահայտում թշնամական վերաբերմունք կամ գիտականորեն չհիմնավորված գովերգումներ հայցորդի և նրա աշխատանքի վերաբերյալ:
3. Ընդդիմախոսը ատենախոսության դրական և բացասական գնահատականները փաստերով և փաստարկներով հիմնավորել է:
4. Ընդդիմախոսը հավաստում է, որ աշխատանքն ինքնուրույն է, գրագողություններ չկան:
5. Կարծիքի մեջ առկա են ատենախոսության յուրաքանչյուր գլխի վերլուծությունն ու գնահատականը:
6. Ընդդիմախոսն օբյեկտիվորեն է գնահատել ատենախոսությունը, միակողմանի, ընտրողաբար բացասական կամ դրական գնահատականներ չի տալիս. կարողացել է ներկայացնել աշխատանքի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերը:
7. Ընդդիմախոսի դիտողությունները ձևական չեն, ներկայացված են աշխատանքի էական և ոչ թե երկրորդական թերությունները:
8. Դիտողությունները կոնկրետ են, ձևակերպված են հստակ, հասկանալի, գիտական ոճով:
9. Կա՞ արդյոք տպավորություն, որ ընդդիմախոսը լավ չի պատկերացնում հիմնախնդիրը, չի խորացել աշխատանքի էության մեջ:
10. Կա՞ արդյոք տպավորություն, որ ընդդիմախոսը հովանավորում է հայցորդին:

Սամվել Սուրենի Խուղոյան

Հոգեբանական գիտությունների դոկտոր, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Չարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեթերապևտ, հիպնոթերապևտ: Հեղինակ է Չարգացման հոգեբանության, հոգեթերապիայի, հոգեբանության մեթոդաբանության և այլ հարցերի նվիրված շուրջ 90 գիտական աշխատության և 3 մենագրության:

Գայանե Կառլոսի Գրիգորյան

Քիմիական գիտությունների թեկնածու, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ: Հեղինակ է 14 գիտական հոդվածների և 11 միջազգային և հանրապետական կոնֆերանսների թեզիսների:
